

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՁԵՎԱՉԱՓԵՐ, ԳՈՐԾԻՔՆԵՐ

# ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra
Federal Department of Foreign Affairs FDFA
**Swiss Agency for Development and Cooperation SDC**

ԱՐՏԱԿԱՐԳ ԱԼԻՔ
EMERGENCY CHANNEL

# ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

*Մեթոդաբանություն, ձևաչափեր, գործիքներ*

ԵՐԵՎԱՆ 2014

Աղետների ռիսկի նվազեցման և աղետներին դիմակայելու մշակույթի ձևավորումն սկսվում է իրազեկությունից՝ վտանգների, դրանց ռիսկերի, խոցելիության ու կարողությունների իմացություն–գնահատում–բացահայտումից, որին հաջորդում են առկա գիտելիքների վրա հիմնված աղետների ռիսկի կառավարման հիմնավորված քայլերը:

Ինչպես են գնահատվում աղետների ռիսկերը, խոցելիությունն այդ աղետներից, դրանք դիմագրավելու կարողությունները, ինչ մեթոդներով, ինչ ձևաչափերով, ինչ գործիքներ են կիրառվում, որ կազմակերպությունն ինչ քաղաքականություն է մշակել, որն է միջազգային առաջավոր փորձը, ինչպես կարելի է այն առավել արդյունավետ տեղայնացնել, ինչպես կարելի է մշակել համայնքային մակարդակում աղետների ռիսկի կառավարման միասնական ու բոլորի համար ընդունելի մեթոդաբանություն՝ հաշվի առնելով ոլորտի միջազգային վերջին զարգացումներն ու Հյոգո երկուսին ներկայացվող առաջարկների քննարկումները, ինչպես ստեղծել այն բարեբեր դաշտը, որ համայնքներում մարդկանց հետաքրքրի, շահագրգռի, ներգրավի, փոփոխություն առաջացնի նրանց մտքերում ու վարքագծում, մղի գործողության, որ մարդիկ իրենց համար բացահայտեն, թե իրենք ինչ պիտի իմանան իրենց կյանքը բարելավելու և առավել անվտանգ դարձնելու համար: Այս ու բազմաթիվ այլ հարցերի պատասխանը կգտնեք Տեղական մակարդակում աղետների ռիսկի կառավարման սույն ուղեցույցում (Լրացուցիչ տեղեկատվության ու գիտելիքի աղբյուր կարող է ծառայել «Որ փորձությունը փորձանք չդառնա» ուսումնական հանրամատչելի ձեռնարկը):

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

***… մինչև Սպիտակի երկրաշարժ***

Մարդկության պատմությունն ասես աղետների դեմ պայքարի տարեգրություն լինի: Աղետների դեմ պայքար հասկացողությունը հասավ մինչև 20–րդ դարի վերջ: Տեղեկատվության, գիտելիքի և հմտությունների պակասը՝ համեմված կրոնական նախապաշարումներով, մարդկանց մղում էր դատապարտվածության, ու բնության՝ աղետի վերածվող երևույթները դիտարկվում էին որպես Աստծո պատիժ:

20–րդ դարի վերջում միայն Աշխարհը սկսեց համախմբվել՝ աղետների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար: Եվ այդ համախմբման, աղետներին արագ ու արդյունավետ արձագանքման, մարդասիրական աջակցության համակարգման և միջազգային բազմաթիվ զարգացումների հիմնական ազդակը դարձավ 1988 թվականի Սպիտակի երկրաշարժը:

Խորհրդային Միությունը, մի հսկայական պետություն՝ իր քաղպաշտպանական հզոր համակարգով, անզոր գտնվեց բնության արհավիրքի ու դրա աղետալի հետևանքների դեմ: Չկար աղետների ու դրանց հետևանքների կառավարման համակարգ, չկար պետական պլան ու ծրագիր: Եղածն ուղղված էր հակառակորդի կողմից միջուկային հարձակման դեպքում բնակչության պաշտպանությանը և կար միայն թղթի վրա:

Չկային փրկարարներ, փրկարարական տեխնիկա ու սարքավորումներ: Ամենաբարձր ղեկավարներից սկսած մինչև տրակտորիստ, պահակ կամ դպրոցի աշակերտ ու մանկապարտեզի սան. բոլորին միավորում էր անիրազեկությունը՝ հնարավոր աղետների, դրանց հետևանքների, աղետների դեմ պայքարի, որոնողափրկարարական, վթարավերականգնողական և այլ աշխատանքների մասին:

Ճնշող մեծամասնությունը, նույնիսկ բժիշկներն անգամ, առաջին օգնություն ցուցաբերել չգիտեին: Իրական պատկերը ճշտելու՝ ավերածություններ, զոհեր, վիրավորներ, օրհասի մեջ գտնվող մարդկանց արագ ու արդյունավետ օգնություն կազմակերպելու փոխարեն, խորհրդային ղեկավարները, ինչպես միշտ, փորձում էին միջազգային հանրությունից քողարկել ճշմարտությունը: Դրա պատճառով երրորդ օրից միայն փրկարարներ հայտնվեցին աղետի գոտում: 7–րդ օրից հետո միայն Ռիժկովի ղեկավարած կառավարական հանձնաժողովին հասու դարձավ, որ հիսունից ավելի ավերված գյուղեր կան՝ բազմաթիվ զոհերով ու տուժածներով: Հիմնական ուշադրությունն ուղղված էր դեպի քաղաքները, իսկ գյուղական համայնքներն ամենավերջում, ինչպես ընդունված էր՝ երբ ձեռքը հասնի:

***Սպիտակի երկրաշարժից հետո***
***1995 թվականի Կոբեից՝ 2005 թվականի Կոբե(Հյոգո)***
***Արձագանքման մշակույթից դեպի ռիսկի նվազեցում***

Սպիտակի երկրաշարժն աշխարհի ամենաուսումնասիրված աղետներից է՝ համարյա բոլոր տեսանկյուններով: Եվ Սպիտակի դասերը պատճառ հանդիսացան, որ երկիր մոլորակն աղետների դեմ պայքարում ավելի համախմբվի, կառույցներ ստեղծի, քաղաքականություն ու ծրագիր մշակի: 1990 թվականից ՄԱԿ–ի անդամ երկրները սկսեցին կյանքի կոչել «Բնական աղետների նվազեցման միջազգային տասնամյակի՝ 1990–2000թթ. միջազգային գործողությունների ծրագիրը»: Հայաստանն այդ ծրագրին ավելի ուշ միացավ: Մեզանում մանրամասն վերլուծելով Սպիտակի երկրաշարժի դասերը, հանգեցին այն եզրակացությանը, որ Հայաստանում երկրաշարժեր միշտ եղել են ու էլի կլինեն, ու բացի սեյսմիկ վտանգից, մեզ պատուհասել ու սպառնում են նաև այլ աղետներ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել համակարգ, որը աղետների կանխատեսման, դրանց դեմ պայքարի քաղաքականություն ու ծրագրեր կմշակի և կյանքի կկոչի դրանք: 1991 թվականին ստեղծվեցին Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունն ու Արտակարգ իրավիճակների վարչությունը: Ընդ որում՝ վարչության պետնախարարը կառավարության անդամ էր:

Հրադադարի հաստատումից հետո միայն Արտակարգ իրավիճակների վարչությունը քաղպաշտպանական խնդիրներից սկսեց հայացքն ուղղել դեպի արտակարգ իրավիճակները և ինտեգրվել միջազգային զարգացումներում: Իսկ դրանք սրընթաց էին զարգանում՝ աղետների արձագանքման քաղաքականությունից անցում էր կատարվում դեպի աղետների ռիսկի նվազեցում՝ արձագանքման մշակույթից դեպի ռիսկի նվազեցման մշակույթ:

1994 թվականին ՄԱԿ–ի գլխավոր ասամբլեան հաստատեց «Առավել անվտանգ աշխարհի Յոկոհամայի ռազմավարությունը», որն աղետների ու դրանց հետևանք–ռիսկերի նվազեցման անկյունաքարային ուղեցույց էր: 2000 թվականին Գլխավոր ասամբլեայի Տնտեսական ու սոցիալական խորհուրդը ՄԱԿ–ի համակարգում ստեղծեց Աղետների նվազեցման միջազգային ռազմավարությունը(UNISDR)՝ որպես միջկառավարական ծրագիր ու մեխանիզմ, որպես կենտրոնական մարմին, որն ունի հասարակայնության իրազեկման բարձրացման, ցանցերի ու համագործակցության ընդլայնման և աղետների պատճառների ու ռիսկերի նվազեցման տարբերակների, Յոկոհամայի ռազմավարության և գործողությունների պլանի մշակման մանդատ ու պարտավորություն:

Այն նաև տրամաբանական շարունակությունն էր «Բնական աղետների նվազեցման միջազգային տասնամյակի» ծրագրի: Այնուհետ՝ «Հազարամյակի հռչակագիր» 2000 թվականին, որտեղ կարևորվում է բնական ու մարդածին մի շարք աղետների ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ համագործակցության անհրաժեշտությունը, Կայուն զարգացման համաշխարհային գագաթնաժողով 2002 թվականին, որտեղ 21–րդ դարի աշխարհի անվտանգության ապահովման կարևորագույն գրավական է դիտվում՝ խոցելիության, ռիսկի գնահատման, աղետների կառավարման ոլորտում բազմաթիվ վտանգների հաշվառումով համալիր ներառական մոտեցումը:

Անընդհատ ահագնացող աղետներն ու դրանց հարաճուն կորուստներով հետևանքները ստիպեցին միջազգային հանրությանն առավել գործուն քայլեր ձեռնարկել **Պետություններում և համայնքներում աղետների պատճառած մարդկային, սոցիալական, տնտեսական ու բնապահպանական կորուստներն էականորեն նվազեցնելու համար**: 2004 թվականի դեկտեմբերին 250 հազար մարդկային կյանք խլած ու հրեշավոր ավերածություններ գործած ցունամիից

ամիս էլ չանցած, 2015 թվականի հունվարին, ՄԱԿ–ի անդամ 168 երկիր ու միջազգային բազմաթիվ կազմակերպություններ այդ արդյունքին հասնելու և հետագա տասը տարիների գործողությունների ծրագիրն ընդունելու համար հավաքվեցին Ճապոնիայի Հյոգոյի մարզի Կոբե քաղաքում:

Այն նույն Կոբեում, որտեղ 1995 թվականին տեղի ունեցած երկրաշարժը (նույն հզորության, ինչ մեր Սպիտակինը՝ 7 մագնիտուդ) հազարավոր զոհեր էր խլել: Սակայն անհամեմատ ավելի քիչ, քան մեր կորուստներն էին: Բնականաբար, վերանայվեցին Յոկոհամայի ռազմավարությունը, քաղված դասերն ու բացերը:

**Վերանայման հաշվետվության մեջ շեշտվեց և կարևորվեց, որ աղետների ռիսկերի նվազեցման գործողություններն ավելի հետևողականորեն հիմնվեն տեղական համայնքների իրազեկման, մարդկանց շահագրգռելու և ներգրավելու մոտեցման վրա:**

## *Հյոգոյի 2005–2015թթ. Գործողությունների ծրագիր(ՀԳԾ) Պետությունների և համայնքների աղետներին դիմակայելու ունակությունների զարգացում*

ՀԳԾ–ի հիմնական առանձնահատկությունն այն էր, որ Ծրագրի ու նրա գործողությունների թիրախը ոչ միայն պետությունն է՝ կառավարությունն ու կառավարման մարմինները, այլև՝ համայնքը, համայնքի ղեկավարներն ու նրա անդամները: Եվ սպասվող հիմնական արդյունքը հենց այդպես էլ սահմանված էր. **Պետություններում և համայնքներում աղետների պատճառած մարդկային, սոցիալական, տնտեսական ու բնապահպանական կորուստների էական նվազեցում:**

Այդ արդյունքին հասնելու համար պահանջվում է շահագրգիռ բոլոր դերակատարների՝ ներառյալ կառավարությունների, տեղական ու միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, կամավորների, մասնավոր հատվածի ու գիտական հաստատությունների լիակատար նվիրվածությունն ու ներգրավվածությունը:

**Նման ներգրավվածություն ապահովելու, շահագրգռություն խթանելու և նվազեցման արդյունավետ քաղաքականություն և գործողություններ մշակելու անկյունաքար Աղետների նվազեցման համաշխարհային համաժողովը դիտարկում էր իրազեկման բարձրացումը բոլոր մակարդակներում, և պատահական չէր, որ ՄԱԿ–ի գլխավոր ասամբլեայի որոշմամբ նախատեսված հինգ նպատակներից երեքն անմիջականորեն վերաբերում էին իրազեկությանը.**

- կայուն զարգացման հասնելու, բացթողումներն ու խնդիրները բացահայտելու համատեքստում փոխանակել աղետների հետագա նվազեցման ոլորտում առկա հաջողված փորձն ու քաղված դասերը,
- բարձրացնել աղետների նվազեցման քաղաքականության կարևորության մասին իրազեկությունը՝ դրանով իսկ նպաստելով և խթանելով վերջիններիս իրագործումը,
- ամրապնդել աղետների ռիսկերի վերաբերյալ համապատասխան տեղեկությունների վստահելիությունը և առկայությունը բոլոր տարածաշրջանների հասարակայնության և աղետների կառավարման գործակալությունների համար:

Մյուս երկու նպատակները վերաբերում էին Յոկոհամայի ծրագրի վերանայմանը, հաշվետվությանն ու քաղված դասերին և Կայուն զարգացման համաշխարհային գագաթնաժողովի իրականաց-

ման պլանի՝ խոցելիության, ռիսկի գնահատման և աղետների կառավարման դրույթի իրականացմանը: Որտեղ նույնպես կարմիր թելի պես անցնում է հանրային իրազեկման, գիտելիքի, լավագույն փորձի և քաղված դասերի փոխանակման անհրաժեշտությունը:

Ռազմավարական նպատակ դիտարկելով՝

- բոլոր մակարդակներում աղետների ռիսկին վերաբերող հարցերի ավելի արդյունավետ ընդգրկումը կայուն զարգացման քաղաքականությունների, պլանների և ծրագրերի մեջ՝ առանձնահատուկ շեշտ դնելով աղետների կանխման, հետևանքների, դրանցից խոցելիության նվազեցման և պատրաստականության վրա, ՀԳԾ-ն ընդգծում է.
- Բոլոր մակարդակներում, հատկապես համայնքային, աղետների դիմակայման ունակություններին մշտապես նպաստող հաստատությունների, մեխանիզմների և կարողությունների ստեղծումն ու ուժեղացումը:
- Տուժած համայնքների վերակառուցման նպատակով արտակարգ պատրաստվածության, արձագանքման և վերականգնման միջոցառումների մշակման և իրականացման ծրագրերում ռիսկի նվազեցման մոտեցումների հետևողական ընդգրկումը:

Հիմք ընդունելով Յոկոհամայի ռազմավարության վերանայված եզրակացությունները, ինչպես նաև Աղետների նվազեցման միջազգային համաժողովի քննարկումներն ու, մասնավորապես, համաձայնեցված ակնկալվող արդյունքներն ու ռազմավարական նպատակները, համաժողովն ընդունեց գործողությունների հինգ առաջնայնություններ.

1. Երաշխավորել, որ աղետների ռիսկերի նվազեցումը պետական և տեղական նշանակության առաջնայնություն է և ամուր ինստիտուցիոնալ հիմքերի վրա է:
2. Բացահայտել, գնահատել և մշտադիտարկել(վերահսկել) աղետների ռիսկերը, ինչպես նաև ամրապնդել վաղ ազդարարման համակարգը:
3. Օգտագործել գիտելիքը, նորարությունը և կրթությունը բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար:
4. Նվազեցնել ռիսկի հիմնային գործոնները:
5. Բարձրացնել աղետների արդյունավետ արձագանքման պատրաստականությունը բոլոր մակարդակներում:

ՀԳԾ-ն կոչ արեց կառավարություններին, միջազգային կազմակերպություններին ու միջպետական կազմավորումներին՝ ընդլայնել միջազգային և տարածաշրջանային համագործակցությունն ու օժանդակությունը աղետների ռիսկի նվազեցման ոլորտում՝ հիմքում ունենալով հինգ առաջնայնությունները և անկյունաքար դարձնելով հանրային իրազեկումը.

- աղետների ռիսկի նվազեցման ոլորտում կարողությունների ձևավորման նպատակով գիտելիքի, տեխնալոգիաների և փորձի փոխանցում, հետազոտությունների արդյունքների, քաղված դասերի և լավագույն փորձի փոխանակում,
- աղետների ռիսկերի և տարբեր մասշտաբի աղետների ազդեցությունների մասին այնպիսի տեղեկությունների հավաքում, որոնք կարող են նպաստել կայուն զարգացմանն ու աղետների ռիսկերի նվազեցմանը,
- համապատասխան օժանդակության տրամադրում բոլոր մակարդակներով աղետների ռիսկի նվազեցման, իրազեկության բարձրացման նախաձեռնությունների և կարողությունների ձևավորման միջոցառումների կառավարումն ուժեղացնելու համար՝ նպատակ ունենալով բարելավել զարգացող երկրների աղետներին դիմակայելու կարողությունները:

*Կանխարգելումն ավելի արդյունավետ է, քան հետաղետային արձագանքումը*
*Ամեն ինչ սկսվում է իրազեկումից*

Կանխարգելման մշակույթի խթանումը, ինչպես նաև աղետների ռիսկերի նվազեցման նպատակով համարժեք ռեսուրսների համախմբումն ապագայում զգալիորեն հատուցվելիք ներդրումներ են: Ռիսկի գնահատումը և վաղ ազդարարման համակարգերը լուրջ միջոցներ են, որոնք պաշտպանում են և փրկում կյանքեր, գույք և կենսամիջոցներ, ավանդ են ունենում կայուն զարգացման մեջ և, ուղղված լինելով հաղթահարման կարողությունների ամրապնդմանը, որպես առաջնահերթ միջոցառում, շատ ավելի ծախսարդյունավետ են, քան հետաղետային արձագանքման և վերականգնման միջոցառումները:

**Աղետների ռիսկերի նվազեցման և աղետներին դիմակայելու մշակույթի մեկնարկային կետը պայմանավորված է վտանգների մասին իմացությամբ** և աղետից հասարակությունների մեծ մասում հանդիպող ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի խոցելի գործոններով, ինչպես նաև նրանով, թե ինչպես են վտանգներն ու խոցելիությունը փոխվում կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: **Սրան հետևում են առկա գիտելիքների հիման վրա ձեռնարկված քայլերը:**

Աղետները կարելի է զգալիորեն նվազեցնել, եթե մարդիկ քաջատեղյակ լինեն և շահագրգռված՝ աղետները կանխելու և դրանց դիմակայելու մշակույթի հարցում, որն իր հերթին պահանջում է աղետների, խոցելիության և կարողությունների մասին համապատասխան գիտելիքների և տեղեկությունների հավաքում և սփռում:

*ՀԳԾ-ն հորդորում է.*

- Բարձր ռիսկային գոտիներում մարդկանց տրամադրել աղետների ռիսկերի և պաշտպանական միջոցառումների մասին մատչելի և հասկանալի տեղեկատվություն, որպեսզի վերջիններս կարողանան ռիսկի նվազեցմանն ուղղված քայլեր ձեռնարկել և ձևավորել դիմակայման ունակություններ: Այդ տեղեկատվությունը պետք է համապատասխանաբար ներառի ավանդական և տեղական իմացություններն ու մշակութային ժառանգությունը և նախատեսված լինի տարբեր թիրախային խմբերի համար՝ հաշվի առնելով տարբեր մշակութային և սոցիալական գործոնները:
- Միջնաժամկետ հեռանկարում ստեղծել տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային օգտագործողին մատչելի տեղեկատուներ, գույքացուցակներ և տեղեկատվության փոխանակման ազգային համակարգեր և ծառայություններ, որոնց նպատակը ռիսկի նվազեցման լավագույն փորձի, ծախսարդյունավետ և հեշտ օգտագործվող տեխնոլոգիաների մասին տեղեկատվության, ինչպես նաև ռիսկի նվազեցման քաղաքականություններից, ծրագրերից և դրանց ուղղությամբ ձեռնարկված միջոցներից քաղված դասերի փոխանակումն է:
- Աղետներին դիմակայելու մշակույթը բարձրացնելու և երկարատև ուսումնական ծրագրերում հասարակության տարբեր շերտերի մասնակցությունը խթանելու նպատակով խրախուսել զանգվածային լրատվամիջոցների մասնակցությունը:

Աղետների ազդեցություններն ու կորուստները կարելի է էապես նվազեցնել, եթե աղետավտանգ տարածքների կառավարման մարմինները, անհատներն ու համայնքները լինեն գործելու համար լավ պատրաստված և զինված աղետների կառավարման անհրաժեշտ գիտելիքներով ու կարողություններով:

*Հյոգո երկուս կամ Հյոգո պլյուս*

Ռիսկի կառավարում՝ կայունության հասնելու համար
Պետության, ձեռնարկության, համայնքի ու անհատի կենսունակությունն ու կայուն զարգացումը

Քննարկումներ և առաջարկներ 2015 թ. հետո
ԱՌՆ գործողությունների շրջանակային ծրագրին

Վերջին երկու տարիներին ամբողջ աշխարհով մեկ, տեղական, տարածաշրջանային և գլոբալ պլատֆորմներում քննարկվում էին ԱՌՆ ոլորտի հետագա զարգացումների միտումները, և ձևավորվում էին այն առաջարկները, որոնք պիտի հիմք դառնան 2015թ. հետո ԱՌՆ տասնամյա գործողությունների շրջանակային ծրագրի՝ Հյոգո երկուսի կամ Հյոգո պլյուսի համար: Ծրագրի անվանումն արմատական փոփոխության չի ենթարկվում, որովհետև նախորդ և գործող շրջանակային փաստաթղթերով սահմանված սկզբունքները մնում են ուժի մեջ: Առաջարկվում է դրանք լրացնել հետևյալով՝

- ➢ աղետների ռիսկի նվազեցումը և կանխարգելումը՝ մարդու իրավունքների երաշխիք հանդիսացող, օրենքով սահմանված միջազգային պարտավորություն են:
- ➢ 2015 թ. հետո ԱՌՆ շրջանակային գործողությունների ծրագրի իրականացման ոլորտում բնականի հետ միասին ներառվում են նաև տեխնածին վտանգները:
- ➢ Զարգացման, ինչպես նաև մարդկանց, պետությունների և շրջակա միջավայրի կայունությունը կախված է ռիսկերի կառավարման արդյունավետությունից, որը պետք է ուղենիշ ծառայի պետական և մասնավոր հատվածի պլանավորման ու ներդրումների համար: Դա դուրս է գալիս առկա ռիսկերի նվազեցման սահմաններից, և ենթադրում է նաև նոր ռիսկերի առաջացման կանխարգելում.

## *Ընդհանուր ռիսկերից դեպի ընդհանուր արժեքներ*

Գործող ՀԳԾ իրականացման արդյունքում աղետների հետևանքով առաջացած կորուստների ու վնասի նվազեցումը որպես այսպիսին ձևավորել է այն հայեցակարգը, ըստ որի՝ աղետները դիտարկվում են որպես արտաքին իրադարձություններ, իսկ աղետների ռիսկի նվազեցումը՝ որպես զարգացումը պաշտպանող հատված:

2015 թ. հետո ԱՌՆ շրջանակային գործողությունների ծրագրից սպասվող արդյունքը պետք է դիտարկել ոչ միայն վնասի նվազեցման տեսանկյունից, այլ՝ դրական փոփոխությունների ենթատեքստում, որոնց անհրաժեշտ է ձգտել, այն է՝ անվտանգ, առողջ, բարգավաճող ու կայուն պետությունների ու համայնքների ստեղծում:

Դա թույլ կտա ուղիղ և փոխլրացնող կապ հաստատել կայուն զարգացման և ավելի նեղ ուղղվածություն ունեցող նպատակների միջև: Միաժամանակ՝ կուժեղանա աղետների ռիսկի կառավարման քաղաքական ու տնտեսական անհրաժեշտությունը, որի արդյունքում ռիսկերի կառավարման մեջ արվող ներդրումների ընկալումը որպես **լրացուցիչ ծախս, կփոխարինվի ընդհանուր արժեքների ձևավորման հնարավորության գիտակցությամբ:**

Նման արդյունքի հասնելու համար 2015 թ. հետո ԱՌՆ շրջանակային գործողությունների ծրագրում ներառված կլինի 3 լրացուցիչ ու ռազմավարական նպատակ.

1) ռիսկերի կանխարգելում և զարգացման ուղիների որոնում, որոնք կնվազեցնեն աղետների ռիսկի առաջացումը,

2) ռիսկի նվազեցում, այսինքն՝ միջոցառումներ, որոնք ուղղված են աղետների ռիսկի կուտակման առկա օջախների վերացմանը,

3) կայունության աստիճանի բարձրացում, այսինքն՝ պետությունների և համայնքների համար պայմանների ստեղծման ուղղված միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են վնասների նվազեցման, դրանց հետևանքները նվազագույնի հասցնելու, դիմակայունության և առաջխաղացման համար:

**Կայուն զարգացման նպատակների իրականացմանն անհնար է հասնել առանց աղետների ռիսկերի կառավարման:**

Ռազմավարական նպատակներին և ակնկալվող արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է, որպեսզի ռիսկի կառավարման պետական քաղաքականությունն ապահովված լինի համապատասխան կառավարչական բնույթի շրջանակային փաստաթղթերով, որոնք կընդգրկեն ոչ միայն տեղական ու ազգային մակարդակով կառավարության, այլև՝ քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի, գիտական հիմնարկների, ակադեմիական և այլ կազմակերպությունների գործողությունները:

Նման կառավարչական մոտեցումը կարող է դառնալ ավելի ու ավելի լայն տարածում գտնող ներդրումային ու ցանցային գործընկերությունների և միությունների (տարբեր ոլորտների մասնակցությամբ) կիրառման օրինակ, որպես զարգացման գործընթացի հետ կապված խնդիրների արդյունավետ լուծման տարբերակ:

Նույն տրամաբանությամբ պետական քաղաքականության հիմքում պետք է ներդնել տվյալների բազայի և գիտելիքների ձևավորման ու կառավարման մեխանիզմներ, որպեսզի տարբեր մակարդակների ղեկավարման ու կարգավորման մարմիններին (սկսած ֆիզիկական անձանցից մինչև տնային տնտեսություններն ու միջազգային կազմակերպությունները) մատչելի լինեն ռիսկերի ու դրանց կառավարման այլընտրանքային միջոցների մասին արդիական ու այդքան անհրաժեշտ տեղեկատվությունն ու գիտելիքները:

Անվճար և հանրամատչելի, գիտականորեն հիմնավորված տեղեկատվության և գիտելիքի առկայությունը մեծ նշանակություն ունի շահավետության վերլուծության, գործարքների թափանցիկության, պատասխանատվության, ինչպես նաև պետական ու մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի միջև գործընկերության զարգացման համար:

## *Հին ու նոր ցուցանիշներ*

**Գոյություն ունեցող ռիսկերի նվազեցման քաղաքականությունից դեպի նոր ձևավորվող ռիսկերի կանխարգելման մշակույթ:**

Մինչ օրս ՀԳԾ նկատմամբ հսկողությունն իրականացվել է հինգ առաջնահերթությունների շրջանակներում նշված 22 ցուցանիշների համաձայն: Հսկողության օնլայն մոդուլի օգնությամբ կատարվում էր ծրագրի կատարման ընթացքի գնահատում ըստ երկրների, 1–5 աստիճանի սանդղակով:

Չնայած որ կատարված աշխատանքի շնորհիվ ստեղծվել է ԱՌՆ ոլորտում առաջընթացի վերաբերյալ մատչելի տեղեկատվության ամենանշանակալի համաշխարհային պահոցը՝ տրամադրված

կառավարությունների կողմից, 3 երկամյա ցիկլերի ընթացքում (2009, 2011 և 2013 թթ.) արվածի վերանայման փորձը մատնացույց է անում որոշ թերություններ:

Այսպիսով, հսկողության գործող մոդուլը մասամբ է օգնում գնահատել՝ արդյոք երկրներն արձագանքու՞մ են ռիսկի թաքնված գործոններին և արդյոք ջանքեր գործադրու՞մ են նոր ռիսկերի առաջացումից խուսափելու համար: Բացի դրանից, ՀԳԾ հսկողության մոդուլի և Հազարամյակի մարտահրավերների նպատակների իրականացման առաջընթացի մոնիթորինգի մեխանիզմների միջև, ինչպես նաև կլիմայի փոփոխությունների մասին ՄԱԿ–ի շրջանակային կոնվենցիայի միջև ուղիղ կապ չկա:

Այս թերությունները հաշվի առնելով՝ առաջարկվում է ներդնել ռիսկի կառավարման ցուցանիշների նոր համակարգ՝ կազմված 5 տարբեր խմբերից, որպեսզի գնահատվի, թե ինչ արդյունավետությամբ է ռիսկի կառավարման ոլորտում պետական քաղաքականությունն արձագանքում ռիսկի թաքնված գործոններին՝ ռիսկի առաջացումը կանխելու նպատակով (ռիսկի հեռանկարային կառավարում), որքան արդյունավետ է այն նվազեցնում առկա ռիսկի մակարդակը և որքան արդյունավետ է բարձրացնում կայունության աստիճանը (վնասի նվազեցման և առաջընթացի ներուժ) աղետների դեպքում:

Այդ քաղաքականության հաջողությունից է կախված լինելու երկրին աղետների հասցրած վնասի և կորուստների մակարդակը և դրանց ազդեցությունը տնտեսության, շրջակա միջավայրի և հասարակության բարեկեցության վրա երկարաժամկետ հեռանկարում:

1. **Կորստի և վնասի ցուցանիշ**. աղետներից կորուստների մակարդակը ռիսկի կառավարման արդյունավետության գլխավոր ցուցանիշներից է: Ըստ էության, եթե կորուստները մեծանում են, ուրեմն՝ ռիսկի կառավարումն արդյունավետ չէ և՝ հակառակը: Այսպիսով՝ ցուցանիշների առաջին խմբում պետք է ներառել աղետներից կորուստների ու վնասների քանակական ցուցանիշները, ինչպես բացարձակ, այնպես էլ՝ հարաբերական (համեմատած բնակչության ընդհանուր թվի, ՀՆԱ–ի հետ և այլն) արտահայտվածությամբ: Դրանց վերաբերում են մարդկային կորուստները (մահացության մակարդակը, մարմնական վնասվածքներ ստացած կամ որևէ այլ կերպ տուժած մարդկանց թիվը), ֆիզիկական վնասը (շինությունների ու տեղական ենթակառուցվածքների ոչնչացումը կամ վնասվելը), տնտեսական վնասները (ոչնչացված կամ վնասված գույքի փոխարինման ծախսերը):

2. **Ռիսկի և կայունության ցուցանիշ**. 2–րդ խումբը կապված է երկրների կողմից համակարգված ռիսկի վերաբերյալ տվյալների հետ՝ ներառյալ ինտենսիվ և էքստենսիվ ռիսկերը (Ինտենսիվ՝ հզոր, ավերիչ, լայնածավալ, էքստենսիվ՝առօրյա դեպք–պատահարներ. Միշտ մի աղետ, մի վնաս գալիս է մեզ անպակաս): Այս խումբը հիմնված է քանակական այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են տարեկան միջին և հնարավոր առավելագույն կորուստները, որոնց օգնությամբ կարելի է հաշվել հնարավոր կորուստները, որ կարող է կրել երկիրն ապագայում: Կարևոր է հասկանալ որոշակի ժամանակի ընթացքում դիտարկվող կորուստների ու ռիսկերի միջև եղած տարբերությունը: Հաշվի առնելով այն, որ որոշ ինտենսիվ աղետներ տեղի են ունենում ոչ հաճախ (օրինակ՝ 100 կամ 1000 տարին մեկ)՝ 30 կամ 40 տարվա ընթացքում հավաքված պատմական տվյալներն ինքնին ցույց չեն տալիս ռիսկի այն մակարդակը, որին կարող է ենթարկվել երկիրը:

3. **Աղետների ռիսկի կառավարման ցուցանիշ**. 3–րդ խումբն օգտագործվում է հնարավոր կորուստների նկատմամբ երկրի կայունության աստիճանը գնահատելու համար: Նման գնահատում իրականացվում է ցուցանիշների որոշման միջոցով, որոնց հիման վրա համեմատվում են երկրի տնտեսության և կապիտալի չափը, ներդրումների ու խնայողությունների մակարդակը, ապրանքաշր-

ջանառությունը, ապահովագրությունների ընդգրկման շրջանակը, կառավարության ֆինանսական վիճակը, սոցիալական պաշտպանվածության աստիճանը և այլ չափանիշներ: Ավելին՝ ցուցանիշների այս խումբն արտացոլում է ռիսկի համեմատությամբ ֆինանսական կայունության աստիճանը, որի համար պատասխանատու է պետությունը՝ բյուջետային ապահովվածությամբ ու ռիսկին արձագանքելու ֆինանսական միջոցների առկայությամբ, ներառյալ՝ ապահովագրությունը:

**4. Ռիսկի հիմնարար գործոնների ցուցանիշ.** 4-րդ խումբը կիրառվում է գնահատելու համար, թե ինչպես է երկիրն արձագանքում ռիսկի թաքնված գործոններին: Ռիսկի հիմնարար գործոններ են՝ քաղաքային և գյուղական համայնքների թերի պլանավորումը, էկոհամակարգերի վատթարացումը, անվստահությունն ու աղքատությունը, կլիմայի փոփոխությունը, որոնք նպաստում են աղետների ռիսկի աճին, բերելով նոր վնասներ ու կորուստներ: Այն նաև ապահովում է աղետների ռիսկի կառավարման և Հազարամյակի մարտահրավերների նպատակների ու կլիմայի փոփոխությունների շրջանակային կոնվենցիայի միջև կապը:

Կմշակվի ցուցանիշների մի քանի կատեգորիա, այդ թվում՝ տնտեսական ու ֆինանսական կառուցվածք, աղքատություն և սոցիալական անպաշտպանվածություն, շրջակա միջավայրի և էկոհամակարգերի պաշտպանության ծառայությունների նվազեցում և կլիմայի փոփոխություններ, ուրբանիզացիա, բնական ու տեխնածին սպառնալիքներին դիմակայելու ունակություն:

**5. Պետական քաղաքականության արդյունավետության գնահատման ցուցանիշ.** 5-րդ խումբն օգտագործվում է երկրների կողմից արդյունավետ պետական քաղաքականության ընդունումը գնահատելու նպատակով, որն ուղղված է ռիսկի հեռանկարային ու կանխարգելիչ կառավարմանը, առկա ռիսկի ուղղիչ կառավարմանը և կայունության աստիճանի բարձրացմանը՝ ինչպես պետական, այնպես էլ՝ մասնավոր հատվածի:

Կմշակվեն նաև ցուցանիշներ՝ տեղեկատվության ու գիտելիքների ձևավորման ու դրանց կառավարման գործընթացի կազմակերպման և կառավարման արդյունավետությունը գնահատելու համար, որոնք պետք է ամրապնդեն աղետների ռիսկի կառավարման ոլորտում պետական քաղաքականությունը:

**6. ՀԳԾ 2-ն ընդգծում է՝** Ռիսկի տեխնածին բնույթի ճանաչումը, դրա բնութագրիչների փոփոխությունը, ռիսկի գործոնների վրա կենտրոնանալու անհրաժեշտությունը՝ ներառյալ զարգացման գործընթացին հատուկ կլիմայական փոփոխությունները և տատանումները, խոցելիությունը և սպառնալիքներին ենթակա լինելու խնդրի լուծման անհրաժեշտությունը, էքստենսիվ ռիսկի խնդրի լուծման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով դրա կապը մարդկանց խոցելիության և աղքատության հետ, ինչպես նաև հստակ միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտության գիտակցությունը, որոնք ուղղված կլինեն ռիսկի կառավարման հիմնական ջանքերին՝ ներառյալ առկա ռիսկի նվազեցումը և նորերի առաջացման կանխումը՝ մարդկանց, պետությունների և շրջակա միջավայրի մակարդակով կայունությունն ապահովելու համար.

### *Հայաստանն ու Հյոգոյի գործողությունների ծրագիրը Արտակարգ իրավիճակների նախարարությունն ու ԱՌՆ ազգային ռազմավարությունը*

Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո մեր երկրում կային–գործում էին կանխատեսման, կանխարգելման ու արձագանքման կառույցներ, անարդյունավետ, իրար կրկնող ստորաբաժանումներով, հաճախ իրար հակասող գործառույթներով ու իրավասություններով:

2008–ին նորաստեղծ Արտակարգ իրավիճակների նախարարությունն այդ կառույցները հավաքեց մի հարկի տակ, միավորեց, բայց, գործուն ու հզոր նախարարություն դառնալու համար անհրաժեշտ էր դրանք ոչ թե արհեստականորեն, առանց հղկելու միացնել, այլ օպտիմալացնելով՝ ձուլել, մի կողմ նետելով ավելորդն ու կրկնվողը:

Խնդիր դրվեց ստեղծել երկրի կարիքներին համահունչ, աշխարհի հետ համաքայլ, հզոր ու կառուցիկ, տեխնիկապես հագեցած ու ամենահաս արտակարգ իրավիճակների նախարարություն. Դավթաշենում սկսեց կառուցվել «արտակարգ» քաղաքը, որտեղ տեղակայվում են ԱԻՆ բոլոր ստորաբաժանումները՝ **փրկարար ծառայությունը, պետական ռեզերվների գործակալությունը, սեյսմիկ պաշտպանության ծառայությունը, պետական հակահրդեհային ու տեխնիկական անվտանգության տեսչությունը, աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոնը, մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայությունը, հավատարմագրման ու լիցենզավորման գործակալությունը,** շուտով նաև **տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը, հիդրոմետ ծառայությունն ու ճգնաժամային կառավարման ակադեմիան**:

Մշակվեցին ամբողջ համակարգի բարեփոխման ծրագիրը և յուրաքանչյուր ոլորտի զարգացման ռազմավարությունը: Հյոգոյի գործողությունների ծրագրի կյանքի կոչելը դարձավ ԱԻՆ գերխնդիրը. **շատ կարևոր էր պարզել, թե որտեղ ենք մենք գտնվում, ինչի ենք ուզում հասնել՝ որն է մեր տեսլականը, ինչ կարողություններ ունենք, մինչ ուր կարող ենք հասնել մեր երազներում, իրականում, ուր է գնում աշխարհը, և որն է անցնելիք մեր ճանապարհը, որոնք են մեր թույլ կողմերը, թերությունները, բացթողումները, որտեղ են սփռված այդքան անհրաժեշտ ռեսուրսները՝ մարդկային, նյութական, ֆինանսական. . .**

Սկսվեց ԱԻՆ **կարիքների ու կարողությունների գնահատումն ըստ Հյոգոյի գործողությունների ծրագրի առաջնայնությունների**: Չափազանց ակնառու էր ու պարզից էլ պարզ, որ միայն նախարարության ուժերով, որքան էլ այն հզոր ու անընդհատ զարգացող լինի, պարզապես անհնար է դիմագրավել բոլոր տեսակի մարտահրավերները՝ բնական, տեխնածին, համաճարակային, բնապահպանական, սոցիալական նաև՝ քաղպաշտպանական:

Անհրաժեշտ էր երկրի ամբողջ ներուժը, ԱՌՆ բոլոր դերակատարներին ներգրավող բազմաձյուղ մի մեխանիզմ. **2010 թվականին առաջինը տարածաշրջանում ստեղծվեց Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմը՝ ԱՌՆԱՊ–ը, որը գրանցվեց որպես հիմնադրամ:**

Շահագրգիռ բոլոր կառույցներին ներգրավելով, մշակվեց **ԱՌՆ ազգային ռազմավարությունը**՝ գործողությունների կոնկրետ ծրագրով:

Այսօր ԱԻՆ–ն ամբողջ երկրի համար ունի ճգնաժամային կառավարման կենտրոն, որն իր գործառույթներով առնչվում է Հյոգոյի ծրագրի գրեթե բոլոր առաջնայնություններին՝ և իրավական դաշտ ու պետական քաղաքական առաջնայնություն, և ռիսկերի գնահատում, տարաբնույթ երևույթների

մշտադիտարկում ու վաղ ազդարարում, թե իրազեկում ու տեղեկատվության կառավարում, թե աղետների ազգային դիտացանց, թե հնարավորություն՝ ռիսկերի հիմնային գործոնները բացահայտելու և թե՝ պատրաստվածության հիմքեր բոլոր մակարդակներում:

911 ծառայությունն էլ օպերատիվ արձագանքումն է ապահովում: Այսօր բոլորն են խոստովանում, որ այդ ծառայության շնորհիվ պետությունն իր նկատմամբ վստահության ու հավատի ամուր հիմքեր ունի: Ոչ մի կանչ անարձագանք չի մնում: Մարդիկ վստահ են, որ 911 զանգելով իրենց անպայման օգնության կհասնեն: Սա շատ կարևոր է նաև համակարգի նկատմամբ բնակչության վերաբերմունքի առումով: Վերահաս աղետի ու փորձության պահին նրանց այդ վստահությունը կբարձրացնի արձագանքման արդյունավետությունը:

**Այսօր բոլոր ուղղություններով ԱԻՆ-ը գնում է ապակենտրոնացման. մարզերում, գործակալությունների ստորաբաժանումներին զուգահեռ, ստեղծվում են Ճգնաժամային կառավարման կենտրոններ և 911 ծառայություններ**: ԱԻ նախարարի հրամանով **մարզային վարչությունների պետերը նշանակվել են ՀԳԾ մարզային համակարգողներ**: Բոլոր մարզերում **ստեղծվել են մարզային ԱՌՆ թիմեր**, միտումը նաև համայնքային թիմերի ստեղծումն է, համայնքային կարողությունների հզորացումը: ԱՌՆ ոլորտում Հայաստանն առաջատարի համբավ ունի միջազգային կառույցներում և զգալի ներդրում ընդհանուր զարգացումներում, մասնավորապես՝ ճգնաժամային կառավարման, ռիսկերի գնահատման, ուսուցման և հանրային իրազեկման ոլորտներում:

## *Աղետակայուն համայնքներից դեպի տեղական մակարդակում ռիսկի կառավարում. Հանրային իրազեկումը որպես աղետների ռիսկի նվազեցման ուղիղ ճանապարհ*

1997 թվականի հունվարից ազգային հեռուստատեսությամբ սկսեց հեռարձակվել Արտակարգ ալիք լրատվական կենտրոնի «Արտակարգ ալիք» հեռուստահաղորդաշարը, իսկ սեպտեմբերից կազմավորվեց ԱԻՎ լրատվական ծառայությունը, որտեղ էլ Արտակարգ ալիքը ներդրեց իր հնարավորություններն ու կարողությունները : Հանրային իրազեկման ծրագրեր՝ հեռուստառադիոհաղորդումներ, Արտակարգ թերթ շաբաթաթերթ, կայքէջեր, ուսումնական կենտրոն լրագրողների համար : Հիմնական գործընկերը ՄԱԶԾ-ն էր, որն էլ ԱՄՆ Զարգացման գործակալության հետ իրականացրեց Արտակարգ ալիքի հարկաբաժնի կառուցումն ու կահավորումը :

2007 թվականին սկսվեց հանրային իրազեկման առաջին պիլոտային ծրագիրը Շվեյցարիայի Զարգացման գործակալության հետ՝ Հրշեջները համայնքներում, որը պարզվեց երկարաժամկետ համագործակցության անկյունաքարն էր : Նույն 2007-ին ՄԱԶԾ-ն ու ԵԱՀԿ-ն միջազգային փորձագետների ներգրավմամբ համատեղ իրականացրեցին Արտակարգ ալիք լրատվական կենտրոնի փորձաքննությունը, որից հետո ՇԶԳ-ի հետ Հրշեջները համայնքներում ծրագիրը մինչև 2011թվականն իրականացվեց հանրապետության բոլոր մարզերում:

ՄԱԶԾ-ն Արտակարգ ալիքի հետ իրականացրեց նրա տեղեկատվական կարողությունների հզորացման, իսկ Արարատի մարզում՝ աղետակայուն համայնքներ հանրային իրազեկման ծրագիրը : Առաջին անգամ իրականացվեցին ռիսկի գնահատման և համայնքային մակարդակով տեղական կարողությունների հզորացման արդյունավետ քայլեր : Արտակարգ ալիքի հետ համագործակցել և նրա նախաձեռնություններին աջակցել են ոլորտում առկա համարյա բոլոր միջազգային կազմակերպությունները, պետական կառույցներ, մասնավոր ընկերություններ:

ՄԱԶԾ–Արտակարգ ալիք համագործակցության ուղիները բազմիցս խաչվեցին, Իսկ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության ծրագրի հետ սկսվեց հանրային իրազեկման նոր պիլոտային ծրագիր, որի նպատակը Սյունիքի գյուղական 50 համայնքներում իրազեկման հզորացումն է :

Արտակարգ ալիք լրատվական կենտրոնը կողմնակիցն ու ջատագովն է այն գործընթացի, որտեղ մարդիկ իրենց համար բացահայտում են, թե իրենք ինչ պիտի իմանան՝ իրենց կյանքը բարելավելու և առավել անվտանգ դարձնելու համար:

Վերևում մանրամասն ներկայացվեց հանրային իրազեկման տեղն ու դերը աղետերի ռիսկի կառավարման համակարգում, մասնավորապես, տեղական մակարդակում՝ տեղեկատվության կառավարում, վաղ նախազգուշացում, ազդարարում, հասարակայնության հետ կապեր, տեղեկատվության ու գիտելիքի փոխանցում՝ ԱՌՆ լավագույն փորձի ու քաղված դասերի վերաբերյալ, բնակչության իրազեկում, պատրաստվածության բարձրացում, մոտիվացում, օտարացման և նիհիլիզմի հաղթահարում, ներգրավում:

Իսկ այդ ամենն սկսվում է վտանգների, դրանց ռիսկերի, խոցելիության ու կարողությունների գնահատում–բացահայտումից, որին հաջորդում են գիտելիքների վրա հիմնված աղետների ռիսկի կառավարման հիմնավորված քայլերը:

# ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Ինչպես են գնահատվում աղետների ռիսկերը, ինչ մեթոդներով, ինչ ձևաչափերով, ինչ գործիքներ են կիրառվում, որ կազմակերպությունն ինչ քաղաքականություն է մշակել, որն է միջազգային փորձը, ինչպես կարելի է այն տեղայնացնել, ինչպես կարելի է մշակել համայնքային մակարդակում աղետների ռիսկի կառավարման միասնական ու բոլորի համար ընդունելի մեթոդաբանություն՝ հաշվի առնելով միջազգային վերջին զարգացումներն ու Հյոգո երկուսին ներկայացվող առաջարկների քննարկումները, ինչպես ստեղծել այն բարեբեր դաշտը, որ համայնքներում մարդկանց հետաքրքրի, շահագրգռի, ներգրավի, փոփոխություն առաջացնի նրանց մտքերում ու վարքագծում, մղի գործողության :

Խնդիր դրվեց.

- ուսումնասիրել տեղական մակարդակում ռիսկի (վտանգ / խոցելիություն) գնահատման գոյություն ունեցող միջազգային և Հայաստանի լավագույն փորձը. մեթոդաբանություն / ձևաչափեր / գործիքներ,
- համադրել և համեմատել մեթոդաբանությունների /գործիքների կիրառման փորձը և մեխանիզմները,
- ընտրել տեղական մակարդակում ռիսկի (վտանգ / խոցելիություն) գնահատման մեթոդաբանության/գործիքների այն տարբերակը, որը հնարավոր է տեղայնացնել և, լրամշակելով՝համադրել Հայաստանում արդեն իսկ ժամփա անցած լավագույն փորձին:

## *Խոցելիության և կարողությունների գնահատում*

Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգից բխող գործառույթ հանդիսանալով՝ ԱՌՆ–ը դիտվում է որպես պետության անվտանգության և կայուն զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը, և համաձայն ՀՀ ԱՌՆ ռազմավարության դրույթների և վերջինիս իրականացման 2012–2015թթ. պլանի, պետք է ներառվի զարգացման ոլորտային և ճյուղային պլաններում:

ԱՌՆ գործնական ներառումը զարգացման ծրագրերում և գործընթացներում, մասնավորապես համայնքային մակարդակում, նպատակ է հետապնդում նոր ԱՌՆ մշակույթի ձևավորմանը: Աղետների ռիսկի նվազեցումը համայնքային / տեղական մակարդակում աղետների ռիսկի կառավարման ընդհանուր համակարգի տեղական բաղադրիչն է, որը մարզային և ազգային բաղադրիչների հետ համատեղ ձևավորում է ազգային համալիր ԱՌՆ համակարգը:

Աղետներին դիմակայելը չի կարող լինել արդյունավետ, եթե այն սահմանափակվում է միայն դրանց ծագման դեպքում «օպերատիվ» արձագանքումով: Առավել արդյունավետ ուղին աղետների կանխումն է, խոցելիության և հետևաբար՝ ռիսկերի նվազեցումը: Աղետների ռիսկի նվազեցումը ենթադրում է աղետների ռիսկի բացահայտման, գնահատման և նվազեցմանն ուղղված գործողությունների համակարգ և հանդիսանում է համայնքային զարգացման գործընթացի անբաժանելի բաղկացուցիչը:

Միջազգային/տեղական կազմակերպությունները/կառույցները վերջին 15 տարիների ընթաց-

քում Աղետների ռիսկի նվազեցման գործընթացները լայնորեն ընդգրկել են իրենց ռազմավարական պլաններում: Նշված գործընթացների անբաժանելի մաս է հանդիսանում Խոցելիության և կարողությունների գնահատումը (ԽԿԳ), որն ընդհանուր առմամբ, նպատակ է հետապնդում համայնքային–մասնակցային հետազոտական/վերլուծաբանական գործընթացի միջոցով՝

- ✓ բացահայտել համայնքին սպառնացող, այդ թվում նաև՝ կլիմայի փոփոխության հետ առնչվող վտանգները.
- ✓ համայնքի խոցելիությունն այդ վտանգներից.
- ✓ համայնքի կարողությունները ԱՌՆ ոլորտում:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՇԱԿՎԱԾ/ԿԻՐԱՌՎՈՂ ԽԿԳ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]:

Միջազգային մարդասիրական այնպիսի կազմակերպություններ ինչպիսիք են՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիան(ԿԽ ԿՄՄՖ), Քեյր (Care International), ՕՔՍՖԱՄ (OXFAM), Վորլդ Վիժն (World Vision), «Փրկեցեք երեխաներին» (Save the Children), ՅՈՒՆԻՍԵՖ (UNICEF) և այլ միջազգային/տեղական կառույցներ, իրենց մարդասիրական առաքելության հիմնախնդիրներից/ռազմավարությունից ելնելով, ԽԿԳ տարբեր մեթոդաբանությունները կիրառել են համայնքային մակարդակում ԱՌՆ ոլորտի խնդիրների վերհանման և ռիսկի նվազեցման և որոշակի մեղմացման նախագծերի իրականացման համար:

Քեյր / ՕՔՍՖԱՄ միջազգային կառույցների ԽԿԳ մեթոդաբանությունը մեծ կիրառություն ունեցող, բավական մատչելի ձեռնարկ է և ներառում է ԽԿԳ իրականացման հստակ մոտեցումներ/մեխանիզմներ: Մեթոդաբանությունը լրացված է նաև ԽԿԳ իրականացման ուսումնամեթոդական հավելվածներով և կիրառական գործիքներով: Քեյր / ՕՔՍՖԱՄ հիմնական առաքելությունն է նպաստել չքավորության վերացմանը և աղքատության նվազեցմանը հիմնականում գյուղական շրջաններում (շուրջ 84 երկրներում): Մեթոդաբանությունը ձևավորված է «մասնավորից դեպի ընդհանուր» սկզբունքի հիման վրա՝ կրելով տվյալ երկրին, տարածաշրջանին/ համայնքին հատուկ առանձնահատկությունները (մշակութային, սոցիալ–տնտեսական, հոգեբանական, էթնիկ և այլն):

Քեյր–ի կողմից ձեռնարկվող ԽԿԳ իրականացումն ուղղված է բնական վտանգների/ կլիմայի փոփոխության հետևանքով համայնքներին պատճառած վնասների բացահայտմանը և որոշակի մեղմացման գյուղատնտեսական նախագծերի իրականացմանը: Մի շարք երկրների՝ Գանա, Նիգերիա, Նեպալ, Տաջիկստան և այլ հաջողված փորձի վերլուծության հիման վրա է ձևավորվել Քեյր միջազգային կազմակերպության կիրառական ձեռնարկը (Climate Vulnerability and Capacity Analysis, 2009), որտեղ տեղ գտած ԽԿԳ ընթացակարգը/ գործիքները[2] և համայնքի հետ աշխատանքի վարման տեխ-

---

[1] IFRC – VCA Training Guide (Classroom training, learning by doing), VCA toolbox, “How to do the VCA” (a practical step by step guide), VCA lessons learned and recommendations.
CARE CVCA methodology “Household Livelihood security assessments toolkit,Oxfam Disaster Risk Reduction and Climate Change Adaptation Resources, OXFAM CVA (Capacities and Vulnerabilities Analysis ) and other.

[2] ԽԿԳ ընդունված 14 գործիքներից “Climate Vulnerability and Capacity Analysis, 2009” ձեռնարկում ներկայացված է ընդամենը 6 գործիք:

նիկան հաջողությամբ կիրառվում են նմանատիպ խնդիրներ ունեցող այլ երկրներում (հիմնականում Աֆրիկայում և Ասիայում):

Իր հերթին, ՕՔՍՖԱՄ–ի կողմից մշակած և կիրառվող մեթոդաբանությունը/ վերլուծական մեխանիզմները կիրառելի են ընդհանուր վտանգների կամ վտանգավոր երևույթների բացահայտմանը տարբեր ենթատեքստերում. աղքատության նվազեցում, համայնքային զարգացում, աղետների կառավարում, կլիմայի փոփոխության հարմարվողականություն և այլն:

ԿԽ ԿՄՄՖ միջազգային մարդասիրական առաքելությամբ ամենամեծ կառույցն է: Աղետների կառավարումը ԿԽ ԿՄՄՖ ռազմավարական ուղղություններից է, և ԱՌՆ ոլորտում այն ունի շուրջ 15 տարվա փորձ (100–ից ավելի երկրներում): ԿԽ ԿՄՄՖ կողմից 1999 թ. հրատարակվեց համայնքային/մասնակցային ԽԿԳ առաջին մեթոդաբանությունը: Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ազգային ընկերությունները (80) իրականացրեցին ԽԿԳ գործընթացները՝ սկիզբ դնելով համայնքային/մասնակցային գնահատման ծրագրային իրականացմանը և համայնքների ներգրավվմանը իրեն սպառնացող վտանգների բացահայտման և ռիսկի նվազեցման նախագծերում: Անհրաժեշտ է նշել, որ ԽԿԳ պարբերաբար իրականացրել են Կարմիր խաչի և կարմիր մահիկի համարյա բոլոր ազգային ընկերությունները՝ անկախ երկրի/ազգային ընկերության զարգացման մակարդակից. բրիտանական, շվեդական, կանադական, Ֆիլիպինների, Նեպալի, Յեմենի, հայկական և այլն:

*Ստորև համառոտ ներկայացված են ԿԽ և ԿՄՄՖ ԽԿԳ մեթոդաբանությունից վերցված օրինակները:*

- *Շվեդական կարմիր խաչի ընկերությունը դեռևս 1994 թ. սկսած իրականացրել էր ԽԿԳ, հիմնականում, նպատակ հետապնդելով բացահայտել համայնքներում առկա խոցելի խմբերը՝ հաշմանդամներ, միգրանտներ և այլոք, ովքեր ինչ–ինչ պատճառներով դուրս էին մնացել հաշվառումից և ներգրավված չեն եղել աղետների արձագանքման միջոցառումներում: Համայնքներում առկա էին տնտեսական ռիսկերի հետ կապված հետազոտությունների տվյալները, սակայն վտանգների (բնական, տեխնածին և այլն) ռիսկերի վերաբերյալ պետական մակարդակով կատարված ուսումնասիրություններին համայնքներն ընդհանուր առմամբ և հատկապես վերը նշված խոցելի խմբերը մասնակից չեն եղել: Խոցելի խմբերը ձևավորվել և մասնակցել են գնահատմանը՝ համայնքին սպառնացող տարաբնույթ վտանգների (բնական, տեխնածին, սոցիալ – առողջապահական և այլն) բացահայտման նպատակով: Գնահատման արդյունքների վերլուծությունը/ տվյալները պարզաբանվել են մասնակիցներին: Որպես գնահատման գործընթացի արդյունք նշվել են համայնքին սպառնացող վտանգավոր երևույթները և դրանց դեմ պայքարի միջոցները: Համայնքի բնակիչների՝ մասնավորապես խոցելի խմբերի, ռիսկի նվազեցման ոլորտում գիտելիքների, իմացության, արագ արձագանքման վերաբերյալ պարբերական կրթական ծրագրերը շատ են կարևորվել՝ համարվելով որպես համայնքի համար ձեռք բերվող կարողություն: Գերակայող վտանգի նվազեցման համար ձեռնարկվող նախագծերը քննարկվել և նախագծվել են այդ խոցելի խմբերի անմիջական մասնակցությամբ: Վերջինները ներգրավվել են առաջին օգնության, աղետների կանխարգելման / արձագանքման կրթական և այլ ծրագրերում:*
- *Յեմենի կարմիր մահիկի ընկերությունը 2005 թ. ձեռնարկել էր ԽԿԳ գործընթաց պարբերական ջրհեղեղներից տուժած երկու շրջանում: Նախատեսվում էր ձեռնարկել կանխարգելման միջոցառումներ՝ հիմք ընդունելով ԽԿԳ իրականացման արդյունքները և համայնքների բնակիչների կողմից արված առաջարկությունները: Գնահատման գործընթացի արդյունքը անկանխատեսելի էր: Պարզվեց, որ այդ 2 շրջանում վերջին 15 տարիների ընթացքում ճանապարհատրանսպորտային պատահարներից ավելի շատ մարդ էր զոհվել, քան աղետալի ջրհեղեղներից: Ավտոճանապարհային վտանգները համայնքը սահմանեց որպես գերակայող: Յեմենի կարմիր մահիկի ընկերությունը համայնքների բնակիչների անմիջական մասնակցու-*

*թյամբ և աջակցությամբ ձեռնարկեց Համապարհային անվտանգության ծրագիր, հատկապես հաշվի առնե-լով դպրոցներին մոտ Ճանապարհները: Ջրհեղեղների վտանգի կանխարգելման նախագիծը քննարկվել էր, որպես երկարաժամկետ իրականացման միջոցառում՝ հաշվի առնելով, որ համայնքի կարողությունները/ բյուջեն բավարար չեն և այլ դոնորներներից լրացուցիչ ներդրումներ կպահանջվեն:*

ԿԽ ԿՄՄՖ ԽԿԳ մեթոդաբանությունը ձևավորվել է «ընդհանուրից դեպի մասնավոր» սկզբունքի հիման վրա և միակ կառույցն է, որն իր տրամադրության տակ ունի ԽԿԳ մեթոդաբանության մշակված լրիվ փաթեթ. ԽԿԳ 4 հիմնական ձեռնարկներ

- վարման/իրականացման,
- ուսուցման/կիրառման,
- գործիքների/միջոցների և
- քաղած դասերի:

ԽԿԳ իրականացման գործիքները (14) և վերլուծական միջոցները կիրառման տեսանկյունից ամբողջական են (միմիանց լրացնող) և մատչելի:

ԿԽ ԿՄՄՖ ԱՌՆ ոլորտում իր գործունեության ընթացքում բացահայտել, ի մի է բերել և դասակարգել ԽԿԳ գործընթացի իրականացման հաճախակի կատարվող /հնարավոր սխալներն ու բացթողումները, որոնք ԽԿԳ մեթոդաբանության կիրառողներին թույլ են տալիս ԽԿԳ իրականացման ընթացքում հնարավորինս խուսափել նմանատիպ սխալներից:

Ի տարբերություն այլ գնահատման մոդելների՝ ԿԽ և ԿՄՄՖ հիմնականում իրականացնում է ԽԿԳ եռափուլ գործընթաց

- ✓ նախապատրաստական
- ✓ տվյալների հավաքագրման
- ✓ վերլուծական

ԽԿԳ եռափուլ գործընթացի ելակետ են հանդիսանում

- Հավաքագրված տվյալները՝ըստ առկա կամ ենթադրյալ ռիսկային գործոնների, որոնք իրենց հերթին կարող են հանդիսանալ որպես մուտքային տվյալներ աղետներին հաջորդող կարիքների գնահատման գործընթացի համար:
- Համայնքի իմացության մակարդակը իր տարածքում հնարավոր վտանգների (աղետների) և կլիմայական ռիսկերի վերաբերյալ:
- Համայնքի ընկալման մակարդակը՝ ունեցած կարողությունները ռիսկերի նվազեցմանն ուղղորդելու վերաբերյալ:
- Համայնքի և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհամաձայնեցված նախաձեռնությունը ռիսկի նվազեցմանը կամ կանխարգելմանը նպաստող գործողությունների/նախագծերի մշակման հարցում:
- Ռիսկերի նվազեցմանը, աղետներին նախապատրաստմանը, կանխմանն ու կանխարգելմանը նպաստող համայնքային զարգացման ծրագրերը կամ նախագծերը:

Որոշ միջազգային կազմակերպություններ/կառույցներ՝ ,Փրկեք երեխաներին», ՅՈՒՆԻՍԵՖ և այլն, ԱՌՆ ոլորտին առնչվող համայնքային ծրագրերի իրականացման համար օգտագործում են ԿԽ ԿՄՄՖ ԽԿԳ մեթոդաբանությունը:

ԿԽ և ԿՄՄՖ ԽԿԳ մոդելն ամբողջական է և ամենանպատակահարմարը տեղայնացման համար:

# ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ՏՄՌԿ)

## *(ՏՄՌԿ) գործառույթը*

Տեղական մակարդակում ռիսկի կառավարումը ԱՌՆ ազգային մշակույթի ձևավորման ուղղությամբ ձեռնարկվող կարևորագույն քայլերից է և նպատակ է հետապնդում նպաստել աղետակայուն (դիմակայուն, այսօր արդեն՝ կայուն զարգացող) համայնքների կայացմանը:

ՏՄՌԿ բաղադրիչներից է Խոցելիության և կարողությունների գնահատման Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Միջազգային Ֆեդերացիայի տեղայնացված և լրամշակված ձևաչափը:

**Մեկնաբանություն**

**Համայնքային մասնակցությունը՝ գլխավոր նախապայման**

*Հատկանշական է, որ ԱՌՆ ոլորտում վերոհիշյալ միջազգային կառույցների կողմից ձեռնարկվող տարբեր ԽԿԳ գործընթացները հիմնական շեշտը դնում են ԽԿԳ իրականացման մեխանիզմների/տեխնիկայի և վերջնական արդյունքի՝ վտանգների/խոցելիության բացահայտման վրա: Հպանցիկ ուշադրություն է դարձվում ԽԿԳ արդյունքում ձևավորված ռիսկի նվազեցման/մեղմացման նախագծերը պլանավորելու գործընթացին: ԱՌՆ համայնքային պլանավորման գաղափարը հիմնականում հանգում է դոնոր կազմակերպությունների կամ այլ աղբյուրներից ռիսկի նվազեցման միջոցառումները իրականացնելու համար ֆինանսական միջոցների հայթայթմանը: Համայնքի մասնակցային չափաբաժինն աղետի կանխարգելման նախագծերի իրականացման գործում շատ հաճախ չի էլ դիտարկվում: Գնահատման գործընթացները, սովորաբար չեն կրում շարունակական բնույթ:*

Տեղական մակարդակում ռիսկի կառավարումը տեխնոլոգիա է, որը կարևոր գիտելիքներ և պրակտիկ գործիքներ է տրամադրում համայնքների անդամներին աղետների ռիսկի բացահայտման, վերլուծության և ռիսկ – զարգացում խնդրին անդրադառնալու համար: Այն նաև ենթադրում է համայնքային կարճաժամկետ/երկարաժամկետ ծրագրերում համապատասխան լուծումների ներառումը: Այս պարագայում հարկ է նշել, որ ՏՄՌԿ ձևաչափը ներառում է ԱՌՆ գործընթացի շարունակականությանը նպաստող բոլոր բաղադրիչները՝ մասնավորապես ԽԿԳ, որի պարբերական կիրառումը հնարավորություն է տալիս նպաստել համայնքային մակարդակում գերակայող վտանգների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանը նպաստող միջոցառումների իրականացմանը:

Համայնքային մասնակցային ԽԿԳ իրականցվում է տվյալների հավաքագրման և վերլուծական գործիքների լայն կիրառման միջոցով, որի արդյունքում

- ***բացահայտվում են*** համայնքին սպառնացող, այդ թվում և կլիմայի փոփոխության հետ կապված վտանգները, համայնքի խոցելիությունը, առկա կարողություններն ու վերջիններիս համադրությունից բխող աղետների ռիսկը,
- ***ձևավորվում են*** համայնքի համար <u>առաջնային, կենսական նշանակություն ունեցող</u>, աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների պլանավորման սկզբունքներն ու մեխանիզմները:

***ԽԿԳ գործընթացը նպաստում է նաև*** համայնքի բնակչության իրազեկության, հմտությունների, գիտելիքների մակարդակի և համայնքում առկա ռեսուրսների բացահայտմանը, որոնք հնարավոր է ուղղել ԱՌՆ նպաստող համայնքահեն միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը:

Ռիսկերի նվազեցմանն ուղղված նախաձեռնություններն ու ծրագրերը անհրաժեշտորեն պետք է քննարկվեն համայնքներում զարգացման պլաններում արտացոլելու նպատակով՝ ըստ զարգացման յուրաքանչյուր ոլորտի համար ռիսկերի և զարգացման փոխազդեցության նկարագրի:

## *ԽԿԳ կիրառվող գործիքներ/միջոցներ*

ԽԿԳ հայաստանյան մոդելն առանձնացել է նաև գործիքների ընտրությամբ՝ մասնավորապես ներառելով բնակչության շրջանում զանգվածային հարցման հարցաթերթիկները (Կլիմայի ռիսկի կառավարում, ԱՌՆ, գենդեր, իրազեկման մակարդակ, արձագանքման կարողություններ, առաջին օգնություն և այլն), որոնք ռիսկի նվազեցմանն ուղղված գործունեության/միջոցառումների արդյունքները գնահատելիս կդրվեն կրկնակի շրջանառության մեջ, ինչը հնարավորություն կտա ստանալ ԱՌՆ միջոցառումների ազդեցության համեմատական պատկերը:

Հայաստանյան փորձի համար ԿԽ ԿՄՄՖ ԽԿԳ հայտնի 14 գործիքներից/մեթոդներից առանձնացվել և ադապտացվել են այն առանցքային գործիքները), որոնց համատեղ կիրառությունը բավարար է ԽԿԳ տվյալ գործընթացի՝ համայնքին սպառնացող հնարավոր վտանգի (ռիսկի) վերհանման համար:

### **«Կողմ» և «դեմ» բացահայտումները**

ՏՄՌԿ ձևաչափի ներդրման/փորձարկման ընթացքում ի հայտ եկան ձևաչափի գործնական կիրառության հետ կապված մի շարք խնդիրներ: Փորձարկման բացահայտումները կարելի է դասակարգել ըստ «կողմ» և «դեմ» փաստարկների:

- Համայնքները, իրականում, ցուցաբերել են հետաքրքրվածություն և շահագրգռվածություն ՏՄՌԿ գործընթացի հանդեպ: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ցուցաբերվել է էական աջակցություն կազմակերպչական և այլ հարցերում: Մասնավորապես ԽԿԳ իրականացնելիս ապահովվել է բնակչության 10–12% մասնակցությունը, որը լավ ցուցանիշ է համարվում միջազգային պրակտիկայում: Համայնքների բնակիչներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ԽԿԳ տվյալների հավաքագրման և վերլուծման ընթացքում: Առանձնապես պետք է նշել ֆոկուս խմբերի հետ իրականացված աշխատանքը՝ հատկապես «մտքերի տարափ» մեթոդը, որի ընթացքում բացահայտվել են ոչ ակնառու խոչընդոտներ ռիսկի նվազեցման գործընթացների համար: Ռիսկերի նվազեցմանն ուղղված նախաձեռնություններն ու ծրագրերը քննարկվել են համայնքներում զարգացման պլաններում արտացոլելու նպատակով՝ ըստ զարգացման յուրաքանչյուր ոլորտի համար ռիսկերի և զարգացման փոխազդեցության նկարագրի: Համայնքների մեծ մասն ընկալում է ԱՌՆ ոլորտում իր մասնակցության և իրազեկված լինելու անհրաժեշտությունը:
- Ինչ վերաբերում է ՏՄՌԿ իրականացման ընթացքում բացահայտված «դեմ»–երին, ապա հիմնականում բոլոր համայնքներում առկա էր՝
  - ԱՌՆ ոլորտի խնդիրների վերաբերյալ աղոտ իրազեկվածությունը և գիտելիքի պակասը,
  - վտանգի/ռիսկի ծագման հանդեպ պատշաճ ուշադրության պակասը, որը հնարավոր է պայմանավորված է սոցիալ–տնտեսական խնդիրներին առաջնահերթություն տալու միտումով,
  - շրջապատող միջավայրի/բնական ռեսուրսների նկատմամբ անտարբերությունն ու անփութությունը, առանձին դեպքերում՝ հանցավոր:

- հատկապես հեռավոր համայնքներում տեղեկատվության վատ հասանելիությունը,
- անվստահությունը նոր/ժամանակատար նախաձեռնությունների նկատմամբ:

Որոշ համայնքներում գոյություն ունեցող պաշտոնական պլանավորման ընթացակարգը չի ներկայացնում համայնքի առջև ծառացած իրական խնդիրները: Պատճառները տարբեր են. հիմնականում ֆինանսական միջոցների / բյուջեի սակավությունն է, իսկ որոշ դեպքերում էլ համայնքների ղեկավարների արագ փոփոխություններն ու ոչ բանիմաց լինելը:

***Եզրակացություն***

Համայնքային այցելությունները, իրականացված ուսումնասիրություններն ու հանդիպում–քննարկումները, ԽԿԳ գործիքների կիրառման, ՏՄՌԿ–ի ներդրման նախնական արդյունքները մեկ անգամ ևս վկայեցին անվտանգության և ԱՌՆ մշակույթի ձևավորման ու ամրապնդման անհրաժեշտությունն ու հրամայականը:

Մինչ օրս իրականացված և ՄԱԶԾ առաջնորդությամբ կյանքի կոչված ԱՌՆ և տեղական մակարդակում աղետների կառավարման լայնածավալ ծրագրերը, որտեղ արդեն իսկ լայն թափ հավաքող Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի՝ ԱՌՆԱՊ, շրջանակներում իրենց մասնակցությունն ու ներդրումն են ունենում ոլորտի համարյա բոլոր շահագրգիռ կառույցները՝ միջազգային ու տեղական, լուրջ հիմք են ստեղծել մեր երկրում միջազգային զարգացումներին համահունչ, նաև տեղական առանձնահատկությունների շեշտադրումներով ու հաշվառումով, իրականացնել նոր ծրագրեր ու նախագծեր, որոնք անխուսափելի կդարձնեն մեր երկրի ընթացքը դեպի աղետակայուն, դիմակայուն իսկ վաղն արդեն՝ կայուն զարգացող համայնք ու պետություն:

Իսկ այդ գործում անուրանալի է Տեղական մակարդակում ռիսկի կառավարման մեթոդոլոգիան, որը ժամանակի, միջազգային նոր զարգացումների, տեղական առանձնահատկությունների նոր բացահայտումների, ԱՌՆ քաղաքականությունների փոփոխությունների հետ կապված անընդհատ փոփոխվելու, նորանալու, հարմարվելու ու հարմարեցվելու միտումներ ունի:

Մեր դիտարկումները կապված՝ հանրային իրազեկման աշխատանքներին կառավարման բոլոր փուլերում, աղետների տեխնածին բնույթի ճանաչման, նաև տեխնածին աղետների ներառման, արդեն ձևավորված ռիսկերի հիմնային գործոնների, նոր ձևավորվող ռիսկերի նախանշանների հաշվառումով կանխարգելման քայլերի, Կայուն զարգացման, Հազարամյակի մարտահրավերների, Կլիմայի փոփոխության կառավարման ծրագրերի ու ԱՌՆ կապի հետ, ուղենշային են, ներառում են նաև 2015 թվականից հետո նախատեսվող նոր զարգացումները: Սակայն Հյոգոյի շրջանակային երկրորդ (2015-2025) ծրագիրն, ինչ խոսք, նոր մոտեցումներ ու նոր խմբագրումներ կառաջադրի:

Արտակարգ ալիքի աշխատանքային խումբն իր խորին երախտագիտությունն է հայտնում Տեղական մակարդակում ռիսկի կառավարման մեթոդոլոգիայի մշակման երկարամյա գործընթացում իրենց ավանդը, ներդրումն ու մասնակցությունն ունեցած բոլոր անձանց ու կազմակերպություններին՝ ՄԱԶԾ ԱՌՆ հարցերով խորհրդական Աշոտ Սարգսյանին, ՄԱԶԾ ԱՌՆ ծրագրի ղեկավար Արմեն Չիլինգարյանին, ՄԱԶԾ ԱՌՆ փորձագետ Սուսան Մնացականյանին, ԱԻՆ ՃԿՊԱ ռեկտոր Համլետ Մաթևոսյանին, Բնապահպանության նախարարության վարչության պետ Համիկ Սարոյանին, Լոռե փրկարարական ջոկատի նախագահ Արմեն Առաքելյանին, Աղետների ռիսկի նվազեցման ազգային

պլատֆորմին՝ շահագրգիռ կողմերի հետ իրականացվող համագործակցությանն ու համակարգմանն աջակցելու համար: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի հայաստանյան գրասենյակներին, «Օքսֆամ», «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպություններին, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի հայաստանյան գրասենյակին, Հայկական Կարմիր խաչի ընկերությանը, «Ապավեն համայնքներին» հասարակական կազմակերպությանը և «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամին՝ ամենաակտիվ մասնակցության և խորհրդատվական օժանդակության համար

Արտակարգ ալիքը ՄԱՋԾ-ի և Վորդ վիժն-ի հետ ԱՌՆԱՊ-ի շրջանակներում, մյուս բոլոր շահագրգիռ կողմերին ներգրավելով, սույն ձեռնարկը կներկայացնի ՀՀ կառավարության հաստատմանը, որից հետո այն օրինակելի-պարտադիր կդառնա համայնքներում ծրագրեր իրականացնող բոլոր կազմակերպությունների համար:

Իսկ այժմ ծանոթացեք ՄԱՋԾ մշակած Տեղական մակարդակում աղետների ռիսկի կառավարման մեթոդոլոգիայի վերախմբագրված տարբերակին:

## ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

*Համառոտ նկարագիր*

| | |
|---|---|
| **ՏՄՌԿ նպատակն է** | **նպաստել աղետակայուն համայնքների կայացմանը Հայաստանում:** |
| **Այն մշակվել է հիմք ընդունելով՝** | • ՀՀ ԱՌՆ ազգային ռազմավարության համապատասխան դրույթները,<br>• Հյոգոյի գործողությունների ծրագրի գերակայություններն ու Հյոգո2–ին ներկայացվող առաջարկների քննարկումները,<br>• ԱՌՆ ազգային համակարգի կարողությունների զարգացման համար նախանշված գերակա ուղղությունները |
| **Հանդիսանում է** | ԱՌՆ մշակույթի ձևավորման ուղղությամբ ձեռնարկվող կարևոր քայլերից մեկը: |

| | |
|---|---|
| **Սույն ձեռնարկը** | **կոչված է ապահովելու ՏՄՌԿ մոդուլի լիարժեք կիրառումը ՀՀ համայնքներում:** |
| **Ձեռնարկի արդիականությունը պայմանավորված է** | • ԱՌՆ ազգային պլատֆորմի (ԱՌՆԱՊ) ռազմավարությամբ տեղական մակարդակում ԱՌՆ աշխատանքներ ծավալելու,<br>• ԱՌՆ միջոցառումների պլանավորման և կազմակերպման համար մատչելի և խորհրդատվական միասնական ձեռնարկ (ձևաչափ) մշակելու և տրամադրելու,<br>• Հյոգոյի գործողությունների ծրագրից բխող ԱՌՆ գործառույթների ապակենտրոնացմանը նպաստելու,<br>• համայնքային զարգացման ծրագրերում ԱՌՆ ինտեգրումն ու փոխհամաձայնեցումն ապահովելու,<br>• համայնքին սպառնացող աղետների ռիսկի հավաստագրման գործընթացը խթանելու և դրանից բխող քայլերի պլանավորումն ու իրականացումը ապահովելու անհրաժեշտությամբ: |

| | |
|---|---|
| **Ձեռնարկը նախատեսված է** | • պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների,<br>• ԱՌՆ ուսումնասիրություններ և նախագծեր իրականացնող, ԱՌՆ ոլորտում ներգրավված կառույցների և կազմակերպությունների,<br>• ԱՌՆ մարզային համակարգողների,<br>• խոցելիության և կարողությունների գնահատում (ԽԿԳ) իրականացնող համայնքային և այլ թիմերի,<br>• ԱՌՆ միջոցառումների պլանավորման պատասխանատուների (որոշում կայացնողների),<br>• ԱՌՆ ոլորտին առնչվող կրթական հաստատությունների և այլ շահագրգիռ կառույցների համար: |

**Ձեռնարկում ներկայացված են**

- Հայաստանին բնորոշ հիմնական աղետների և կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի բնութագրերը,
- ռիսկերը տեղում վերհանելու նպատակով կիրառվող ԽԿԳ ադապտացված մոդելը, ներառյալ անհրաժեշտ գործիքներն ու միջոցները,
- աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված ձեռնարկումներում կլիմայական ռիսկի կառավարման (ԿՌԿ) բաղադրիչի ներառման սկզբունքները,
- ռիսկերի կառավարման ամբողջ գործընթացում գենդերային հավասարության ապահովման մեխանիզմներն ու գործիքները,
- ԱՌՆ ոլորտ տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության ներգրավվածությունը, հետաքրքրվածությունն ու շահագրգռվածությունը խթանող հանրային իրազեկման բաղկացուցչի ներառման հիմունքները,
- ԱՌՆ ուղղված գործառույթներն ու զարգացման ոլորտային պլաններում դրանց ներառման ձևաչափը,

ՏՄՌԿ մոդուլը հանդիսանում է ԱՌՆ ազգային պլատֆորմի կողմից ընդունված և ԱԻՆ–ի կողմից հավանության արժանացած Հայաստանում կիրառվող միասնական ձևաչափ: Այն կարող է լրամշակվել, վերանայվել կամ փոփոխվել, հիմք ընդունելով վերջինիս գործածության առանձնահատկություններն, ինչպես նաև ԱՌՆ և այլ ոլորտների հետագա փորձը, ԱՌՆ ազգային համակարգի և զարգացման ծրագրերի փոխազդեցությունն ու գործողությունների համակարգման անհրաժեշտությունը:

ՏՄՌԿ մոդուլը քննարկվել և համաձայնացվել է ՄԱԿ–ի հայաստանյան գրասենյակի աղետների կառավարման ընդլայնված խմբում՝ ներկայացված ավելի քան 40 միջազգային և տեղական, պետական և ոչ պետական կազմակերպությունների մասնագետներով, ներառյալ ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի փորձագետների խումբը, ՄԱԶԾ ԵԱՊՀ Ճգնաժամերի կանխարգելման և վերականգնման Բրատիսլավայի տարածաշրջանային կենտրոնը, ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան և փրկարար ծառայությունը, ՄԱՄՀ–ն , ԱՀԿ–ն, ՄԱԲՀ–ն, ինչպես նաև ՀԿԽԸ, «Օքսֆամ», «Վորլդ Վիժն Հայաստան», «Ապավեն համայնքներին», Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Հայաստանյան կլոր սեղան» հիմնադրամ, «Լոռէ» փրկարար ջոկատ և այլ կազմակերպություններ:

# 1 ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## 1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| **Աշխարհագրական դիրքը** | Հայաստանը գտնվում է Կովկասյան տարածաշրջանում: Այն արևելքից և հարավ–արևմուտքից սահմանակից է Ադրբեջանին, հյուսիսից՝ Վրաստանին, հարավից՝ Իրանին և արևմուտքից՝ Թուրքիային: Ըստ վարչական բաժանման Հայաստանը բաղկացած է 10 մարզից և մայրաքաղաք Երևանից: Երկրի տարածքը 29,800 $կմ^2$ է, ընդ որում լանդշաֆտը հիմնականում կազմված է բարձրավանդակներից և լեռներից, որոնք միմյանցից անջատված են նեղ դաշտավայրերով: |
| **Բարձրությունը ծովի մակերևույթից** | Հայաստանի տարածքի 77% գտնվում է ծովի մակերևույթից 1,000 – 2,500 մ բարձրության վրա, ընդ որում, միջին բարձրությունը 1,850 մետր է: Ամենացածր վայրը ծովի մակերևույթից բարձր է մոտ 350 մետր է, իսկ ամենաբարձր՝ 4,096 մետր: |
| **Հողային հաշվեկշիռը** | Անտառային ֆոնդին է պատկանում երկրի հողերի 11%–ը, որից անտառածածկ է 9.2%–ը, իսկ գյուղօգտագործման ֆոնդին բաժին է ընկնում ընդհանուր հողային մակերեսի 46%–ը: |
| **Գոտիականությունը** | Հայաստանում առավել ներկայացված էկոհամակարգը տափաստանն է, որը հանդիպում է միջին լեռնային գոտում ծովի մակերևույթից 1,000 – 2,400 մետր բարձրության վրա գտնվող ոչ անտառածածկ լեռնային լանջերում և սանդղավանդներում: Էնդեմիկ և հազվագյուտ բույսերի և կենդանիների շատ տարատեսակներ, ինչպես նաև Հայաստանի բուսական աշխարհի գրեթե կեսը հանդիպում է տափաստանային էկոհամակարգում: |
| **Ջրային ռեսուրսները** | Երկրում կա երկու խոշոր գետային ավազան. Արաքսը՝ հարավ–արևմուտքում և Քուռը՝ հյուսիս–արևելքում: Սևանա լիճը՝ աշխարհի ամենաբարձր քաղցրահամ լճերից մեկը, Հայաստանի ամենամեծ լիճն է, որի ծավալը 33.4 $կմ^3$ է: Սևանա լճից բացի Հայաստանի լեռներում կան շուրջ 100 այլ լճեր: |

| | |
|---|---|
| **Ազգաբնակչությունը** | Հայաստանի Հանրապետության բնակչությունը կազմում է 3 մլն 213 հազար մարդ, որի 48.5%–ը տղամարդիկ են, իսկ 51.5%–ը՝ կանայք[3]: |
| **Բյուջե, ՀՆԱ, Ընդհանուր պարտք** | ՀՀ կառավարության կողմից հաստատված 2014 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսային մասը կազմում է 1 տրիլիոն 272 մլրդ 237 մլն դրամ, եկամտային մասը՝ 1 տրիլիոն 127 մլրդ 400 մլն դրամ, իսկ դեֆիցիտը կազմելու է 110 մլրդ 200 մլն դրամ:<br>Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների 2014 թ. 2–րդ եռամսյակ. ՀՆԱ–ն կազմում է 95106.0 մլն. դրամ (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ 102.3%):<br>Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը 96687.4 մլն. դրամ (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ 107.0%):<br>Արտաքին առևտրաշրջանառությունը 566.5 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ 117.2%):<br>Արտահանում 141.3 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ 114.0%):<br>Ներմուծում 425.2 ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ 118.3%):<br>Միջին ամսական անվանական աշխատավարձը 179717.0 դրամ (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ 109.2%):<br>2014 թվականի հուլիսի 31–ի դրությամբ ՀՀ ընդհանուր պարտքը կազմել է 1 տրլն 837.5 մլրդ դրամ կամ 4.5 մլրդ դոլար, որից արտաքին պարտքը՝ 1.5 տրլն դրամ կամ մոտ 3.8 մլրդ դոլար:<br>Հայաստանում գյուղատնտեսական տարածքների աղետներից ապահովագրման համակարգ չի գործում |

[3] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Հայաստանի պետական վիճակագրական ծառայություն, 2013թ.:

## 1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԲՆԱԿԱՆ ՈՒ ՏԵԽՆԱԾԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ[4]




| Ընդհանուր նկարագիրը | Հայաստանը գտնվում է բնական վտանգների բարձր ռիսկային գոտում և ենթակա է վերջիններիս ազդեցությանը: Համաշխարհային բանկը Հայաստանը դասում է աշխարհի 60 ամենաաղետավտանգ երկրների շարքը[5]: Աշխարհում հայտնի բնական վտանգներից Հայաստանին բնորոշ են շուրջ 110–ը: Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանը բարդ ռելիեֆ ունեցող երկիր է՝ կտրուկ լեռնաշղթաներով, դաշտավայրերով և խիստ մասնատված բարձրության մեծ տատանումների տարածքով (բարձրությունների տարբերությունը ավելի քան 3,500մ է): Հայաստանը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, ուստի այստեղ առկա են գեոֆիզիկական վտանգներին առնչվող նշանակալի ռիսկեր: |
|---|---|

4 Տվյալները վերցված են ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնից:

5 Natural Disasters Hotspot – A Global Risk Analysis, World Bank Report, 2009, http://www.gfdrr.org/docs/Report_Armenia–Disaster_Risk_Reduction_and_Emergency_Management.pdf

| | |
|---|---|
| **Հիմնական վտանգների առկայությունը** | Համաձայն ՀՀ ԱԻՆ տվյալների՝ հանրապետության տարածքի<br>• 100% ենթակա է ուժեղ երկրաշարժերի,<br>• 4,1%՝ սողանքների,<br>• 30%՝ սելավների և հեղեղումների,<br>• 0,5%՝ փլուզումների ու քարաթափումների,<br>• 12% ՝ ցրտահարությունների,<br>• 15% ՝ երաշտի,<br>• 17%՝ կարկտահարման և այլն:<br>Հանրապետության հողատարածքների 80%–ից ավելին ենթակա է էռոզիայի, աղակալման կամ ալկալիացման, գերխոնավության, ջրակալման վտանգների ազդեցության: |
| | |
| **Բնական աղետների սոցիալ–տնտեսական ազդեցությունը** | 1988թ. Սպիտակի երկրաշարժի արդյունքում զոհվեց 25,000 մարդ իսկ 517,000–ը մնացին անօթևան: Սպիտակի երկրաշարժի տնտեսական վնասը գնահատվել է 14,2 միլիարդ դոլար: |
| | |
| | Համայնքների մոտ 28%–ը գտնվում է սողանքավտանգ գոտում: Սողանքավտանգ տարածքները հիմնականում լեռների ստորոտներում և լեռնային տարածքներում են: Մոտ 470,000 մարդ, կամ երկրի ազգաբնակչության 15%–ը ենթակա է այդ վտանգին: Սողանքների պատճառած միջին տարեկան վնասը կազմում է մոտ 10 միլիոն դոլար: 1990–2005թթ.ընթացքում Հայաստանը կորցրեց իր անտառապատ մակերեսի 20%–ը, կամ մոտավորապես 63,000 հեկտար անտառ, որի արդյունքում զգալիորեն մեծացել է սելավների և սողանքների հավանականությունը: |
| | |
| | 2004–2007թթ. ընթացքում սելավները վնաս են հասցրել մոտ 200 բնակավայրերի և հիմնական տրանսպորտային ուղիների 600 տեղամասի: Սելավների հասցրած միջին տարեկան վնասը վերջին չորս տարվա ընթացքում կազմել է 2,9 միլիոն դոլար: |
| | |
| | 2000թ. երաշտից գյուղատնտեսական սեկտորի կորուստները գնահատվել են 66,7մլն ԱՄՆ դոլար, կազմելով գյուղատնտեսական համախառն արտադրանքի 10.1%–ը: |

| | |
|---|---|
| **Կլիմայի փոփոխության ազդեցությունը** | Հայաստանը բնորոշվում է լեռնային խոցելի էկոհամակարգերով, կլիմայի չորայնությամբ, ակտիվ արտածին ու անապատացման գործընթացներով և հաճախակի նկատվող տարերային աղետներով, որոնք երկիրն առավել զգայուն են դարձնում կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերջին տասնամյակների ընթացքում եղանակային և կլիմայական վտանգավոր երևույթների ուժգնությունը և հաճախականությունը աճել է:<br>Օդերևութաբանական դիտարկումների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում վերջին 80 տարիների կտրվածքով դիտվել է տարեկան միջին ջերմաստիճանի աճ 0.85$^0$C–ով և տեղումների նվազում՝ 6–8%–ով: |
| | |

| | |
|---|---|
| **Կլիմայական փոփոխությունների միտումները Հայաստանում** | Ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունները ՀՀ տարածքի տարբեր շրջաններում և տարբեր սեզոններում ունեն տարբեր միտումներ: Երկրի հյուսիս–արևելյան և կենտրոնական (Արարատյան դաշտավայր) շրջանները առավել չոր են դարձել, իսկ հյուսիս–արևմտյան հատվածներում և Սևանա լճի ավազանում տեղումների քանակը վերջին 70 տարվա ընթացքում ավելացել է:<br>Հիդրոօդերևութաբանական վտանգների շարքում Հայաստանը ամենամեծ ազդեցությունը կրում է երաշտներից, վաղ գարնանային ցրտահարություններից, սառը/տաք հոսանքներից, կարկտահարությունից, սելավներից, սողանքներից, ուժեղ քամիներից, մառախուղից և անտառային հրդեհներից, որոնց ուժգնությունը և հաճախականությունը վերջին տարիներին աճել է: |
| | |
| **Կանխատեսումներ** | Հայաստանում կլիմայի փոփոխության տարբեր սցենարներով կատարված հաշվարկների համաձայն 2030, 2070, 2100 թվականների կտրվածքով կանխատեսվում է ջերմաստիճանի նշանակալի և անընդմեջ աճ, հատկապես գարնան ու ամռան ամիսներին: Ջերմաստիճանի աճը ավելի զգալի կլինի Հայաստանի արևմտյան և կենտրոնական շրջաններում (Արարատյան դաշտավայր)՝ 1,1°C մինչև 2030թ., 2,7°C մինչև 2070 թ., 4,4°C մինչև 2100 թ.:<br>Տեղումների կրճատման և ջերմաստիճանի բարձրացման հետևանքով մոտակա 100 տարիների ընթացքում սպասվում է կլիմայական գոտիների շեղում 200–250մ լեռնային պրոֆիլով դեպի վեր: |
| **Տեխնածին վտանգներ** | • ՀՀ տարածքում 2012 թ. մարտի դրությամբ գտնվում է19 պոչամբար<br>• ՀՀ տարածքում առկա է 89 ջրամբար<br>• 23 քիմիապես վտանգավոր օբյեկտ<br>2013թ. ՄԱԿ–ի Զարգացման գործակալության կողմից ՀՀ ԱԻՆ հետ համատեղ իրականացված ՀՀ տարածքում գտնվող ժամկետանց թունաքիմիկատների քանակների և պահպանության պայմանների ուսումնասիրության ար- դյունքում պարզվել է, որ ՀՀ–ում առկա են 71900 կգ ժամկետանց թունաքիմիկատներ, ինչպես նաև՝ Նուբարաշենի թունաքիմիկատների գե- րեզմանոցը՝ 512 տոննա թունաքիմիատով, մոտ 3000մ$^3$ աղտոտված և 1127մ$^3$ խիստ աղտոտված հողերով, որը ենթակա է աղտազերծման:<br>Կենսաբանական ռիսկեր<br>• ՀՀ տարածքի 75%–ը ժանտախտի, իսկ 80%–ը տուլարեմիայի բնական օջախ է, որտեղ մկնանման կրծողների շրջանում մշտապես արձանագրվում են ժանտախտի, տուլարեմիայի, լեպտոսպիրոզի, աղիքային իերսենիոզի էպիզոոտիաներ: Արձանագրվում են մարդկանց տուլարեմիայով հիվանդացության դեպքեր:<br>• Արաքս գետից անջատվում են խոլերայի վիբրիոններ:<br>• ՀՀ տարածքում արձանագրվում են մարդկանց և կենդանիների բրուցելոզի, սիբիրախտի դեպքեր:<br>• Արձանագրվում են ՀՀ համար անսովոր՝ խոզերի աֆրիկյան ժանտախտի դեպքեր:<br>• Պոտենցիալ վտանգ է ներկայացնում թռչնագրիպը:<br>• Արձանագրվում են բույսերի հիվանդացության դեպքեր:<br>• Բնակչության շրջանում արձանագրվում են տնային պայմաններում պատրաստված պահածոներից առաջացած բոտուլիզմի դեպքեր: |

# ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ՁԵՎԱՉԱՓ

| | |
|---|---|
| **ՏՄՌԿ գործառույթը** | Աղետակայուն համայնքների ձևավորման հարցում կարևոր նշանակություն ունի ԱՌՆ մշակույթի ներդրումը: Այս խնդրի լուծման համար փորձարկվել է միջազգային փորձից հայտնի Տեղական մակարդակում ռիսկի կառավարման մոդելը, որպես համայնքներում աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ կիրառվող համապարփակ մոտեցում: Այն բաղկացած է մի շարք բաղադրիչներից, որոնց հաջորդական կիրառումը հնարավորություն է տալիս նպաստել համայնքային մակարդակում աղետների ռիսկի բացահայտմանն ու նվազեցմանը: Դրանք են՝<br>❖ համայնքների հաստատում ու դասակարգում ըստ աղետների ռիսկից դրանց խոցելիության աստիճանի,<br>❖ բնական ու տեխնածին վտանգների, խոցելիության ու կարողությունների բացահայտում և գնահատում,<br>❖ արտակարգ իրավիճակների դիմակայման հարցերով տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության ուսուցում և իրազեկում,<br>❖ բնակչության գիտելիքի ու պատրաստվածության բարձրացման նպատակով՝ հանրային լրարշավների իրականացում, հանրամատչելի տեղեկատվական, ուսուցողական, խորհրդատվական նյութերի պատրաստում և տրամադրում, ԱՌՆ շտեմարանի ստեղծում,<br>❖ աղետների կանխարգելիչ փոքրածավալ ծրագրերի և կլիմայի հարմարվողականության միջոցառումների պլանավորում և իրականացում,<br>❖ համայնքային զարգացման պլաններում ԱՌՆ միջոցառումների ներառում,<br>❖ ԱՌՆ միջոցառումների իրականացում, մոնիթորինգ և գնահատում: |
| | |
| **ՏՄՌԿ մոդուլի հիմնական սկզբունքները** | **ՏՄՌԿ մոդուլի իրականացման էական և պարտադիր սկզբունքներ են հանդիսանում համայնքի**<br>• Հետաքրքրվածությունն ու գիտակցվածությունը<br>• Ընդգրկվածությունն, ու շահագրգռվածությունը,<br>• պատրաստակամությունը ներդնելու սեփական ներուժը ԱՌՆ միջոցառումների պլանավորման և իրականացման գործում,<br>պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ պատասխանատվություն կրելը աղետակայուն համայնքի կայուն զարգացման և, դրա հետ կապված որոշումների ընդունման և իրականացման համար: |

## 2.1. ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Խոցելիության և կարողությունների գնահատումը (ԽԿԳ) ՏՄՌԿ մոդուլի բաղկացուցիչ մասն է և իրականացվում է համայնքի հետ համատեղ՝ նպաստելով աղետների ռիսկի հավաստագրման գործընթացին:

**Այն.**

| | | |
|---|---|---|
| | **1.** | ***բացահայտում է*** համայնքին սպառնացող, այդ թվում և կլիմայի փոփոխության հետ կապված վտանգները, համայնքի խոցելիությունը, առկա կարողություններն ու վերջիններիս համադրությունից բխող աղետների ռիսկը, |
| | **2.** | ***ձևավորում է*** համայնքի համար առաջնային, կենսական նշանակություն ունեցող, աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների պլանավորման սկզբունքներն ու մեխանիզմները, |
| | **3.** | ***նպաստում է*** համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի և համայնքում առկա ռեսուրսների բացահայտմանը, որոնք հնարավոր է ուղղել ԱՌՆ նպաստող համայնքահեն միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը: |
| | **4.** | ***ծառայում է*** համայնքի համար որպես տեղեկատվական հիմնաքար, որպես կարևորագույն նախապայման անվտանգության մշակույթի և արդեն իրազեկված, մոտիվացված և ներգրավված բնակչության միջոցով կայուն զարգացող համայնք ձևավորելու համար: |

| | |
|---|---|
| **Մեթոդի ընտրության հիմնավորումը** | ԽԿԳ իրականացման նպատակով ուսումնասիրվել են Կխ ԿՄՄՖ կողմից ձևավորված փաթեթը, Օքսֆամ, CARE և այլ միջազգային կազմակերպությունների կողմից օգտագործվող ԽԿԳ մեթոդաբանությունները: ԽԿԳ հայաստանյան մոդելի համար հիմք է հանդիսացել Կխ ԿՄՄՖ տարբերակը:<br><br>Հաշվի է առնվել, որ<br>• Կխ ԿՄՄՖ–ն աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ունի շուրջ 15 տարվա ԽԿԳ իրականացման փորձ,<br>• ԽԿԳ այս մոդելը լայնորեն փորձարկվել և կիրառվել է բազմաթիվ աղքատ, զարգացող և զարգացած երկրներում, որը փորձի փոխանակման լայն հնարավորություն է ընձեռում, մասնավորապես, ԽԿԳ աղապտացման համար,<br>• այն ճկուն մոդել է, քանի որ ունի ուսումնասիրության ժամանակ կիրառվող գործիքների և մեթոդների լայն ընտրանի,<br>• Կխ ԿՄՄՖ–ի կողմից բացահայտվել, ի մի են բերվել և դասակարգվել հնարավոր կամ հաճախակի կատարվող սխալներն ու բացթողումներն, ինչպես նաև քաղած դասերը, որոնք ԽԿԳ մեթոդաբանության հետագա կիրառողներին թույլ են տալիս ԽԿԳ գործընթացի ժամանակ հնարավորինս խուսափել նմանատիպ սխալներից: |
| | |
| **Համապարփակ մոտեցման կիրառումը** | Վերոհիշյալ մոդելը համապարփակ դարձնելու նպատակով այն հարստացվել է հետևյալ անբաժան բաղադրիչներով՝<br>• համայնքային մակարդակում աղետներին արձագանքման կարողությունների բացահայտում,<br>• կլիմայական ռիսկի կառավարում (ԿՌԿ) և վերջինիս ինտեգրումը աղետների ռիսկի նվազեցման գործընթացում,<br>• Հանրային իրազեկման բաղադրիչի ներառումը ԱՌՆ գործընթացի բոլոր փուլերում<br>• գենդերային խնդիրների ներառում աղետների ռիսկի նվազեցման գործընթացում,<br>• ԱՌՆ համայնքային միջոցառումների պլանավորման և տեղական զարգացման պլաններում ըստ ոլորտների ներառման կիրառական ձևաչափերի և մեխանիզմների տրամադրում,<br>• մոնիթորինգ և գնահատում: |
| | |

| | |
|---|---|
| **Կիրառվող գործիքների ընտրությունը** | ԽԿԳ ադապտացված մոդելն առանձնացել է նաև գործիքների ընտրությամբ, մասնավորապես ներառելով բնակչության շրջանում զանգվածային հարցման բազմաբնույթ հարցաթերթիկները (ԿՌԿ, ԱՌՆ, գենդեր, հանրային իրազեկում, արձագանքման կարողություններ և այլն), որոնք ռիսկերի նվազեցմանն ուղղված գործունեության արդյունքները գնահատելիս կդրվեն կրկնակի շրջանառության մեջ՝ ինչը հնարավորություն կտա ստանալ ԱՌՆ միջոցառումների ազդեցության համեմատական պատկերը:<br>Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի համայնքների վերաբերյալ կան պետական վիճակագրական, մասնագիտական, սոցիոլոգիական տվյալներ, ինչպես նաև կլիմայական ուսումնասիրություններ և հետազոտություններ, նպատակահարմար է գտնվել ԽԿԳ տվյալների հավաքագրման համար հայտնի 14 գործիքներից / մեթոդներից կիրառել միայն հետևյալը.<br>• երկրորդային աղբյուրներից տվյալների հավաքագրում,<br>• ակնադիտական զննում,<br>• քարտեզագրում,<br>• կիսակառուցվածքային հարցազրույցներ,<br>• քննարկումներ ֆոկուս խմբերում,<br>• սեզոնային օրացույց, պատմական օրացույց/աղյուսակ,<br>• հիմնական դերակատարների ցանցային աղյուսակ (կառավարական և ոչ կառավարական շահագրգիռ կառույցների ցանցը),<br>• զանգվածային հարցում բնակչության շրջանում հարցաթերթիկների միջոցով:<br><br>Մասնավորապես, ընտրվել են այն առանցքային գործիքները, որոնց համատեղ կիրառությունը բավարար է ԽԿԳ տվյալ գործընթացի՝ համայնքին սպառնացող հնարավոր վտանգի (ռիսկի) վերհանման համար:<br>Ի լրումն, որոշ գործիքներ համատեղվել են նաև ԽԿԳ այսպես կոչված «մտքերի տարափ» մեթոդի հետ, հատկապես, հարցման ենթակա փոքրաքանակ խմբերում (օրինակ՝ ֆոկուս խումբ), որը հնարավորություն է ընձեռում կարճ ժամանակահատվածում հավաքագրել տվյալներ և փոխանակել նոր, հետաքրքիր գաղափարներ խնդրո առարկայի վերաբերյալ: |
| | |
| **Իրականացում** | ԽԿԳ իրականացվում է եռափուլ, երաշխավորելով նախապատրաստական, տվյալների հավաքագրման և վերլուծական աշխատանքների իրագործումը, ինչն ուղղված է համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը: |

## 2.1.2. ԽԿԳ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԽԿԳ–ն համայնքային մասնակցային հետազոտական, վերլուծական գործընթաց է, որը բաղկացած է հետևյալ փուլերից.

- ☑ Նախապատրաստական
- ☑ Տվյալների հավաքագրման
- ☑ Վերլուծական

| | |
|---|---|
| **ԽԿԳ իրականացման գործընթացի ելակետ հանդիսանում են՝** | • առկա կամ ենթադրյալ ռիսկային գործոնների վերաբերյալ հավաքված տվյալները, որոնք, կարող են նաև օգտագործվել աղետներին հաջորդող կարիքների գնահատման գործընթացի ժամանակ՝ որպես մուտքային տվյալներ,<br>• համայնքի իրազեկվածության մակարդակը հնարավոր բոլոր տեսակի վտանգների, ռիսկերի (նաև կլիմայի փոփոխության հետ կապված), դրանց նվազեցման ուղիների, համայնքի խոցելիության ու կարողությունների վերաբերյալ,<br>• համայնքի ընկալման մակարդակը առկա կարողությունները ռիսկերի նվազեցմանն ուղղելու վերաբերյալ,<br>• համայնքի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ձեռք բերված փոխհամաձայնությունը աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված գործողություններ ձեռնարկելու վերաբերյալ,<br>• ռիսկի նվազեցմանը նպաստող համայնքային զարգացման ծրագրերը կամ նախագծերը: |

| Ա | ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ |
|---|---|
| **Նպատակը** | Ներկայացնել ԽԿԳ հիմնախնդիրը՝ ելնելով համայնքային / մարզային մակարդակով համագործակցության սկզբունքից և ապահովելով գնահատման ողջ գործընթացի կենսունակությունը կազմակերպչական և այլ առումներով: |
| | |
| **Ձեռնարկվող քայլեր** | ❖ Այցելել մարզային իշխանություններին՝ ներկայացնելու տեղական մակարդակում աղետների ռիսկի նվազեցման ողջ գործընթացի անհրաժեշտությունը, նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները, ներառյալ ԽԿԳ–ն, և ստանալ վերջիններիս համաձայնությունը:<br>❖ Ստեղծել մարզային ԱՌՆ թիմ, ներգրավելով ԱԻՆ փրկարար ծառայության տարածքային վարչության, տարածքային կառավարման, ինչպես նաև խնդրին առնչվող մարզային այլ վարչությունների, հիդրոօդերևութաբանական ծառայության և ԱՌՆ ոլորտում ներգրավված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: |

| | |
|---|---|
| | ❖ Մարզային ԱՌՆ թիմի անմիջական մասնակցությամբ՝<br><br>• կազմել համայնքները ՏՄՌԿ գործընթացում ներգրավվելու ժամանակացույցը՝ առաջնահերթությունը տալով առավել խոցելի համայնքներին,<br>• սահմանել ԱՌՆ տեսանկյունից առավել խոցելի համայնքներն ընտրելու չափանիշները (վտանգներից բարձր խոցելիությունը, հիմնական տնտեսական գործունեության կախվածությունը կլիմայական գործոնից, աղքատության բարձր մակարդակը, գյուղատնտեսական հողերի քայքայումը, արտագաղթը և այլն),<br>• կազմել առավել խոցելի համայնքների ցանկը,<br>• ձևավորել համայնքային ԱՌՆ թիմ և ընտրել ԽԿԳ գործընթացի իրականացման տեղական համակարգող,<br>• հաստատել գործողությունների պլանը (քայլերի հաջորդականություն), ներառելով հետևյալ առաջնահերթ քայլերը՝<br><br>✓ կազմակերպել նախնական այց ընտրված համայնքներ՝ վերստուգելու և հավաստիանալու, որ ընտրությունը կատարվել է ըստ սահմանված չափանիշների,<br>✓ կազմակերպել հանդիպում համայնքի ղեկավարության հետ ներկայացնելու և քննարկելու ԽԿԳ գործընթացի օրակարգը<br>✓ ձևավորել և համաձայնեցնել ԽԿԳ գործընթացին մասնակից<br>✓ նպատակային խմբերի կազմը և անհատ հարցվողների քանակը (ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, ֆոկուս խմբեր և այլն), հնարավորինս ապահովելով տարեցների, կանանց, երեխաների, երիտասարդների մասնակցությունը,<br>✓ հավաքագրել և համակարգել համայնքների վերաբերյալ տվյալներ և տեղեկատվություն երկրորդական աղբյուրներից (2.1.2D, գործիք 1)[6]: |
| **Ակնկալվող արդյունքներ** | • Մարզային պատասխանատուներն ընդունում են ԽԿԳ գործընթացը համայնքային մասնակցության սկզբունքով ձեռնարկելու կարևորությունը և պատրաստ են աջակցել:<br>• Առավել խոցելի համայնքների վերջնական ցանկը հաստատված է:<br>• ԽԿԳ գործընթացի օրակարգը հաստատված է:<br>• ԱՌՆ մարզային և համայնքային թիմերից ԽԿԳ գործընթացի աշխատանքային խմբի անդամներն ընտրված են և տեղեկացված ԽԿԳ գործընթացի օրակարգի վերաբերյալ:<br>• Համայնքների ղեկավարները տեղեկացված են և պատրաստ են աջակցել: |

[6] Համայնքի՝ ըստ համայնքի զարգացման ոլորտների բյուջեի հատկացումների վերաբերյալ հստակ տեղեկությունը պարտադիր է:

| Բ | ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ |
|---|---|
| **Նպատակը** | Վերհանել համայնքին սպառնացող վտանգներն ու ձևավորել վերջիններիս դասակարգումն ըստ գերակայության՝ ապահովելով համայնքի շահագրգիռ մասնակցությունը: |
| | |
| **Ձեռնարկվող քայլեր** | Համայնքի ղեկավարության հետ հաստատել ԽԿԳ իրականացման վերջնական օրակարգը:<br>• Համայնքի ԽԿԳ տեղական համակարգողի հետ միասին անցկացնել համայնքի ակնադիտական զննում, վտանգների, խոցելիության և կարողությունների քարտեզագրում (2.1.2 D, գործիքներ 2 և 3):<br>• Հրավիրել առաջին հավաքը համայնքի բնակիչների հետ նպատակ ունենալով՝<br>✓ ներկայացնել ԽԿԳ գործընթացը,<br>✓ քննարկել և լրամշակել ակնադիտական զննման և քարտեզագրման արդյունքները,<br>✓ քննարկել և լրացնել սեզոնային և պատմական օրացույցները (2.1.2D, գործիքներ 6 և 7),<br>✓ քննարկել կառավարական և ոչ–կառավարական շահագրգիռ կառույցների (2.1.2D, գործիք 8) ուղղակի կամ անուղղակի մասնակցությունը համայնքի սոցիալ–տնտեսական կյանքում և ձևավորել նրանց ցանկը՝ ըստ համայնքի զարգացմանը նպաստող նրանց կարևորության և ազդեցության աստիճանի:<br><br>• Ձեռնարկել կիսակառուցվածքային հարցազրույցներ (2.1.2D, գործիք 4) և զանգվածային հարցում բնակչության շրջանում հարցաթերթիկների միջոցով ( 2.1.2 D, գործիք 9):<br>• Կազմակերպել քննարկումներ ֆոկուս խմբերում (2.1.2 D, գործիք 5),<br>• Հրավիրել 2–րդ հանդիպումը համայնքում նպատակ ունենալով՝<br>✓ համատեղ քննարկել հավաքագրված տվյալները,<br>✓ ձևավորել համայնքի խոցելիության ու կարողությունների վերաբերյալ տեսակետ աղյուսակների միջոցով՝ գերակայող վտանգների հաջորդականությամբ ( 2.1.2 D, վերլուծական աղյուսակներ): |
| | |
| **Ակնկալվող արդյունքներ** | • Տեղական ինքնակառավարման մարմիններն աջակցում են ԽԿԳ իրականացման կազմակերպչական խնդիրներին:<br>• Համայնքի բնակիչներն ընդունում են ԽԿԳ ձեռնարկելու անհրաժեշտությունը, որն ուղղված է համայնքին սպառնացող վտանգների վերհանմանն ու ռիսկերի վերաբերյալ համայնքի իրազեկվածության բարձրացմանը:<br>• Համայնքի և ԽԿԳ իրականացնող խմբի միջև առկա է փոխըմբռնում:<br>• Համայնքը մասնակցում է ԽԿԳ գործընթացին, այն է. տվյալների հավաքագրում և հետազոտում, համայնքին սպառնացող վտանգների բացահայտում, համայնքի խոցելիության և կարողությունների համադրության ձևավորում ԱՌՆ համատեքստում:<br>• Համայնքի առաջարկությունները կապված համայնքին սպառնացող<br>• վտանգների առաջնայնության հետ քննարկվում և հաշվի են առնվում հետագա վերլուծության համար: |
| | |

| Գ | ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| **Նպատակը** | Համայնքի հետ համատեղ մշակել ԱՌՆ նպատակաուղղված, ավարտուն և փոխհամաձայնեցված գործողությունների համակարգ, որը համահունչ կլինի ինչպես համայնքի պահանջներին, այնպես էլ ԽԿԳ իրականացրած խմբի մասնագիտական մոտեցումներին: |
| **Ձեռնարկվող քայլեր** | ԽԿԳ իրականացնող խումբը՝<br>• ամփոփում, վերլուծում, մշակում և համակարգում է հավաքված տվյալները (2.1.2 D, Տրիանգուլյացիա) և, ըստ բացահայտված վտանգների առաջնահերթության, առաջարկում է ԱՌՆ ուղղորդված անհրաժեշտ գործողությունների պլան,<br>• վերադառնում է համայնք՝ քննարկելու վերլուծության արդյունքները, և ըստ բացահայտված վտանգների առաջնահերթության աջակցելու համայնքին՝ ձևավորել ռիսկերի նվազեցմանը նպաստող իր տեսակետը՝ համայնքի կարողությունների հզորացմանը կամ խոցելիության նվազեցմանն ուղղված հնարավոր ձեռնարկումների վերաբերյալ: |
| **Ակնկալվող արդյունքներ** | • Բարձրացել է համայնքի իրազեկվածությունը իրական և առաջնային, թաքնված ու նոր ձևավորվող ռիսկերի վերաբերյալ:<br>• Համայնքը ԽԿԳ իրականացրած խմբի հետ եկել է փոխհամաձայնության համայնքին սպառնացող վտանգների վերաբերյալ:<br>• Համայնքը պատրաստակամ է կատարել իր ներդրումը ռիսկի նվազեցմանը նպաստող միջոցառումներում:<br>• Համայնքը կազմել է ԱՌՆ նպաստող նախագծերի իրականացմանը հնարավոր աջակցող շահագրգիռ կազմակերպությունների կամ հիմնական դերակատարների ու մասնավոր ներդրողների ցանկը:<br>• Համայնքը պատրաստակամ է ԱՌՆ նպաստող նախագծերը ընդգրկել համայնքային զարգացման պլանի մեջ:<br>• ԽԿԳ իրականացրած խումբը մարզային ԱՌՆ համակարգող աշխատանքային խմբին և համայնքին տրամադրել է ԽԿԳ համալիր զեկույց, ներառյալ արդյունքների ամփոփագիրը և առաջարկությունները: |

| Դ | **ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**<br>1. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ |
|---|---|
| ՆՊԱՏԱԿԸ | Երկրորդային աղբյուրներից հավաքված տվյալները անհրաժեշտ են ԽԿԳ գործընթացը ձեռնարկած խմբի համար, քանի որ տրամադրում են նախնական տեղեկատվություն համայնքի մասին: Համայնքի մասին երկրորդային աղբյուրներից տվյալները հավաքվում և համակարգվում են նախորոք՝ ԽԿԳ նախապատրաստական փուլի ընթացքում: Մասնավորապես դրանք կարող են լինել պետական կառույցների կողմից հրապարակված պաշտոնական տվյալներ, քարտեզներ, համայնքում իրականացված ծրագրերի վերաբերյալ այլ կազմակերպությունների հաշվետվություններ, սոցիալական ինստիտուտների հետազոտություններ, մարդահամարի տվյալներ, տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվություններ, ԶԼՄ հրապարակած նյութեր, գրքեր, ինտերնետային կայքեր և այլն:<br>Օրինակ, համայնքի կլիմայական բնութագրի, ինչպես նաև դիտվող վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների մասին տեղեկատվություն կարելի է ստանալ ԱԻՆ հիդրոօդերևութաբանական ծառայությունից կամ մոտակա կայանից: |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | ԽԿԳ գործընթացի վերլուծական փուլում համայնքին սպառնացող վտանգների, խոցելիության, ռիսկերի, ռեսուրսների վերաբերյալ երկրորդական աղբյուրներից քաղված տվյալները կարևորվում են հետագա համադրման և վերլուծության համար (տես՝ տրիանգուլյացիա):<br>Ոչ պակաս կարևոր է նախնական տեղեկատվություն ունենալ համայնքի զարգացման պլանների և ծրագրերի վերաբերյալ, ինչն իր հերթին, ազդեցություն կունենա ԱՌՆ միջոցառումների հետագա պլանավորման վրա:<br>Չնայած միշտ չէ, որ հնարավոր է ունենալ երկրորդական աղբյուրների տվյալների լայն ընտրություն, այնուամենայնիվ, նույնիսկ նվազագույն տեղեկատվությունն անհրաժեշտ է դիտարկել: |

| | **ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**<br>2. ԱԿՆԱԴԻՏԱԿԱՆ ԶՆՆՈՒՄ |
|---|---|
| ՆՊԱՏԱԿԸ | Ակնադիտական զննումները իրականացվում են ԽԿԳ խմբի անդամների կողմից համայնք մտնելու առաջին իսկ պահից, նպատակ ունենալով գրանցելու այն ամենը, ինչը վաղուց, գուցե և, սովորական է դարձել համայնքի բնակիչների համար, բայց, որոշակի առումով, վտանգ կամ ռիսկ է պարունակում և անմիջապես գրավում է նորեկի ուշադրությունը:<br>Անմիջական/առաջնային տպավորությունը համայնքից, այնտեղ տեղակայված շենք/շինություններից, մարդկային ռեսուրսներից, տեղանքից, հողօգտագործումից հանդիսանում է արդյունավետ միջոց հետագա վերլուծության համար: Հաճախ համայնքի բնակիչը կարող է ուշադրություն չդարձնել առկա վտանգավոր առարկաների կամ երևույթների վրա, քանի որ դրանք իրեն շրջապատող ամենօրյա առարկաներն ու երևույթներն են: |

| | |
|---|---|
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Ակնադիտական զննումները կատարելիս ԽԿԳ խումբը տիրապետում է այնպիսի տեղեկատվության, որը չկա և ոչ մի պաշտոնական կամ այլ աղբյուրներում. առարկաներ, մարդիկ, երևույթներ, հարաբերություններ և այլն: Հավաքված տվյալները բավական կարևոր են հետագա վերլուծության համար, մասնավորապես, համայնքի համար՝ համայնքի մասնակցությամբ աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող ծրագրերի ձևավորման ընթացքում:<br>Հավաքված տվյալները, սովորաբար, բազմաբնույթ են և, պարզապես, տեղեկատվություն են պարունակում համայնքի ֆիզիկական տվյալների և կենսագործունեության վերաբերյալ:<br>Օրինակ կարող է ծառայել համայնքի բնակիչների տրամադրությունը և հարաբերությունները միմյանց հետ, գյուղում աղբահանության կարգավորման, ջրային ռեսուրսների կառավարման հարցերը, համայնքի հիմնական եկամտի աղբյուրները կամ առկա ռիսկի գործոնները, որը կստիպի մարդկանց համախմբվել դրանք նվազեցնելու նպատակով: |
| | |

*ՕՐԻՆԱԿ*

| ԱԿՆԱԴԻՏԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ | |
|---|---|
| **Առարկաներ, երևույթներ, մարդիկ, հարաբերություններ** | **Նկարագիր** |
| **Ինֆրակառուցվածք** | |
| Հիմնական շինություններ | Կառույցի տիպը՝ նոր/հին, ամուր/կիսաքանդ, այլ |
| Ճանապարհներ՝ հիմնական, ներքին | Կա/չկա, քանդված/կիսաքանդ /սարքին, այլ |
| Կոյուղի | Գործող/չգործող, վնասված/մասամբ գործող, այլ |
| Աղբահանություն | Կա/չկա, մասամբ, համատարած, հակասանիտարական վիճակ, կուտակումներ կենսական/կարևոր վայրերում, այլ |
| **Կենսական կարևոր համակարգեր** | |
| Դպրոց, ուսումնական այլ հաստատություն | Կառույցի տիպը, նոր/հին, ամուր/կիսաքանդ, գործող/չգործող, մուտքի/ելքի մեկ դուռ, ուսուցչական կազմով համալրված լինելու աստիճանը, ծանրաբեռնվածությունը, աշակերտների/ ուսանողների առկայությունը, այլ |
| Բուժարան, հիվանդանոց | Կառույցի տիպը, նոր/հին, ամուր/կիսաքանդ, գործող/չգործող, բուժանձնակազմի առկայությունը, մատուցվող ծառայությունները, ծանրաբեռնվածությունը, այլ |
| Գյուղապետարան | Կառույցի տիպը. նոր/հին, ամուր/կիսաքանդ, կառույցի դիրքը՝ հասանելի/հարմար/անվտանգ/վտանգավոր, այլ |
| Տրանսպորտ, էներգակիր, ջրային ռեզերվուար, հաղորդակցության և կապի համակարգ կամ միջոց, ոստիկանություն, հրշեջ փրկարարական ջոկատ, այլ | Կա /չկա, գործող / մասամբ գործող / չգործող, այլ |

| Ռիսկային տարածքներ – հանգստի, ժամանցի, հանրային հավաքի վայրեր | |
|---|---|
| Սրճարան, սննդի վայր | Բացօթյա շինություն, փակ միջավայր, ազատ մուտքի / ելքի հնարավորություն, այլ |
| Խաղահրապարակ, մարզադաշտ | Կա / չկա, լավ / վատ վիճակ, մասամբ գործող, այլ |
| Վառելիքի, գազի լցակայան | Կա/չկա, հակահրդեհային միջոցների առկայություն, գործող / մասամբ գործող, բացակայում են, այլ |
| Ջրափոսեր, չհոսող ջուր | Խորը / ճահճացած / լճացած, այլ |
| Եկեղեցի (այլ պատմամշակութային շինություններ, կամուրջներ ) | Գործող / չգործող, կիսաքանդված / վերանորոգված, վերանորոգման ենթակա, մուտքի / ելքի մեկ դուռ, այլ |

| ԱԿՆԱԴԻՏԱԿԱՆ ԶՆՆՈՒՄՆԵՐ | |
|---|---|
| **Առարկաներ, երևույթներ, մարդիկ, հարաբերություններ** | **Նկարագիր** |
| **Սոցիալ–տնտեսական** | |
| Տուն | Ամուր/լավ/վատ/կիսաքանդ,վտանգավոր գոտում, ենթակառույցներ – անասնապահական, ջեռուցման, պահեստ, բաղնիք, այլ |
| Տների մերձակա շրջակայքը | Մաքուր/կեղտոտ, անվտանգ, անխնամ/խնամված, այլ |
| Ընտանիքի կառուցվածքը / կենսական պայմանները | Մեծ ընտանիք (բազմասերունդ՝ պապ, տատ, երեխաներ), խնամված/անխնամ երեխաներ, հաշմանդամ ունեցող, միայնակ մայրեր, կանայք և տարեցներ, այլ |
| Բակում առկա շինություններ | Մեկից ավելի, իրար շատ մոտ կառուցված/իրարից հեռու, ընտանի կենդանիների ապրելու վայրին մոտ/ հեռու, այլ |
| **Կենսապրելաձևը** | |
| Առօրեական | Հիմնական աշխատանք/զբաղվածություն, պարապուրդ/ գործազրկություն, այլ |
| Սնունդ | Սննդակարգում հացամթերք/կաթնամթերք/մսեղեն այլ, կամ բացակայում են/պակաս են առօրյա սննդակարգից |
| Գյուղի բնակիչների հարաբերությունները/վարվելաձևը/ վերաբերմունքը միմյանց նկատմամբ , այլ | Իրար սատարող/աջակցող, հարգալից, անտարբեր, այլ |
| Կարողությունները | Ավտոմեքենա/այլ տեղաշարժման միջոցներ, ընտանի կենդանիներ/կաթնատու/մսատու, շուկա արտահանելու ապրանքներ/գյուղմթերք, այլ եկամուտներ |
| Խոցելիությունը | Ցածր/անփոփոխ եկամուտ/սոցիալական նպաստ, մասնակի/բացակայող ջեռուցման համակարգ, այլ |
| Հմտությունները | Առաջին օգնության ցուցաբերում, այլ |

| | |
|---|---|
| Տուն / ապրելու պայմանները | Տունը՝ միահարկ/բազմասենյակ/այլ, կահավորված՝ լավ/վատ/մասնակի/հին իրերով/այլ, տան ներքին հարդարանքը հին/վերանորոգված/ հակասանիտարական, այլ |
| Ոչ ֆորմալ համայնքային լիդերներ / հեղինակություններ / հարգված անձնավորություններ | Առկա են/բացակայում են, ձեռնարկող են/աջակցող, այլ |

| | ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ<br>3. ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ |
|---|---|
| ՆՊԱՏԱԿԸ | Քարտեզագրումը ԽԿԳ տվյալների հավաքագրման փուլի այն գործիքներից է, որով ձևավորվում են աղետավտանգ ու ռիսկային տեղանքների ու վայրերի, ինչպես նաև համայնքի հզորության, ռեսուրսների ու խոցելիության 3 հիմնական քարտեզները:<br><br>Քարտեզագրումը ԱՌՆ գործառույթում հիմնականում ակնկալում է համայնքի համար ակնառու դարձնել ռիսկային տեղանքները, որոնք առօրյա կյանքում կամ տեսանելի չեն, կամ էլ անուշադրության են մատնված: |
| | |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Քարտեզագրումը իրականացվում է ԽԿԳ խմբի անդամների և տեղական համակարգողի մասնակցությամբ: Քարտեզագրումը թեև ժամանակատար է, այնուամենայնիվ այն շոշափելի և դյուրին կիրառվող գործիք է, և համայնքի համար ստեղծում է իր կարողությունների, հզորությունների և վտանգների ու ռիսկերի համադրման համար ակնառու հնարավորություն:<br><br>Քարտեզագրման արդյունքները քննարկվում և լրամշակվում են համայնքի հետ համատեղ՝ վերջինիս հետ առաջին հանդիպման ժամանակ (ԽԿԳ 2–րդ փուլ՝ տվյալների հավաքագրում և հետազոտում): |
| | |


Ակումբ
Համայնքապետարան
Փլուզում
Վնասված կամուրջներ
Shikahogh
© 2011 Google
Image © 2011 DigitalGlobe
Google earth


Մրղանք
Ոռոգման ջրի խողովակ
Սխալ կառուցված գաբիոններ
Ափամերձ ցածր հատվածներ
Գետ
Ափամերձ ցածր հատվածներ
Ափամերձ ցածր հատվածներ

## ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ
### 4. ԿԻՍԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

| | |
|---|---|
| ՆՊԱՏԱԿԸ | Կիսակառուցվածքային հարցազրույցը ուղղորդվող հարցազրույցի տեսակ է, որը հաճախ կիրառվում է լրագրողների կողմից որոշակի նպատակային տեղեկատվություն ստանալու կամ տալու համար: |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Կիսակառուցվածքային հարցազրույցի ընթացքում շոշափվում են ԽԿԳ հիմնական թեմաները: ԱՌՆ դեպքում, մասնավորապես, շոշափվում են աղետների, վտանգների, խոցելիության, տեղական ինքնակառավարման մարմինների արձագանքման կարողությունների և այլ թեմաներ: Անհրաժեշտության դեպքում որոշակի հարցեր կարող են նաև ձևավորվել և հարցադրվել անմիջապես հարցազույցի ընթացքում:<br><br>Կիսակառուցվածքային հարցազրույցը հարցաշար չէ և վարվում է կոնկրետ թեմատիկայի շուրջ ազատ քննարկման ու մտքերի փոխանակման միջոցով: Հարցազրույցից ակնկալվում է ստանալ ոչ միայն հարցերի պատասխանները, այլ նաև դրանց հետ առնչվող մեկնաբանությունները: |

Պարտադիր է, որ կիսակառուցվածքային հարցազրույց վարողներն ունենան նմանատիպ զրույցների վարման անհրաժեշտ փորձ:

Գոյություն ունի կիսակառուցվածքային հարցազրույցի վարման մի քանի մոտեցում: Դրանք են՝

- Հարցազրույց տեղական համակարգողի հետ ,
- Անհատական հարցազրույցներ. այս մոտեցումը արդյունավետ է այն դեպքում, երբ քննարկվող թեման խիստ անհատական է, և դժվար է խոսել դրա մասին ամբողջ խմբի ներկայությամբ,
- Խմբակային հարցազրույցներ. այս հարցազրույցները չեն կրում պարտադիր բնույթ և վարվում են մասնագիտական ուղղորդվածություն ունեցող խմբերի հետ, օրինակ՝ բժիշկների, բուժանձնակազմի և այլն: Սովորաբար նման մեթոդը կիրառվում է, եթե համայնքում առկա են անհատի հետ առնչվող որոշակի դժվար բարձրաձայնելի խնդիրներ, օրինակ՝ առողջական: ԱՌՆ առնչվող խնդիրները սովորաբար խմբակային հարցազրույցների վարման կարիք չունեն, քանի որ ֆոկուս խմբերի հետ ունեցած քննարկումները լիովին բավարար են:

| | ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ<br>5. ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐՈՒՄ |
|---|---|
| ՆՊԱՏԱԿԸ | Ֆոկուս խմբերը ձևավորվում են համայնքի այն անհատներից, ովքեր պատկանում են որոշակի մասնագիտական, տարիքային, սեռային կամ սոցիալական խմբերի (վարչական աշխատողներ, բուժանձնակազմ, ուսուցիչներ, ֆերմերներ, կանայք և այլն):<br><br>Ֆոկուս խմբերը ձևավորվում են ԽԿԳ նախապատրաստական փուլում ԽԿԳ գործընթացին աջակցող տեղական համակարգողի և համայնքի ղեկավարի անմիջական օգնությամբ:<br><br>Ֆոկուս խմբերում քննարկումները նպատակ ունեն վեր հանելու մասնակիցների իրազեկվածությունը, տեսակետը համայնքի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ: Այս խմբերում քննարկումները, որպես օրենք, նպաստում են առանձնահատուկ տեղեկությունների հավաքագրմանը՝ պայմանավորված այս կամ այն խմբին պատկանելությամբ և կոնկրետ խմբի մասնավոր շահերով: Քննարկումների ընթացքում նաև բացահայտվում է իրական ռիսկերից այդ խմբերի խոցելիության աստիճանը: |
| | |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Աշխատանքը ֆոկուս խմբերի հետ ԽԿԳ գործընթացում շատ կարևորվում է, քանի որ արդյունքում ձևավորվում են համայնքի զարգացման որոշակի ոլորտների (գյուղատնտեսություն, շրջակա միջավայր, ջրամատակարարում և սանիտարիա, բնակարանաշինություն, այլ) խոցելիության պատկերը և ռիսկերը, ինչպես նաև համատեղ քննարկվում են համայնքի համար կենսական նշանակության խնդիրների լուծմանն ուղղված հնարավոր ձեռնարկումներ: |
| | |

| | ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ<br>6. ՍԵԶՈՆԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՅՑ |
|---|---|
| ՆՊԱՏԱԿԸ | Սեզոնային օրացույցը աղյուսակային մեթոդ է և հնարավորություն է տալիս նկարագրել համայնքում մեկ տարվա ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները:<br><br>Սեզոնային օրացույցը ցույց է տալիս տարվա ընթացքում տեղի ունեցած աղետները, դրանց ազդեցությունը, ներառյալ կլիմայական փոփոխության հետ կապված ազդեցությունը, սոցիալ–տնտեսական ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները, հիվանդությունների բռնկման ժամանակահատվածը և այլն: |
| | |
| **ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ** | Սեզոնային օրացույցը անհրաժեշտ է լրացնել համայնքի հետ միասին: Այն հնարավորություն է տալիս տեսնելու վտանգները և գնահատելու ռիսկերի հաճախականությունը համայնքի բնակիչների տեսանկյունից:<br><br>Հետագա վերլուծության համար սեզոնային օրացույցի տվյալները բավական արժեքավոր են, քանի որ համադրվելու են պաշտոնական վիճակագրության, ինչպես նաև ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ բոլոր այն տվյալների հետ, որ կհավաքի ԽԿԳ թիմը համայնքի հետ համատեղ աշխատանքի ընթացքում: |
| | |

| | |
|---|---|
| **ՍԵԶՈՆԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՅՑԻ ԼՐԱՑՄԱՆ ՁԵՎԸ** | Սեզոնային օրացույցը աղյուսակ է, որի յուրաքանչյուր ամսվան համապատասխանող սյունյակի վանդակները լրացվում են x սիմվոլով միայն այն դեպքում, եթե տվյալ տողում ներկայացված իրադարձությունը իրոք տեղի է ունեցել:<br>Օրինակ՝ x սիմվոլով կնշվի հոկտեմբեր ամսվան և «բարձր եկամուտներ» տողին համապատասխանող վանդակը, եթե իրոք այդ ամսվա ընթացքում համայնքի բնակիչը ունեցել է բարձր եկամուտ: Հակառակ դեպքում վանդակը կմնա դատարկ:<br><br>Սեզոնային օրացույցում ընդգրկված տողերը ենթակա են փոփոխության, այսինքն կարող են ավելացվել/պակասեցվել համայնքի բնակիչների կողմից, եթե նրանք գտնեն, որ «սոցիալ–տնտեսական», «առողջապահություն», «վտանգներ / աղետներ» բաժիններում ներկայացված տողերը սեզոնային լրիվ պատկերը չեն տալիս: |
| | |

*Օ Ր Ի Ն Ա Կ*

## ՍԵԶՈՆԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՅՑ –ԱՂՅՈՒՍԱԿ

| ՍԵԶՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ / ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՅՈՒՆՎԱՐ | ՓԵՏՐՎԱՐ | ՄԱՐՏ | ԱՊՐԻԼ | ՄԱՅԻՍ | ՀՈՒՆԻՍ | ՀՈՒԼԻՍ | ՕԳՈՍՏՈՍ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | ՆՈՅԵՄԲԵՐ | ԴԵԿՏԵՄԲԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սոցիալ–տնտեսական | | | | | | | | | | | | |
| Բարձր եկամուտներ | | | | | | | | x | x | x | | |
| Ցածր եկամուտներ | | x | x | x | x | | | | | | | |
| Արտագաղթ | | | | | | x | x | | | x | | |
| Արտագնա աշխատանքներ | | | | | | x | x | x | x | x | | |
| Վերադարձ | x | | | | | | | | | | | x |
| Բերքահավաք | | | | | | | x | x | x | x | | |
| Պարապուրդ | x | x | | | | | | | | | x | x |
| Անասունների մորթ | | | | | | | | | x | x | x | x |
| Սերմնացան | | | x | x | | | | | x | x | | |
| Առատ անձրևներ | | | x | x | x | | | | | | | |
| Գողություն | | | | | | | | x | x | | | |
| Առողջապահություն | | | | | | | | | | | | |
| Գրիպի համաճարակ | x | | x | | | | | | | | x | x |
| Աղիքային ինֆեկցիաներ | | | | | | | | x | | | | |
| Տուբերկուլյոզ | | | | | | | | | | | | |
| Վտանգներ | | | | | | | | | | | | |
| Կարկուտ | | | x | | x | | | | | | | |
| Ջրհեղեղ | | | | x | | | | | | | | |
| Երաշտ | | | | | | | | | | | | |
| Քարաթափություն | | | | | | | | | | | | |
| Անտառային հրդեհներ | | | | | | | | | | | | |
| Հրդեհ | | | | | | | | | | | | |
| Այլ երևույթներ | | | | | | | | | | | | |
| Ցրտահարություն | | | | | | | | | | | | |
| Անսանահամաճարակներ | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |

| | ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ<br>7. ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ |
|---|---|
| ՆՊԱՏԱԿԸ | Բացահայտել տասնամյակ առ տասնամյակ համայնքի զարգացման վրա ազդեցություն ունեցած երևույթները և ակնառու փոփոխությունների միտումը: |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Այս մեթոդը լայն հնարավորություն է տալիս ստանալ անցյալում տեղի ունեցած իրադարձությունների պատկերը և անել համապատասխան եզրահանգումներ, որոնք կարող են օգտակար լինել համայնքային մակարդակով ռիսկերի նվազեցման ծրագրերի պլանավորման գործընթացի ժամանակ: |
| ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑԻ ԼՐԱՑՄԱՆ ՁԵՎԸ | Օրացույցը լրացվում է համայնքի անդամների հետ միասին, ապահովելով համայնքի բնակչության բոլոր շերտերի համաչափ ներկայացուցչությունը, հաշվի առնելով գենդերային հավասարության սկզբունքը և համայնքի մեծահասակների, ինչպես նաև, երիտասարդության մասնակցության անհրաժեշտությունը: Անցած տասնամյակների հետ կապված հստակ տեղեկատվության տրամադրման հարցում համայնքի մեծահասակները առանձնահատուկ դեր ունեն, քանի որ նրանց հաղորդած տեղեկություններն անփոխարինելի են:<br><br>Աղյուսակում նշված սյունյակները կարող են, անհրաժեշտության դեպքում, ավելացվել ըստ համայնքում տեղի ունեցած փոփոխությունների: Օրինակ՝ կրթական բնագավառը, ճանապարհաշինությունը, հողատարածքները և այլն, եթե դրանք եղել են անցյալում և ենթարկվել փոփոխությունների:<br><br>Օրացույցը լրացնելու համար յուրաքանչյուր ոլորտի համար կարելի է ընտրել որոշակի սիմվոլներ և վանդակները լրացնել այնպես, ինչպես նշված է ստորև բերված աղյուսակում: |

## ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ

| Ժամանակահատված | Բնակչություն | Տուն / շինություն | Ծառեր / անտառներ | Անասուններ / հող | Առողջապահություն | Ենթակառույցներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1970 |  |  |  |  | Աղիքային վարակներ / տուբերկուլյոզ |  |
| 1980 |  |  |  |  | մալարիա / հեպատիտ Ա |  |
| 1990 |  |  |  |  | ??????? |  |
| 2010 |  |  |  |  | Գրիպի համաճարակ |  |

## ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

Պատմական ուրվագիծը վեր է հանում բոլոր այն առանձնահատուկ երևույթներն ու դեպքերը, որոնք իրենց ազդեցությունն են թողել համայնքի կյանքի և զարգացման վրա:

Պատմական ուրվագծի և պատմական օրացույցի համադրությունը հնարավորություն է ընձեռում բացահայտել տարիների ընթացքում շրջակա միջավայրի և համայնքի կենսագործունեության միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապը և հասկանալ ինչպես համայնքի, այնպես էլ վտանգավոր երևույթների զարգացման միտումները:

Պատմական օրացույցն ու պատմական ուրվագիծը կարող են լրացվել նաև պատմական դեպք–փաստերով, արխիվային փաստաթղթերով,ավանդապատումներով կամ պատմիչների թողած նկարագրություններով, եթե այդպիսիք կան, ինտենսիվ ռիսկերի իրական պատկերը գնահատելու նպատակով:

| Տարի | Նկարագրություն |
|---|---|
| 1970 | Իրանից հայ ընտանիքներ տեղափոխվեցին Հայաստան: |
| 1972 | Դպրոցի նոր շենքը հանձնվեց շահագործման: |
| 1977 | Համայնքի ֆուտբոլի թիմը գրավեց առաջին տեղը շրջանում: |
| 1980 | Հին եկեղեցին վերանորոգվեց: |
| 1986 | Համայնքի հիմնական ներքին/արտաքին ճանապարհները վերանորոգվեցին: |
| 1988 | Երկրաշարժ: |
| 2000 | Երաշտը ոչնչացրեց բերքի 70%: |

| | ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ<br>8. ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ |
|---|---|
| ՆՊԱՏԱԿԸ | Բացահայտել և դասակարգել կառավարական և ոչ կառավարական շահագրգիռ այն կառույցները, խմբերը, անհատներին, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեն կամ ունեցել են համայնքի սոցիալական կյանքի և զարգացման ոլորտների վրա: Հիմնական շահագրգիռ կողմերը որոշվում են համայնքի կյանքում ունեցած իրենց կարևորության և ազդեցության աստիճանով: |
| | |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | ԽԿԳ գործընթացում կարևորվում է շահագրգիռ կողմերի մասին տվյալների հավաքագրումը, քանի որ ԱՌՆ միջոցառումների ու նախագծերի իրականացման ժամանակ կարող է առաջանալ նրանց մասնակցության, աջակցության կամ միջամտության անհրաժեշտությունը:<br><br>Հիմնական շահագրգիռ կողմերը գնահատվում են 1–ից 5 միավորով՝ ըստ համայնքի վրա ունեցած ազդեցության և համայնքի համար կարևորության: Գնահատականները լրացվում են աղյուսակում: Ազդեցությանն ու կարևորությանը տրված գնահատականները միջինացվում են և համեմատվում: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս համայնքին կողմնորոշվել հիմնական շահագրգիռ կողմերի ընտրության հարցում՝ ԱՌՆ միջոցառումներին հնարավոր մասնակցություն կամ աջակցություն ցուցաբերելու համար: |

## ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՑԱՆՑԻ ԱՂՅՈՒՍԱԿ

| Կառույցներ/խմբեր/անհատներ | Ազդեցություն/ մասնակցություն | Միջինը | Կարևորություն | Միջինը |
|---|---|---|---|---|
| Տեղական ինքնակառավարման մարմիններ | (4–5–2–3–4–5) | 3.7 | (4–5–2–3–5–4) | 3.7 |
| Գյուղատնտեսական ոլորտի միջազգային կազմակերպություն | (4–4–5–5–2) | 4 | (4–4–5–5–2) | 4 |
| Գյուղատնտեսության նախարարություն | (2–3–3–4–3) | 3 | (5–5–5–4–5) | 4.8 |
| Արտակարգ իրավիճակների նախարարություն | (3–4–5–3–4) | 3.8 | (5–5–4–5–5) | 4.8 |
| Բնապահպանության նախարարություն | (3–4–4–5–3) | 3.8 | (5–5–4–5–4) | 4.6 |
| Մարզային փրկարարական վարչություն | (4–4–4–4–5) | 4.2 | (5–5–5–4–5) | 4.8 |

| | |
|---|---|
| | **ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**<br>**9. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ** |
| ՆՊԱՏԱԿԸ | Հարցաթերթիկների միջոցով հարցումը հանդիսանում է համայնքի վերաբերյալ բազմաբնույթ տեղեկատվության հավաքագրման անփոխարինելի միջոց: Հարցաշարը ներառում է համայնքի կացութաձևին՝ մասնավորապես ԱՌՆ համատեքստում համայնքի խոցելիությանը, կարողություններին և սպառնացող վտանգներին վերաբերող հարցեր[5]: |
| | |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | ԽԿԳ արդյունքների քանակական (%) սանդղակը հիմնականում ձևավորվում է հարցաթերթիկների միջոցով հավաքագրված տվյալների հիման վրա:<br><br>Հարցաթերթիկների միջոցով հարցումը հնարավորություն է տալիս հարցվողին արտահայտելու իր անմիջական ու անկողմնակալ կարծիքը առօրեական խնդիրների վերաբերյալ: |
| | |

[7] Հավելված 1, Տիպային հարցաթերթիկի օրինակ:

| | ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ<br>10. ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ / ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՏՐԻԱՆԳՈՒԼՅԱՑԻԱ) |
|---|---|
| ՆՊԱՏԱԿԸ | Հավաքագրված տվյալները/տեղեկատվությունը վերլուծելու համար կիրառվում է տրիանգուլյացիայի մեթոդը, որը թույլ է տալիս «խաչաձև ստուգման», համադրության և սինթեզի միջոցով բարձրացնել տվյալների ճշգրտության աստիճանը:<br><br>Տրիանգուլյացիայի մեթոդի կիրառման համար անհրաժեշտ է ունենալ առնվազն երեք, համարյա հավասարազոր, աղբյուրների տվյալներ: |
| | |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Արդյունքում ԽԿԳ խումբը հստակ պատկերացում կկազմի համայնքին սպառնացող վտանգների և ռիսկերի վերաբերյալ, հնարավորություն ստանալով եզրակացություններ ձևավորել վերջիններիս գերակայության, դրանց նվազեցման առկա կարողությունների և այդ կարողությունները համայնքի իմացության բարձրացմանն ու բարի կամքի դրսևորմանն ի նպաստ դնելու մասին:<br><br>Ստացված տվյալների հիման վրա ԽԿԳ խումբը համայնքի քննարկմանն է ներկայացնում իր եզրակացությունները, ինչպես նաև հանդես է գալիս հիմնավորված առաջարկություններով կապված ԱՌՆ հետագա գործունեության պլանավորման և իրագործման հետ: |
| | |

Հաշվի առնելով, որ տրիանգուլյացիայի մեթոդը կիրառվում է ԽԿԳ վերլուծական փուլում և պահանջում է մասնագիտական հմտություններ, խորհուրդ է տրվում այս փուլում օգտվել ԽԿԳ խորացված ուսուցում անցած և համապատասխան վերլուծական գործիքներին ծանոթ մասնագետի ծառայություններից:

## ՏՐԻԱՆԳՈՒԼՅԱՑԻԱՅԻ ՍԽԵՄԱՅԻ ԴԱՍԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ



### *ԽԿԳ վերլուծական աղյուսակներ*

Օրինակ 1. **Համայնքին սպառնացող առավել վտանգավոր երևույթների առաջնայնացման աղյուսակ**

| | ԵՐԵՎՈՒՅԹ | ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ |
|---|---|---|
| 1 | Երկրաշարժ | Տարածաշրջանը գտնվում է սեյսմավտանգ գոտում, ինչը սպառնում է մարդկանց կյանքին ու առողջությանը՝ գործելակերպի վերաբերյալ իրազեկվածության պակասի և բնակելի տներին ու շինություններին ոչ սեյսմակայուն լինելու պատճառով: |
| 2 | Սողանք | Սողանքի հետևանքով կարող է փակվել համայնքից մայրուղի տանող ճանապարհը: Սողանքի ակտիվացմանը նպաստում է սողանքավտանգ տարածքով անցնող վնասված ոռոգման համակարգը: Ջրագծի վնասման պատճառով համայնքի այգիները մնում են առանց ջրի, ինչը պատճառ է դառնում բերքի վնասմանը և նյութական կորուստների: |
| 3 | Երաշտ | Կլիմայի փոփոխության պատճառով առկա է ջերմաստիճանի բարձրացում, տեղումների սակավություն: Ոռոգման ջրի պակասը (նաև բարձր գինը) լուրջ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը, այգեգործությանը: |
| 3 | Ցրտահարություն | Վերջին տաս տարիների ընթացքում հիմնականում նկատվում է գարնանը: Խախտվել է բույսերի վեգետացիոն շրջանը: Վնաս է հասցվում գյուղատնտեսությանը և այգեգործությանը: |
| 4 | Անտառային հրդեհներ | Մարդու սխալ գործունեության և կլիմայի փոփոխության պատճառով, որին գումարվում է վերջին տարիներին նկատվող չոր եղանակը: |
| 5 | Կարկուտ | Վնասում է բերքը, շինությունները, տրանսպորտային միջոցները: |

Աղյուսակից երևում է, որ համայնքը երաշտի և ցրտահարության սպառնալիքը համարել է հավասարազոր՝ տեղադրելով այն 3–րդ շարքում:

Օրինակ 2. **Համայնքի բնակիչների կողմից բացահայտված խնդիրները, դրանց պատճառներն ու հնարավոր լուծումներն՝ ըստ խոցելիության նվազեցման և կարողությունների հզորացման:**

| Ռիսկ | | Ազդեցություն | Հնարավոր լուծում | Ակնկալվող արդյունք |
|---|---|---|---|---|
| **Վտանգ** | **Խոցելիություն** | | | |
| Սելավ | Դպրոց, մանկապարտեզ, բնակելի տներ, այգիներ, գյուղամիջյան ճանապարհներ, մարդիկ, ընտանի կենդանիներ | Գյուղի դիրքը նպաստում է նաև, որ տարբեր հատվածներում ձևավորված սելավահոսքերը միախառնվեն և դառնան ավելի վտանգավոր: Գյուղամիջյան ճանապարհները դառնում են անանցանելի: Սելավային հոսքերը լցվում են բնակելի տների նկուղներն ու տնամերձ տարածքները, վնասելով տների հիմքերը և տնամերձ հողամասերի ցանքատարածքները: Սելավային հոսքերը միախառնվելով հոսում են դեպի դպրոց ու մանկապարտեզ և գերեզմանոցի մոտով լցվում ձորը: Սպառնում է մարդկանց անվտանգությանը: Դիտվել է ընտանի կենդանիների կորուստ: Յուրաքանչյուր սելավից հետո անհրաժեշտություն է առաջանում տարածքները մաքրելու համար կիրառել մեխանիզացված տեխնիկա: | Սելավատարի կառուցում<br><br>Սելավատարների մաքրում<br><br>Ափերի ամրացում<br><br>Լանջերի թփապատում | Հնարավոր կորուստների նվազեցում, սելավի հետևանքների վերացման համար համայնքի ռեսուրսների խնայում |
| Կարկուտ | Այգիներ, ցանքատարածքներ, բերք, ընտանի կենդանիներ, շինություններ | Վնասվում կամ ամբողջովին ոչնչացվում են ցանքատարածքները, բերքը, կոտրվում շինությունների ապակիներն ու տանիքածածկերը, վնասվում տրանսպորտային միջոցները: Բերում է էական նյութական կորուստների: | Հակակարկտային կայանների, հակակարկտային ցանցերի տեղադրում, կանխատեսման և վաղ ազդարարման համակարգի մշակում և կիրառում | Բերքի պահպանում, տնտեսական վիճակի բարելավում |

| Ռիսկ | | Ազդեցություն | Հնարավոր լուծում | Ակնկալվող արդյունք |
|---|---|---|---|---|
| Վտանգ | Խոցելիություն | | | |
| Սողանք | Մարդիկ, բնակելի տներ, կառույցներ, ճանապարհներ, նյութական կորուստ | Համայնքի գրեթե ամբողջ տարածքը գտնվում է սողանքավտանգ գոտում: Սողանքի հետևանքով արդեն վնասվել են բնակելի տներ, կառույցներ: Սողանքի ակտիվացմանը նպաստում են գյուղի ողջ տարածքում առկա բնական ջրերի արտահոսքը: Անգամ ամռանը բնական ջրերը հոսում են գյուղի ճանապարհներով, մեծացնելով վթարային շինությունների փլուզման հավանականությունը: | Սողանքային հատվածների մասնագիտական զննում / քարտեզագրում, վթարային շենքերից բնակչության տարհանում, նոր տների կառուցման համար միջոցների հայթայթում, վտանգի մասին բնակչության վաղ իրազեկում | Նյութական և մարդկային կորուստներից խուսափում, տարահանված բնակիչներին նոր բնակարաններով ապահովում, բնակիչների իրազեկում սողանքային հատվածների ճշգրիտ նկարագրված պատկերի վերաբերյալ |
| Ուժեղ քամիներ | Բնակելի տներ, էլեկտրահաղորդակցման համակարգ, ցանքատարածքներ, այգիներ | Հաճախակի /պարբերական բնույթ կրող ուժեղ քամիները վնասում են էլեկտրասյուները, ցանքատարածքները, բերքը, բնակելի տների և շինությունների տանիքածածկերը: Բնակիչներն ի վիճակի չեն պարբերաբար ֆինանսական միջոցներ տրամադրել վերականգնողական աշխատանքների համար: Բերում է նյութական կորուստների, սոցիալ–տնտեսական վիճակի վատթարացման: | Համայնքային բյուջեով կամ այլ աղբյուրներից նախատեսել միջոցներ Էլեկտրասյուների, մալուխների և տանիքածածկերի պարբերական ամրացման համար: Մշակել և կիրառել կանխատեսման և վաղ ազդարարման համակարգ: Ապահովել բնակչության իրազեկումը: | Ենթակառուցվածքների արդյունավետ օգտագործում և պահպանում, տների պահպանման ծախսերի զգալի նվազեցում |
| Երաշտ | Ցանքատարածքներ, այգիներ, խոտհարքեր, անասնապահություն | Բերքատվության անկում / բերքի կորուստ և, հետևաբար, նյութական կորուստներ անասնապահության և հողագործության ոլորտներում | Կաթիլային ոռոգման համակարգի կիրառում, հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում | Նոր տեխնոլոգիաների ներդրում, հնարավոր կորուստների նվազում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գետի վարարում և հեղեղում | Հիմնական մշակվող հողատարածքներ / կենցաղային և շինարարական աղբի մեծ կուտակումներ | Գյուղի մշակվող հողամասերի մեծ մասը գտնվում է Աղստև գետի ափին: Գարնանային տեղումների և գետի վարարման հետևանքով այդ տարածքները ջրածածկվում են, որի հետևանքով դիտվում է հողերի լվացում, ցանքատարածքների վնասում, բերքի կորուստ: Գետի ափին և հունի մեջ համայնքի կողմից թափված աղբը խառնվելով վարարած ջրերի հետ տեղափոխվում է հոսանքով՝ դառնալով ջրի և գետին հարակից մշակվող ցանքատարածքների աղտոտման պատճառ: | Գետի ափերի պաշտպանիչ հատվածի բարձրացում, մասնավորապես, ջրածածկվող տարածքների երկայնքով, համայնքի կենտրոնացված աղբահեռացման համար նոր գետի ավազանից դուրս տարածքների տրամադրում, բնակչության ուսուցանում աղբահեռացման բացասական հնարավոր հետևանքների մասին | Ցանքատարածքների պաշտպանում հեղեղներից, կազմակերպված աղբահանություն, համայնքի էկոհամակարգի աղտոտման կանխում / կանխարգելում |

## 2.2. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

| | |
|---|---|
| Նպատակը | Ներառել ԽԿԳ արդյունքում ձևավորված աղետների և կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի նվազեցմանն ուղղված նախաձեռնություններն ու ծրագրերը համայնքային և մարզային զարգացման պլաններում, ելնելով սահմանված գերակայություններից: |
| | |
| Քայլեր | Մարզային և համայնքային ԱՌՆ թիմերը համատեղ աշխատանքներ են վարում ԽԿԳ ամփոփագրից բխող ԱՌՆ նպաստող առաջարկությունները կոնկրետ պլանների ու ծրագրերի վերածելու ուղղությամբ: ԱՌՆ համատեղ խումբը՝<br><br>• քննարկում և որոշում է ԱՌՆ ընդհանուր մոտեցումներն ըստ համայնքի զարգացման ոլորտների (կրթություն, առողջապահություն, շրջակա միջավայր, գյուղատնտեսություն, բնակարանաշինություն, զբաղվածություն, ջրամատակարարում և սանիտարիա, տեղական ինքնակառավարում և այլն),<br>• քննարկում և որոշում է ոլորտի զարգացման ազդեցությունը առկա ռիսկերի մեծացման վրա,<br>• բացահայտում է թաքնված, նորահայտ, ձևավորվող ռիսկերը<br>• գնահատում է տնտեսական գործունեության դիվերսիֆիկացիայի հնարավորությունը՝ մեղմելու կլիմայական առավել զգայուն գյուղատնտեսական գործունեության խոցելիությունը,<br>• իրականացնում է ոլորտային խնդիրների փոխհարաբերության և գերակայության գնահատում,<br>• տալիս է առաջարկություններ և աջակցում է հնարավոր ֆինանսական մասհանումների գործընթացին մարզային / համայնքային բյուջեից՝ ըստ ԱՌՆ ուղղորդված համապատասխան ոլորտների (մասնավորապես կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների իրականացման համար կարելի է օգտագործել նաև բնապահպանական և բնօգտագործման վճարներից մասհանումները),<br>• աջակցում և հետամուտ է լինում համայնքային մակարդակում պլանային ԱՌՆ նախագծերը իրականացնելու գործընթացին,<br>• անհրաժեշտության դեպքում վերաձեռնարկում է ԽԿԳ գործընթացը: |
| | |
| Ակնկալվող արդյունքներ | Մշակվում և իրագործվում են համայնքի զարգացմանն ուղղված աղետակայուն ծրագրեր, որոնց մեջ հաշվի է առնված համայնքի համար կարևորագույն նշանակություն ունեցող ռիսկ – զարգացում հարաբերությունն արտացոլող հետևյալ երեք էական գործոնները՝<br><br>• Համայնքի զարգացման հայեցակարգը,<br>• Համայնքին սպառնացող աղետների և դրանց ռիսկի գնահատման արդյունքները,<br>• Յուրաքանչյուր ոլորտի համար ռիսկերի և զարգացման միտումների նկարագիրը: |
| | |

## 2.2.1. ԱՌՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՒՄ. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԵՐ

### ԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ, ԴՐԱՆՑ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

| ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ | ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ | | ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ | ԱՌՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ | ԱՂԵՏԱԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ |
|---|---|---|---|---|---|
| | ՈՒՂՂԱԿԻ | ԱՆՈՒՂՂԱԿԻ | | | |
| Կրթություն | | | | | |
| Առողջապահություն | | | | | |
| Շրջակա միջավայր | | | | | |
| Գյուղատնտեսություն, անտառտնտեսություն, ձկնաբուծություն | | | | | |
| Բնակարանաշինություն, քաղաքաշինություն, ենթակառուցվածք | | | | | |
| Զբաղվածություն և ապրելամիջոցներ | | | | | |
| Ջրամատակարարում և սանիտարիա | | | | | |
| Տեղական ինքնակառավարում, ժողովրդավարության զարգացում | | | | | |

| ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ | ԽՆԴԻՐ | ՊԱՏՃԱՌ | ՀԵՏԵՎԱՆՔ | ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ |
|---|---|---|---|---|---|
| Կրթություն | | | | | |
| Առողջապահություն | | | | | |
| Շրջակա միջավայր | | | | | |
| Գյուղատնտեսություն, անտառտնտեսություն, ձկնաբուծություն | | | | | |
| Բնակարանաշինություն, քաղաքաշինություն, ենթակառուցվածք | | | | | |
| Զբաղվածություն և ապրելամիջոցներ | | | | | |
| Ջրամատակարարում և սանիտարիա | | | | | |
| Տեղական ինքնակառավարում, ժողովրդավարության զարգացում | | | | | |

## ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԶՈՒՅԳԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

| ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ | ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| • *Իրարամերժ* – երկու լուծումներ չեն կարող ներկայացվել միասին, պետք է ներկայացվի<br>• «կամ / կամ» տարբերակը: Լուծումները պետք է ուշադիր վերանայվեն՝ գերակայությունը տալով առաջնահերթ խնդրին:<br>• *Վիճահարույց* – կան հակասական փաստեր: Անհրաժեշտ է մանրազնին հետազոտել հակասություն առաջացնող ստույգ պատճառները՝ հասցնելով դրանք նվազագույնի:<br>• *Չեզոք* – իրական փոխազդեցություն չի նկատվում, նշանակում է այս դեպքում լուծումները համատեղելի են:<br>• *Նպաստող* – շփման եզրեր չունեցող նման կապը կարող է բերել նոր, ավելի համալիր լուծման ձևավորման:<br>• *Կլանող* – լուծումներից մեկը՝ առաջ քաշված երկու խնդիրներից մեկի լուծումն է, այսինքն մյուսի կարիքը բացառելը: Նախապատվությունը պետք է տալ «կլանող» լուծմանը: | Յուրաքանչյուր լուծում համեմատվում է մնացած բոլոր լուծումների հետ և համեմատության արդյունքը նշվում է համեմատվող զույգերի հատման կետում: «Հաղթող» լուծումը, այսինքն այն լուծումը, որին տրվում է գերակայություն, ստանում է «1» միավոր, համապատասխանաբար «պարտված» լուծումը՝ «0» միավոր: «Յուրաքանչյուր լուծման գերակայության ցուցանիշը» կհաշվարկվի լուծման համար ստացված միավորների թվաբանական գումարից: Լուծումների գերակայության ցուցակը կկազմվի ըստ միավորների գումարման արդյունքում ստացված սանդղակի տվյալների, որը և կգլխավորի ամենաբարձր միավորներ ստացած լուծումը: |

## ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

| ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ | ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| Յուրաքանչյուր երկու լուծման փոխազդեցությունը կարող է լինել՝<br>• իրարամերժ – 2<br>• վիճահարույց – 1<br>• չեզոք – 0<br>• նպաստող 1<br>• կլանող 2 | Գերակայությունը որոշվում է խնդրի հնարավոր լուծումը բնորոշող հետևյալ գործոնների համեմատական վերլուծության արդյունքում, որոնք են՝<br>• արդիականություն<br>• արդյունավետություն<br>• անհրաժեշտ ռեսուրսների առկայություն<br>• ժամկետայնություն<br>• ԱՌՆ ազգային ծրագրերին ինտեգրվելու հնարավորություն: |

## ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՓՑ – փոխազդեցության ցուցանիշ, ԳՑ – Գերակայության ցուցանիշ

| ՓՑ / ԳՑ | Լ1 | Լ2 | Լ3 | Լ4 | Լ5 | Լ6 | Լ7 | Լ8 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լ1 | | | | | | | | |
| Լ2 | | | | | | | | |
| Լ3 | | | | | ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ | | | |
| Լ4 | | | | | | | | |
| Լ5 | | | | | | | | |
| Լ6 | ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ | | | | | | | |
| Լ7 | | | | | | | | |
| Լ8 | | | | | | | | |

| ՓՑ /ԳՑ | Լ1 | Լ2 | Լ3 | Լ4 | Լ5 | Լ6 | Լ7 | Լ8 | ԳՑ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լ1 | | Լ2 | Լ3 | Լ4 | Լ1 | Լ6 | Լ7 | Լ8 | 1 |
| Լ2 | 0 | | Լ2 | Լ2 | Լ2 | Լ6 | Լ2 | Լ2 | 6 |
| Լ3 | –1 | 2 | | Լ3 | Լ3 | Լ6 | Լ3 | Լ8 | 4 |
| S4 | –2 | 1 | 1 | | Լ4 | Լ6 | Լ4 | Լ4 | 4 |
| Լ5 | 0 | 1 | 1 | –1 | | Լ5 | Լ7 | Լ5 | 2 |
| Լ6 | 1 | 0 | 2 | –1 | 2 | | Լ7 | Լ6 | 5 |
| Լ7 | 1 | 0 | –1 | 2 | 1 | –1 | | Լ8 | 3 |
| Լ8 | 1 | –1 | –1 | 1 | 0 | 0 | –1 | | 3 |
| ՓՑ | 0 | 3 | 3 | 1 | 4 | –1 | 1 | –1 | |

Փոխազդեցության ցուցանիշը Լ5–ի համար՝ **ՓՑ** (Լ5) = 0+1+1+(–1)+2+1+0 = 4 (⟶)

Գերակայության ցուցանիշը Լ5 –ի համար՝ **ԳՑ** (Լ5) = 0+0+0+0+1+0+1 = 2 (⟶)

## ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՅՈՒՑԱԿԸ

| Լուծում-ներ | Գերակա-յության ցու-ցանիշ | Փոխազդեցու-թյան ցուցանիշ | Նշումներ և եզրակացություն | Լուծումների գերա-կայության սանդղակ |
|---|---|---|---|---|
| Լ1 | 1 (6)[8] | 0 (6) | Քննարկել երկարաժամկետ համալիր լուծում-ների շարքում | 1 |
| Լ2 | 6 (1) | 3 (2) | Ներառել առաջնահերթ լուծումների շարքում | 2 |
| Լ3 | 4 (3) | 3 (3) | Ներառել առաջնահերթ պլաններում | 3 |
| Լ4 | 4 (3) | 1 (4) | Ներառել առաջնահերթ պլաններում նախա-պես հարթելով այլ լուծումների միջև գոյու-թյուն ունեցող հակասությունները ու դիտար-կելով Լ2 և Լ3 լուծումների արդյունքները | 4 |
| Լ5 | 2 (5) | 4 (1) | Կարող է դիտարկվել միջնաժամկետ լուծում-ների շրջանակում | 5 |
| Լ6 | 5 (2) | –1 (7) | Դիտարկել առաջնահերթ լուծումների շար-քում ներառելու հնարավորությունը | 6 |
| Լ7 | 3 (5) | 1 (5) | Դիտարկել մյուս լուծումների համատեքստում; հնարավոր է զուգահեռ | 7 |
| Լ8 | 3 (6) | –1 (8) | Դիտարկել մյուս լուծումների համատեքստում | 8 |

Վերջնական որոշումը առկա ռեսուրսների և գոյություն ունեցող/ձևավորվող պլանների մանրազնին դիտարկման, ինչպես նաև երկարաժամկետ ռազմավարական մտադրությունների և կանխատեսումների արդյունք է:

[8] Լուծումների հերթականությունը տրված է փակագծերում:

*Համայնքային ռիսկերի հավաստագրի մշակում և ներդրում*

| | |
|---|---|
| ***Նպատակը*** | Համայնաքային ռիսկերի հավաստագիրը (ՀՌՀ) դիտարկվում է որպես համայնքի «առողջությունը» վերահսկող փաստաթուղթ, ուր գրանցվում են համայնքի ֆիզիկական և սոցիալ–տնտեսական ցուցանիշները ներկա «առողջական» կարգավիճակին վերաբերող գրանցումների հետ միասին, տրամադրելով ճշգրիտ տեղեկատվություն այն ռիսկերի մասին, որին ենթակա է տվյալ համայնքը, ինչպես նաև դրանց հաղթահարման ուղիների մասին, որոնք բացահայտվել և համաձայնեցվել են համայնքային և մարզային ԱՌՆ խմբերի հետ: |
| ***Ձևավորման սկզբունքը*** | Այն համայնքին հատուկ ռիսկերին և առաջնահերթ լուծումներին վերաբերող հիմնական տվյալների և եզրահանգումների ամփոփագիր է՝ ձևավորված ԽԿԳ արդյունքների և պլանավորման գործընթացի հիման վրա, որտեղ նշված են լուծումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական հնարավոր աղբյուրներն ու ոլորտները: |
| ***Գործընթացը*** | ԽԿԳ խմբի անդամները համայնքի հիմնական համակարգողի հետ միասին հատուկ ժողով են հրավիրում հավաստագիրը կազմելու և համայնքային ու մարզային մակարդակով այն հաստատելու համար: |
| ***Պաշտոնական կարգավիճակը*** | ՀՌՀ–ն պաշտոնապես ճանաչված, հաստատված և գրանցված փաստաթուղթ է (ստանդարտացված ձևանմուշ), որ պետք է դիտարկվի և լրացվի յուրաքանչյուր համայնքում ՏՄՌԿ իրականացման ընթացքում, համայնքային ԽԿԳ խմբի կողմից տեղական մակարդակում իրականացվող ԽԿԳ ամբողջ ցիկլի և պլանավորման գործընթացի ավարտից հետո |
| ***Կառուցվածքը*** | Հավաստագիրը բաղկացած է 3 հիմնական մասից՝<br>1. Համայնքի նկարագիր – համայնքի ֆիզիկական ցուցանիշները, ներառյալ բնակչությունը, միջոցներն ու ռեսուրսները,<br>2. Տնտեսական նկարագիր – տնտեսական բնութագիրը և եկամտի աղբյուրները,<br>3. ԱՌՆ խնդիրներն ու առաջնահերթ լուծումները– ԱՌՆ առաջնահերթ լուծումները տնտեսական ոլորտի զարգացման տեսանկյունից: |

Առաջին երկու մասերը անհրաժեշտ է լրացնել համադրելով պաշտոնական վիճակագրական տվյալները համայնքում իրականացված գնահատման արդյունքների հետ՝ ըստ ստորև բերված բնութագրերի և ոլորտների:

| Համայնքի նկարագիրը | Տնտեսական նկարագիրը |
|---|---|
| • Աշխարհագրական դիրք<br>• Զբաղեցրած տարածք<br>• Աշխարհագրական գոտի<br>• Ջրային ռեսուրսներ<br>• Հողօգտագործում<br>• Կլիմա<br>• Բնակչություն<br>• Ղեկավարում և կառավարում<br>• Ենթակառուցվածքներ | • Արդյունաբերություն<br>• Շինարարություն և տրանսպորտ<br>• Գյուղատնտեսություն<br>• Տնտեսական գործունեության այլ ոլորտներ |

Երրորդ մասը դիտվում է որպես ԽԿԳ վերլուծության և պլանավորման գործընթացի անմիջական արդյունք՝ ներկայացված երեք տարբեր աղյուսակների միջոցով, որոնք հստակ տեղեկատվություն են պարունակում բացահայտված աղետների ռիսկի, սահմանված ԱՌՆ խնդիրների և համապատասխան լուծումների վերաբերյալ:

### ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

| ՎՏԱՆԳԻ ՏԵՍԱԿԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ | ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ | ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ | ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|
| ԲՆԱԿԱՆ | | | |
| | | | |
| ՏԵԽՆԱԾԻՆ | | | |
| | | | |
| ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ | | | |
| | | | |
| ՍՈՑԻԱԼԱԿԱՆ | | | |
| | | | |
| ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ | | | |
| | | | |

Յուրաքանչյուր դիտարկված վտանգի համար ձեռք բերված տեղեկատվությունը անհրաժեշտ է լրացնել համայնքի խոցելիության, բացասական հետևանքների և դրանց հաղթահարման համար առկա կարողությունների մասով:

## ԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Այս աղյուսակում ենթադրվում է արտացոլել համայնքի պլանավորման ընթացքում իրականացված ռիսկ – զարգացում հարաբերության վերլուծությունը: Զարգացման յուրաքանչյուր ոլորտի համար հորիզոնական տողերում պետք է տեղադրել արդեն իսկ սահմանված և համաձայնեցված տվյալները, որոնք են՝

- Տվյալ ոլորտի զարգացման ենթադրվող ազդեցությունը առկա ռիսկերի վրա,
- Առկա ռիսկի հնարավոր ազդեցությունը պլանավորված զարգացման վրա,
- Ձևավորված ԱՌՆ խնդիրը, որը կնպաստի տվյալ ոլորտի զարգացմանը հաշվի առնելով սահմանված ռիսկ–զարգացում հարաբերությունը:

| ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ | ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ | ԱՌՆ ԱԶԴԵՑՈՒ-ԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՎՐԱ | ԱՂԵՏՆԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԱԿԵՐՊՈՒՄ |
|---|---|---|---|
| | | | |
| ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | | |
| | | | |
| ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | | | |
| | | | |
| ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ | | | |
| | | | |
| ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ | | | |
| | | | |
| ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐ | | | |
| | | | |
| ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊՐԵԼԱՄԻՋՈՑՆԵՐ | | | |
| | | | |
| ՋՐԱ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՀԻԳԻԵՆԱ | | | |
| | | | |
| ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | | |

## ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

| ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՇՏ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄ | ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ | | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ |
|---|---|---|---|---|
| | | ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ | ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ | |
| ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | | | |
| | | | | |
| ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | | | | |
| | | | | |
| ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ | | | | |
| ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԶԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ , ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱ-ԲԵՐՈՒԹՅՈՒՆ | | | | |
| ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ | | | | |
| ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊՐԵԼԱՄԻՋՈՑՆԵՐ | | | | |
| ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՀԻԳԻԵՆԱ | | | | |
| ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱ-ՎԱՐՈՒՄ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱ-ՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | | | |

Այս աղյուսակը նեկայացնում էԱՌՆ առաջնահերթ լուծումների վերջնական քարտեզը՝ համապատասխանորեն բաշխված ըստ զարգացման ոլորտների և առաջնահերթության աստիճանի: Այն նաև ներկայացնում է պլանավորման գործընթացի վերջնական արդյունքները և ծառայում որպես կառավարման գործիք համայնքի զարգացման երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման համար: Այս աղյուսակը լրացնելու համար ԱՌՆ խմբին անհրաժեշտ է բավարար տեղեկատվություն ունենալ առկա ռեսուրսներից և պլաններից, որպեսզի առաջակ-

վող յուրաքանչյուր լուծման համար սահմանվի իրականացման ժամկետը և հնարավոր ֆինան-սավորման աղբյուրների կամ ռեսուրսների հայթայթման տարբերակները:

ԱՌՆ խմբի շրջանակներում համայնքի հավաստագիրը լրացնելուց և վերջինիս վերաբերյալ վերջնական փոխհամաձայնության  գալուց հետո, հավաստագիրը պետք է հաստատվի համայնքի ավագանու և ստորագրվի համայնքի ԱՌՆ համակարգողի և համայնքապետի կողմից:  Այդ ամենից հետո այն տրվում է ստուգման ԱՌՆ մարզային խմբին, և ապա՝ ներկայացվում ԱԻՆ մարզային ներկայացուցչություն՝ վերջնական հաստատման համար:    Հավաստագրի վավերականության ժամկետը երկու տարի է: Այն պետք է վերանայվի համայնքային ռիսկերի գնահատման հաջորդ փուլում՝ ելնելով իրականացված ԱՌՆ գործունեությունից և զարգացման գնահատման հաշվետվություններից:

Առաջարկվում է հետևել պետական պլանավորման կանոնակարգերին և ԱՌՆ պլանավորվող գործունեությունը համապատասխանեցնել կառավարության համապատասխան պլաններին: Օրինակ, Հայաստանում կառավարության կողմից համայնքների համար սահմանված է 4–ամյա պլանավորման ժամկետ  և համայնքներին հրահանգված է մշակել և կառավարությանը ներկայացնել համայնքային զարգացման ռազմավարությունը և իրականացման աշխատանքային պլանները՝ տրված ըստ ոլորտների և առաջնահերթության: Անհրաժեշտ է, որպեսզի  ՏՄՌԿ–ն իր բոլոր բաղկացուցիչներով ներառվի վերոհիշյալ պլանավորման գործընթացում որպես վերջինիս անբաժանելի մաս՝ նպաստելով ԱՌՆ ուղղորդմանը զարգացման ծրագրերում:

## 2.3. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ առաջնահերթության սահմանված ԱՌՆ կարճաժամկետ փոքրածավալ նախագծերը՝ ուղղված ռիսկերի մեղմմանը, ինչպես նաև կլիմայական ռիսկի կառավարման ծրագրերը կարող են իրականացվել համայնքի անմիջական մասնակցությամբ կամ ներդրումով (Տես գլուխ 3.1): Հրատապ, առաջնահերթ ծրագրերը, որոնց իրականացման համար համայնքները չունեն անհրաժեշտ միջոցներ, պետք է իրականացվեն համապատասխան մարզային կառույցների կամ այլ ներդրողների օժանդակությամբ:

Համայնքի զարգացման պլաններով նախատեսված այլ ոլորտային գործունեություն կամ ծրագրեր, որոնց իրականացման համար պահանջվում է զգալի ժամանակ, ֆինանսական միջոցներ և կազմակերպչական հմտություններ, իրականացվում են ազգային և մարզային պետական բյուջեի հատկացումներից կամ այլ խոշոր ներդրողների կողմից հատկացված գումարների հաշվին:

| | |
|---|---|
| ✓ | Ըստ էության ԽԿԳ իրականացման շրջանակներում յուրաքանչյուր միջամտության կամ նախագծի համար մոնիթորինգն ու գնահատումը անհրաժեշտ բաղադրիչներ են: |
| ✓ | Գնահատման ցուցանիշներն անհրաժեշտ է սահմանել ԱՌՆ գործունեության պլանավորման ժամանակ՝ ԱՌՆ մարզային խմբի մասնակցությամբ: |
| ✓ | Գնահատման ցուցանիշները սահմանում են իրականացված ԱՌՆ նախագծի հաջողությունը: Համայնքային մակարդակով ԱՌՆ իրականացված նախագծերի գնահատումը մասնակցային գործընթաց է, որտեղ ներառված են համայնքի, ԱՌՆ մարզային խմբի և իրականացվող նախագծի աշխատակազմի ներկայացուցիչները: |
| ✓ | Եթե գնահատումն իրականացվում է նախագծի ավարտից հետո, ապա մոնիթորինգը մի գործընթաց է, որն իրականացվում է նախագծի ամբողջ ընթացքում: Այն նպատակ ունի ի հայտ բերել նախագիծը խաթարող հնարավոր արգելքներն, ինչպես նաև հետևել պլանով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքին: |
| ✓ | Ըստ մոնիթորինգի արդյունքների հնարավոր է փոփոխություններ մտցնել նախագծի իրականացման պլանի մեջ: |

## 2.4. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են ջրհեղեղները, ցրտահարումները, երաշտը, ջերմային ալիքները, ուժեղ քամիները, ցիկլոնները և այլն, պատկանում են բնական վտանգավոր երևույթների շարքին և պատճառ հանդիսանում բազմաբնույթ աղետների՝ հանգեցնելով զգալի մարդկային և տնտեսական կորուստների:

Ենթադրվում է, որ կլիմայի փոփոխությունը կսաստկացնի նշված վտանգներից շատերը, բերելով վերջիններիս ինտենսիվության և հաճախականության աճի: Այդ է պատճառը, որ մարդու բարեկեցության և տնտեսական զարգացման վրա կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքները հայտնվել են համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում:

| | |
|---|---|
| ✓ | Կլիմայի փոփոխությունը համարվում է եղանակային տևական փոփոխություն որոշակի տարածքի, տարածաշրջանի կամ ամբողջ մոլորակի վրա: |
| | |
| ✓ | Կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագիտական խումբը (IPCC) կլիմայի փոփոխությունը սահմանում է հետևյալ կերպ. |
| | |
| ✓ | «Կլիմայի փոփոխությունը, որն առկա է տասնամյակներ ի վեր կամ ավելին, առաջանում է բնական պատճառներից կամ հետևանք է մարդկային գործունեության»[9]: |
| | |
| | |
| ✓ | Այս փոփոխությունը գնահատվում է միջին եղանակային ցուցանիշներով, ինչպիսիք են՝ ջերմաստիճանային փոփոխությունները, քամիները, տեղումները, կլիմայական ծայրահեղությունները և այլն: |
| | |

[9] Աղետների ռիսկի նվազեցման տերմինաբանական բառարան, UNISDR, 2009 http://www.unisdr.org/we/inform/terminology

| | |
|---|---|
| Կլիմայական ռիսկի կառավարում | Հաշվի առնելով վերջին տարիների կլիմայի փոփոխության հետ կապված հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների հաճախականության և ինտենսիվության աճը, ինչպես նաև դրանց կողմից տնտեսության տարբեր ճյուղերին հասցված զգալի վնասները, անհրաժեշտ է կլիմայական ռիսկերի նվազեցման համար գտնել նոր լուծումներ և համակարգող միջոցներ, ամրապնդել կլիմայի փոփոխության բացասական հետևանքներին դիմակայելու հասարակության և հաստատությունների հնարավորությունները և հարմարվողականության կարողությունները: |

| | |
|---|---|
| | Հարմարվողականությունը համարվում է ջանքերի երկարաժամկետ գործադրում ուղղված կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքների նվազեցմանը: Կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը վերաբերվում է ոչ միայն եղանակային ծայրահեղ երևույթներին, այլ նաև աստիճանաբար փոփոխվող կլիմայական պայմաններին[10]: |
| | Կլիմայական ռիսկի կառավարումը համեմատաբար նոր մոտեցում է, որը միավորում է աղետների ռիսկի նվազեցման և կլիմայական փոփոխությունների հարմարվողականության գործառույթները՝ կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար: Այն կլիմայական ռիսկի դիմակայմանն ուղղված համալիր և պլանավորված գործառույթների համակարգ է, որն իրականացվում է ինչպես միջազգային, այնպես էլ ազգային և տեղական մակարդակներում: |
| | ԿՌԿ և ԱՌՆ ռազմավարություններն ունեն ընդհանուր պահանջներ և մոտեցումներ, ներառյալ՝<br>• խոցելիության գնահատում,<br>• արձագանքման կարողությունների ամրապնդում<br>• հարմարվողականության, նախապատրաստման և կանխարգելման գործառույթների ինտեգրում զարգացման ազգային և ոլորտային ծրագրերում: |

[10] Հայաստանի Հանրապետության կլիմայի փոփոխության երկրորդ ազգային հաղորդագրություն, Հայաստան 2010, www.nature–ic.am

## ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ




| | |
|---|---|
| ԿՌԿ նպատակը | Նվազեցնել հասարակության զգայունությունը[11] ներկա և կանխատեսվող կլիմայի փոփոխության նկատմամբ:<br><br>Այն ենթադրում է ամրապնդել և զարգացնել բնակչության կարողությունները կլիմայի փոփոխության հարմարվողականության ասպարեզում, նվազեցնել կլիմայի փոփոխության հետևանքով տնտեսության տարբեր ճյուղերի խոցելիությունը այնպիսի բնական երևույթներից, ինչպիսիք են՝ երաշտը, հեղեղը, սելավը, անտառային հրդեհները, ջերմային ալիքները, վաղ գարնանային ցրտահարությունը և այլն, ինչպես նաև նպաստել երկրի կայուն զարգացմանը՝ ռազմավարական ծրագրերում կլիմայի փոփոխության բաղադրիչի ինտեգրման միջոցով: |

[11] Զգայունություն է կոչվում կլիմայի փոփոխության արդյունքում համակարգերին հասցված դրական կամ բացասական ազդեցության աստիճանը: IPCC, 2001, Guidelines for Climate Change Proofing in UNDP Projects and Programs in Armenia, 2009, http://www.nature–ic.am/res/pdfs/documents/Completed_Projects/CC%20guidelines%20Armenia.pdf

| | |
|---|---|
| ԿՌԿ խնդիրները | Գնահատել և քարտեզագրել հնարավոր կլիմայական ռիսկերը, գնահատել գոյություն ունեցող կարողությունները և տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման միտումները՝ կապված կլիմայական վտանգավոր երևույթների նկատմամբ զգայունության հետ, և մշակել միջոցառումներ այդ բացասական ազդեցություններին հարմարվողականության, դրանց կանխարգելման և նվազեցման համար: |
| ԿՌԿ գործնական կիրառումը | ՄԱԿ–ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ) ԿՌԿ–ն դիտում է որպես համալիր մոտեցում կայուն զարգացման համատեքստում խոցելիությունը կլիմայի կարճաժամկետ փոփոխականության և երկարաժամկետ փոփոխության նկատմամբ նվազեցնելու համար: Այն կոչված է նպաստելու հասարակության կողմից պահանջված և արդիական բոլոր այն նախաձեռնությունների իրականացմանը, որոնք զարգացման դրական արդյունքներ կապահովեն տնտեսության կլիմայի նկատմամբ բարձր զգայունություն ունեցող ճյուղերում, որոնք են՝ գյուղատնտեսությունը, անտառտնտեսությունը, ձկնաբուծությունը, ջրային ռեսուրսները, բնապահպանությունը և, վերջապես, սննդարդյունաբերությունը:<br><br>Զուտ կիրառական առումով, այս մոտեցումը միավորում է առկա ԱՌՆ գործառույթները կլիմայի միջին և երկարաժամկետ հարմարվողականությանն ուղղված ինչպես տեխնիկական, այնպես էլ հաստատութենական կարողությունների զարգացման գործընթացների հետ: Այն ԱՌՆ ընդունված գործառույթների սահմաններում՝<br><br>• ապահովում է կլիմային վերաբերող համապատասխան տեղեկատվության տարածման և մեկնաբանման կարողությունների ամրապնդումը բոլոր մակարդակներում, աջակցելով համայնքների պատրաստվածության բարձրացմանը,<br>• նպաստում է պետական կառույցների, հասարակական կազմակերպությունների և համայնքների տեղական մակարդակում ռիսկի և խոցելիության գնահատման, կլիմայի նկատմամբ զգայուն զարգացման պլանների և քաղաքականության մշակման համար անհրաժեշտ տեխնիկական և հաստատութենական կարողությունների հզորացմանը,<br>• օժանդակում է հարմարվողականության գործնական նախաձեռնությունների մշակմանը, և տեղական մակարդակում համապատասխան ներդրումների միջոցով խթանում է երկրի զարգացումը՝ հաշվի առնելով առկա կլիմայական փոփոխականության և ապագայում սպասվող կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերը,<br>• նպաստում է կլիմայի փոփոխության վերաբերյալ գիտելիքների տարածմանը և ուսուցմանը հանրության իրազեկման, ռիսկի կառավարման և համապատասխան քաղաքականության մշակման միջոցով: |

| | |
|---|---|
| ԱՌՆ ԽԿԳ գործիքների հարմարեցում | Կլիմայի փոփոխականության կամ փոփոխության հետ կապված երևույթները ԽԿԳ իրականացման ամբողջ գործընթացում արտացոլելու համար կիրառվում են ներկայացված ԱՌՆ ԽԿԳ գործիքները՝ հարմարեցված ԿՌԿ պահանջներին[12]: |
| Երկրորդային աղբյուրների վերանայում | Մոտեցման մեջ փոփոխություններ մտցնելու համար անհրաժեշտ է օգտվել կլիմայի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող համապատասխան աղբյուրներից: Ի լրումն, կարող է անհրաժեշտություն առաջանալ վերլուծական փուլում ԽԿԳ հիմնական գործառույթներն ավարտելուց հետո վերանայելու դիտարկումների արդյունքներն ու համայնքից ստացված տեղեկությունները: |
| Ակնադիտական զննում | Պետք է իրականացվեն դիտարկումներ կապված կլիմայի փոփոխության հետ և, մինչ համայնքի անդամների հետ հանդիպելը, նախապատրաստվեն հարցեր վտանգավոր գոտիների, բնապահպանական դեգրադացիայի ենթարկված վայրերի, էրոզիայի կամ անտառահատման վերաբերյալ: |
| Քարտեզագրում | Մինչ քարտեզ կազմելը մարդկանց պետք է խնդրել, որպեսզի նրանք նկարագրեն ոչ միայն ներկա իրավիճակը, այլ նաև սպասվող փոփոխությունները: Քարտեզը պետք է տեղեկատվություն պարունակի շրջակա միջավայրի հետ կապված այնպիսի խոշոր փոփոխությունների մասին, ինչպիսիք են՝ անտառահատված գոտիները, ջրհեղեղից տուժած հարթավայրերը, էրոզիայի ենթարկված հողատարածքները և այլն: Անհրաժեշտ կլինի պարզել, թե արդյոք դիտարկված փոփոխություններն արդյունք են կլիմայի փոփոխության, թե որևէ այլ գործոնի: Հավաքված տեղեկությունների հիման վրա կազմված բազային քարտեզում կարելի է նշել այն տարածքները, որտեղ, ամենայն հավանականությամբ, ապագայում տեղի կունենան փոփոխություններ: Սա նաև ցույց կտա, թե որ տարածքներն են ամենախոցելին: |
| Կիսակառուցվածքային հարցազրույցներ | Հարցազրույցի մասնակիցներին պետք է հարցնել, թե ինչ փոփոխություններ են տեսնում կապված համայնքային կյանքի տարբեր կողմերի (առողջություն, գյուղատնտեսություն, ձկնորսություն, հողագործություն և այլն) կամ տարբեր իրադարձությունների հետ, մասնավորապես, վտանգներ, որոնք վերաբերում են եղանակին, այդ թվում նաև ամբողջ տարվա ընթացքում դիտարկվող եղանակային ծայրահեղ փոփոխություններին, օրինակ՝ ջերմաստիճանի կամ տեղումների հետ կապված փոփոխություն, որ հանգեցրել է լուրջ կորուստների: Ենթադրությունները կարող են հաստատվել կամ ճշտվել այլ գործիքների միջոցով հավաքված տեղեկությունների համադրությամբ, ներառյալ զննումների և երկրորդական տվյալների վերանայումը: |
| Քննարկումներ ֆոկուս խմբերում | Համայնքի տարեցները (անհրաժեշտության դեպքում՝տարբեր սեռի ներկայացուցիչներ) պետք է ներգրավվեն ժամանակի մեջ կատարված փոփոխությունների մասին զրույցներում: Առողջության, կենսապայմանների հետ կապված նմանատիպ հարցեր կարող են քննարկվել նաև ֆոկուս խմբերում: Պետք է ներգրավվեն, ինչպես տարեց տղամարդիկ, այնպես էլ կանայք, քանի որ նրանք կարող են ունենալ տարբեր գիտելիքներ, ներառյալ ավանդական գիտելիքներ կապված եղանակի կանխատեսման հետ: |

[12] “How can climate change be considered in Vulnerability and Capacity Assessments?”, A summary for practitioners, IFRC, March 2012.

| | |
|---|---|
| Սեզոնային օրացույց | Սեզոնային օրացույցը հնարավորություն է ընձեռում ԽԿԳ իրականացնողներին քննարկելու սեզոնային փոփոխությունները և դրանց ազդեցությունը առողջական խնդիրների, աղետների և ապրելամիջոցների վրա: Խորհուրդ է տրվում առաջին սեզոնային օրացույցը նվիրել «ներկային» և միայն հետո, այդ առաջադրանքը համայնքի անդամների կողմից ավարտելուց հետո, առաջ քաշել, ասենք, վերջին 30 տարիների ընթացքում նկատված եղանակային փոփոխություններին վերաբերող նոր հարցադրում: Սա հնարավորություն կտա վերցնելով«ներկայի» տվյալները որպես մուտքային, անդրադառնալ անցյալին և բացահայտել եղանակների հետ կատարվող փոփոխություններն ու միտումները: Ինչևէ, եթե մարդիկ, արդեն իսկ, խոսում են անկանխատեսելի եղանակի մասին, պետք է փոխվի զրույցի վարման կարգը, և զրույց բացվի այն մասին, թե ինչպիսին էր եղանակը անցյալում և թե, որոնք են այն հնարավոր մարտահրավերները, որ բերել են ներկայիս «անկանխատեսելիությանը»: |
| Պատմական օրացույց/ Պատմական բնութագիր | Այստեղ պետք է նշել հիմնական ծայրահեղ դեպքերը, այդ թվում նաև եղանակին և կլիմային վերաբերվող, օրինակ՝ ջրհեղեղը, երաշտը և ցիկլոնները, որոնք փոխվել են ըստ տեղի ունենալու հաճախականության կամ սաստկության աստիճանի: Պետք է նշել դեպքեր կապված առողջական խնդիրների հետ, կամ այնպիսիք, որոնք նոր են ձևավորվում, (առաջացել են ջրից կամ պարազիտակրից) և, հնարավոր է, որ արդյունք են կլիմայական փոփոխությունների: Կլիմայական փոփոխությունների վերաբերյալ համայնքի կողմից արված դիտարկումները կարող են խաչաձև համեմատվել օդերևութաբանական և աղետների կառավարման գրասենյակների կողմից արված դիտարկումների հետ: Այստեղ շատ կարևորվում է հիշողության գործոնը, ուստի անհրաժեշտ է ստացված տեղեկությունները ենթարկել տրիանգուլյացիայի և փորձել բարձրացնել պարզաբանող հարցեր, որոնք կօգնեն խուսափել հավանական կտրուկ փոփոխությունների վերաբերյալ սխալ պատկերացումից: Գործնական առումով, հարցազրույցի մասնակիցներին պետք է առաջարկվի լրացնել պատմական օրացույցի և պատմական բնութագրի առաջարկված ձևանմուշները՝ հաղորդելով համապատասխան տեղեկատվություն կլիմայի կամ եղանակի հետ կապված դեպքերի մասին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել տարեցների և վետերանների վրա, չնայած նրան, որ հիշողությամբ վերականգնված տեղեկությունները պահանջում են մանրակրկիտ վերլուծություն և հաստատում: |
| Հաստատութենական աղյուսակ | Այս գործիքի միջոցով կարելի է պարզել, թե որտեղից է համայնքը ստանում տեղեկություններ, և որքանով է վստահում դրանց, կամ ինչպես է որոշում առկա կամ չօգտագործված հնարավորություններն ու ռեսուրսները, ինչպես, օրինակ՝ եղանակի կանխատեսումները վաղ ահազանգման համար: Կարելի է նաև պարզել, թե ինչպես է համայնքը որոշում, թե ովքեր են իր վստահելի գործընկերները, որոնք կարող են օգնել համայնքին, օրինակ՝ գյուղատնտեսական ուսումնարանները կամ մարզային գյուղատնտեսական կառույցները, որոնք կարող են օգնել երաշտներին կամ ջրհեղեղներին դիմակայելու գյուղատնտեսական փորձի կամ ռազմավարության ներդրմամբ: |

# 2.5. ԱՌՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱՌՆ գործընթացում գենդերային բաղադրիչը ինտեգրելու անհրաժեշտությունը | Գենդերային բաղադրիչի ինտեգրումը աղետների ռիսկի կառավարման նախաձեռնություններում և ծրագրերում համարվում է առաջնային անհրաժեշտության խնդիր, քանի որ կանայք և տղամարդիկ խոցելի են տարբեր տեսանկյուններից, և աղետների ազդեցությունը նրանց վրա տարբեր է:<br><br>Գենդերային հարցը աղետներին դիմակայելու ազգերի և համայնքների կարողությունների զարգացմանն ուղղված Հյոգոյի 2000–2015 թթ. գործողությունների ծրագրի կարևորագույն սկզբունքներից է, համաձայն որի՝ |

| | |
|---|---|
| | «Գենդերային հարցը պետք է ինտեգրել աղետների ռիսկի կառավարման բոլոր քաղաքականություններում, ծրագրերում և որոշումների կայացման գործընթացներում, այդ թվում նաև՝ ռիսկի գնահատման, վաղ ազդարարման, տեղեկատվության կառավարման և կրթության ու վերապատրաստման ոլորտներում»[13]: |

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԸ

| | |
|---|---|
| | • ԱՌՆ–ն որպես կարևորագույն ուղղություն ներառվել է գենդերային քաղաքականության 2011–2015 իրականացման գործողությունների պլանում[14]:<br>• ԱՌՆ ազգային պլատֆորմի շրջանակներում մշակվել և ներ են դրվել համապատասխան թեմատիկ ձեռնարկներ, ուսուցողական և կիրառական նյութեր[15]: |
| | |

[13] Հյոգոյի 2000–2015 թթ. գործողությունների ծրագիր, Աղետների նվազեցման համաշխարհային կոնֆերանս, Կոբե, Հյոգո, Ճապոնիա, 2005թ:

[14] Գենդերային քաղաքականության 2011–2015 թթ. ռազմավարական ծրագիրը և գենդերային քաղաքականության 2011 թ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին, Քաղվածք Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից, http://www.arlis.am/

[15] «Գենդերը և աղետների ռիսկի նվազեցումը, Տեղեկատվական գրքույկ, ՄԱԶԾ, 2010
«Գենդերային ուղղորդումը՝ աղետների ռիսկի նվազեցման քաղաքականության մշակման գործընթացում, Գործնական ուղեցույց, ՄԱԶԾ, 2011, Երևան, «Գենդերային ուղղորդումը աղետների ռիսկի նվազեցման ոլորտում, Ուսուցողական ձեռնարկ, ՄԱԶԾ, 2011, Երևան:

## Գենդերային հավասարություն. գենդերային ռիսկի նվազեցման 6 սկզբունք[16]

| | |
|---|---|
| Մտածել ընդարձակ | Գենդերային հավասարության և ռիսկի նվազեցման սկզբունքները պետք է ուղղորդեն աղետների կանխարգելումը, արձագանքումը և հետաղետային վերականգնումը: |
| | |
| Հավաքագրել փաստեր | Գենդերային հարցերի դիտարկումը չի կարող հայեցողական կամ առանձնացված բնույթ կրել: Այն պարտադիր է մարդասիրական օգնությունը ուղղորդելու և լիարժեք ու արդարացի վերականգնում պլանավորելու համար: Աղետներին վերաբերող ցանկացած նախաձեռնում չի կարող «չեզոք» լինել գենդերային հարցերի նկատմամբ: |
| | |
| Աշխատել կանանց հետ տեղական մակարդակում | Կանանց համայնքային կազմակերպություններն ունեն արժեքավոր գիտելիքներ, տեղեկություն, փորձ, կապեր և ռեսուրսներ, ինչն էական է համայնքի աղետակայունությունը բարձրացնելու առումով: Գոյություն ունեցող կանանց խմբերի հետ աշխատելը, նրանց կարողությունների զարգացումը՝ անհրաժեշտություն է: |
| | |
| Դիմակայել կարծրատիպերին | Բոլոր ձեռնարկումներում հիմնվել գիտելիքների վրա, դիտարկելով դրանք մշակութային, քաղաքական և սեռային տարբերությունների և առանձնահատկությունների համատեքստում և ոչ թե ուղղորդվել կեղծ ընդհանրացումներով: |
| | |
| Չանտեսել մարդու իրավունքները | Ժողովրդավարական և մասնակցային նախաձեռնումները լավագույնս են ծառայում կանանց և աղջիկներին: Կանայք, տղամարդկանց հետ հավասար, պետք է ապահովված լինեն կյանքի անհրաժեշտ պայմաններով, որպեսզի լիիրավ իրացնեն մարդու հիմնարար իրավունքները: |
| | |
| Հարգել և զարգացնել կանանց կարողությունները | Խուսափել գերծանրաբեռնումից ծանր աշխատանքներում արդեն իսկ ներգրավված և, ամենայն հավանականությամբ, ընտանեկան պարտականություններով ավելի ծանրացված բեռը ստանձնած կանանց: |
| | |

[16] Gender Equality in Disasters: Six Principles for Engendered Relief and Reconstruction, http://www.gdnonline.org/resources/GDN_SixPrinciples_Eng.pdf

# 3 ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## 3.1. ԿԻՐԱՌՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղական մակարդակում ռիսկի կառավարման ընդհանուր նպատակն է ստեղծել աղետակայուն համայնքներ՝ նվազեցնելով աղետների և կլիմայի փոփոխության ռիսկերը աղետների կառավարման տեղական կարողությունների զարգացման միջոցով, և վերջապես, ներդնել այդ ռիսկերի ըմբռնման և դրանց հաղթահարման համայնքային մշակույթ: Սույն հատուկ մոդուլը ներառում է մի շարք արդյունավետ և տրամաբանական կառավարման գործիքներ՝ ուղղված աղետների կառավարման և կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկի նվազեցման համայնքահեն միջոցառումների իրականացմանը: Հայաստանում այս մոդուլն ի սկզբանե ներդրվեց ՄԱԶԾ–ԱԻՆ համատեղ ԱՌՆ ծրագրի իրականացման շրջանակներում, երբ ազգային կարողությունների զարգացման նախաձեռնությունների հետ մեկտեղ փորձարկվեցին ռիսկի կառավարման համայնքահեն միջոցառումներ: Հայաստանի ամենաաղետավտանգ մարզերից մեկի, Արարատի մարզի 40 համայնքներում կիրառվեց համապարփակ և բազմաբովանդակ մոտեցում, ինչպես նաև իրականացվեց համայնքին սպառնացող վտանգների, համապատասխան ռիսկերի և դրանց դիմակայման կարողությունների գնահատում: Խոցելիության և կարողությունների գնահատման արդյունքները սկզբնակետ հանդիսացան հետագա ՏՄՌԿ միջոցառումների իրականացման համար, ներառյալ համայնքային պլանների վերանայումը և մի շարք կանխարգելիչ փոքրածավալ ծրագրերի իրականացումը: Միևնույն ժամանակ, ծրագրի այս փուլի բացահայտումների վերլուծությունը վեր հանեց ԱՌՆ ազգային կառավարման համակարգի, ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակներում տեղ գտած մի շարք բացթողումներ, որոնք խոչընդոտում էին ԱՌՆ համախմբված և ինտեգրված մոտեցումների ներդրման գործընթացը: ԱՌՆ ազգային կարողությունների զարգացման համար համապատասխան ազգային կառույցներին աջակցելու նպատակով ՄԱԿ–ի զարգացման ծրագիրը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության և ԱՌՆ ոլորտի հիմնական շահագրգիռ կողմերի հետ համաձայնությամբ ու համատեղ իրականացրեց ԱՌՆ ազգային համակարգի կարողությունների ինքնագնահատում, ըստ ՀԳԾ ռազմավարական առաջնահերթության չափանիշների: Գնահատման հաշվետվության մեջ հստակ կերպով ընդգծվեց բարելավման ենթակա երեք առաջնահերթ ուղղություն (Պատկեր 1):




**Պատկեր 1.** ԱՌՆ ազգային կարողությունների զարգացման առաջնահերթ ուղղությունները

Գնահատման արդյունքները հետագայում լայնորեն կիրառվեցին բոլոր շահագրգիռ կողմերի կողմից, ներառյալ  ԱԻՆ–ը և ՄԱԶԾ–ն՝ ապագա գործողությունները, սահմանված կարիքներին համապատասխան, վերանայելու և ձևափոխելու համար: Միևնույն ժամանակ համաձայնություն ձեռք բերվեց, որ նշված փորձը կանոնավոր կերպով կկիրառվի նաև ԱՌՆԱՊ–ի կողմից՝

- ապահովելու կարողությունների և կարիքների ինքնագնահատման մշակույթի ներդրումը որպես ռազմավարական և գործառական պլանավորման հիմք, և
- հետևելու ու կանոնավոր կերպով վերահսկելու զարգացման գործընթացը իրականացվող գործողությունների համապատասխանությունը ծրագրերի և կանխատեսումների նկատմամբ երաշխավորելու նպատակով:

## ՄՈՏԵՑՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՏՄՌԿ–ն համարվում է աղետների կառավարման ազգային համակարգի անբաժան մասը և հանդիսանում է ԱՌՆ ազգային ռազմավարության իրականացման ամենաարդյունավետ գործողություններից մեկը: Այն ապահովում է աղետների կառավարման տեղայնացման և ապակենտրոնացման մեխանիզմները և սկզբունքները՝ պահպանելով ուղղահայաց և հորիզոնական հաղորդակցման և համագործակցման կապը (Պատկեր 2):




**Պատկեր 2.** Աղետների կառավարման համակարգը Հայաստանում

Համայնքային մասնակցության գործընթացը, ներառյալ միջամտության հայեցակարգը, պլանավորումը և իրագործումը (Պատկեր 3) նախաձեռնվել և առաջնորդվել է Հայաստանի ՄԱԶԾ ԱՌՆ թիմի, ԽԿԳ, ԿՌԿ, գենդերային և կրթական ոլորտի, ինչպես նաև ՄԱԶԾ Բրատիսլավայի տարածքային կենտրոնի փորձագետների մասնակցությամբ:




**Պատկեր 3.** Համայնքային ներգրավվածության հայեցակարգն ու գործընթացը

ՏՄՌԿ-ն կառավարման տեխնոլոգիա է, որը կարևոր գիտելիքներ և պրակտիկ գործիքներ է տրամադրում համայնքների անդամներին՝ աղետների ռիսկի բացահայտման, վերլուծության և այդ խնդրին անդրադառնալու համար: Այն նաև ենթադրում է համայնքային կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում համապատասխան լուծումների ներառումը: Գործընթացը ենթադրում է հետևյալ հաջորդական քայլերի ձեռնարկումը (Պատկեր 4)՝




**Պատկեր 4.** ՏՄՌԿ ցիկլը և ընդհանուր պարտականությունների շրջանակը

## ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐԸ

ՏՄՌԿ մոդուլի փորձարկումը Հայաստանում օգնեց բացահայտելու կիրառված մեթոդաբանության առավելություններն ու թերությունները կամ, ավելի ճիշտ, մեթոդաբանության այն մասը, որ գործնական կիրառման տեսանկյունից ունի հետագա ճշգրտման և ճկունության ապահովման կարիք: Այս իմաստով, հարկ է նշել ՏՄՌԿ իրականացման գործընթացում ի հայտ եկած որոշ կարևոր բացահայտումներ, որոնք կազմում են նպաստող և սահմանափակող հարցերի/գործոնների մի ընդհանուր ոլորտ, որը դրականորեն կամ բացասականորեն է անդրադառնում ԱՌՆ ողջ գործընթացի վրա: Այս հարցերի վերլուծությունը և դրանց հատուկ ուշադրության արժանացնելը ուսուցանող փորձ կլինի ԱՌՆ ազգային համակարգում ՏՄՌԿ հետագա կիրառության համար:

*Ընտրված համայնքներում ՏՄՌԿ մոդուլի փորձարկման բացահայտումները*

| Նպաստող գործոններ | Սահմանափակող գործոններ |
|---|---|
| ՏՄՌԿ կարևորությունը՝ | Արդիականությունը ԱՌՆ ազգային հայեցակարգի և վերջինիս հետ կապված գործնական քայլերի իրականացմանը նպաստելու առումով |
| • Տրամադրում է գործելու հստակ նկարագիր և կիրառական գործիքներ ԱՌՆ կառավարման ազգային համակարգի տեղայնացման և ապակենտրոնացման համար:<br>• Ապահովվում է ՀԳԾ և ԱՌՆ ազգային ռազմավարության իրականացումը տեղական մակարդակում:<br>• Նպաստում է ուղղահայաց (կառավարման) և հորիզոնական (համագործակցության / համակարգման) կապերի ստեղծմանն ու զարգացմանը ԱՌՆ ոլորտում:<br>• Ապահովում է ԱՌՆ ձեռնարկումների ներդաշնակեցումը ազգային, մարզային և տեղական մակարդակներում (վերաբերում է ինչպես ռազմավարական, այնպես էլ գործառական ձեռնարկումներին):<br>• Նպաստում է արդի նորարարական մոտեցումների և մշակույթի ներդրմանը (հակակարկտային ցանցերի կիրառումը, որպես հարմարվողականության միջոցառում, գրավում է ինչպես ուղղակի շահառուներին, այսինքն՝ ֆերմերներին, այնպես էլ գործարար կազմակերպություններին, ինչպիսիք են բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները):<br>• Արտացոլում է ԱՌՆ միջոցառումների և զարգացման ոլորտային պլանների փոխհարաբերություններն ու դրանց միջև կապը:<br>• Ապահովում է կայուն հիմքեր և անհրաժեշտ տվյալներ գյուղական համայնքի ԱՌՆ հավաստագրի մշակման համար, որն ամբողջական տեղեկություններ կպարունակի տվյալ համայնքի ռիսկերի, ինչպես նաև ԱՌՆ նախաձեռնումների և հետագա գործողությունների վերաբերյալ: | • Առկա հաստատութենական մշակույթը (որը վերաբերում է նաև ներգրավված պետական կառույցներին) և մարդկային վարքագիծը (համայնքի բնակիչների առումով) հաճախ խոչընդոտ են հանդիսանում նման ձեռնարկումների համար՝ վերածվելով անհատական, հավաքական և պաշտոնական շահերի բախման:<br>• Սոցիալական անապահովությունը, գյուղատնտեսական խնդիրների նկատմամբ շարունակական անուշադրությունը, ներքին և արտաքին արտագաղթի բարձր մակարդակը հաճախ բերում են համայնքային կյանքի վատթարացման, որի արդյունքում առաջ են գալիս խոչընդոտներ և ձևավորվում է անվստահություն՝ ակտիվ մասնակցություն պահանջող ցանկացած նախաձեռնության նկատմամբ: ՏՄՌԿ–ն ձգտում է հաղթահարել այդ խոչընդոտները:<br>• Ոչ բավարար վարչական մեխանիզմներ, որոնք կնպաստեին ԱՌՆ կառավարման իրականացմանը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Պաշտոնապես նշանակված լինելով աղետների կառավարման պատասխանատու՝ համայնքի ղեկավարն իրականում չունի համապատասխան կառավարման կարողություններ՝ որոշումների կայացման և պլանավորման գործընթացների վրա ներգործություն ունենալու համար: Մեծ ջանքեր են պահանջվում վերին ատյանների կողմից պարտադրված պլաններում որևէ փոփոխություն կատարելու համար:<br>• Մարդկային վարքագիծը, հատկապես բնության և բնական ռեսուրսների նկատմամբ անտարբեր վերաբերմունքը, մնում են աղետների առաջացման հիմնական պատճառն ու խթանման միջոցը: Լինելով սոցիալապես անապահով և մշտապես ապրելով անվստահության և անորոշ ապագայի զգացումով, մարդիկ հաճախ անմիջական եկամուտը վեր են դասում անվտանգության և դիմակայման խնդիրներից: |

| ՏՄՌԿ հայեցակարգի մշակումը՝ | ԱՌՆ կառավարման ազգային համակարգի զարգացման միտումները և դժվարությունները |
|---|---|
| • Քննարկվել են ԱՌՆ կարողությունների գնահատման առաջարկությունները:<br>• Արտացոլվել են ԱՌՆ ազգային ռազմավարության դրույթները:<br>• Մշակվել է պատշաճորեն՝ ազգային ԱՌՆ համակարգին համապատասխան:<br>• Մշակվել է մասնակցային սկզբունքով՝ ապահովելով ԱՌՆ հիմնական շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածությունը ԱՌՆ ազգային պլատֆորմի հիման վրա:<br>• Հաշվի են առնվել բազմաթիվ շահագրգիռ կողմերի կարիծիքներն ու մոտեցումները:<br>• Բոլոր դերակատարների, այդ թվում նաև պետական կառույցների կողմից ընդունվում է որպես ընդհանուր գործիք: | • Հարկ է անել ավելին՝ հատկապես մարդկանց սեփական կարողությունների նկատմամբ հավատը վերականգնելու ուղղությամբ: Թեև աղետների կառավարման հիմնական պատասխանատվությունը կրում է կառավարությունը, համայնքների դերը դեռևս լիովին չի գնահատվում: ՏՄՌԿ հայեցակարգի զարգացման գործընթացը, հատկապես ծրագրի վաղ փուլերում, ընթացավ նշված ընկալմամբ:<br>• Չնայած ձեռք բերված համաձայնությանը, ԱՌՆ դերակատարների միջև տերմինաբանության կամ գործառական մակարդակի մանրամասների ընկալման առումով դեռևս առկա են տարաձայնություններ: Բարեբախտաբար, այս խնդիրները համայնքների, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների կողմից խոչընդոտներ չեն համարվում: Սա ապացուցում է, որ ապագայում պետք է հասնել փոխադարձ վստահության, արհեստավարժության և համագործակցային էթիկայի միևնույն մակարդակին՝ թյուրըմբռնումներից կամ հակասություններից խուսափելու համար: |
| **Հայեցակարգի շրջանառումը և հաստատումը՝** | **Հիմնական ԱՌՆ դերակատարների միջև փոխադարձ ըմբռնման և համաձայնության ձեռքբերում, համագործակցության և հաղորդակցման պատրաստակամության ապահովում** |
| Դիտարկումների մեծ մասը վերաբերում է ներգրավված բոլոր կողմերին.<br>• Բաց և թափանցիկ մոտեցում, կիսվելու պատրաստակամություն,<br>• ԱԻՆ ղեկավարության վճռականությունը՝ փոխադարձ համաձայնեցված և իրագործելի ԱՌՆ կառավարման մեխանիզմ ստեղծելու ուղղությամբ, որը պատշաճ կերպով կընդունվի և կկիրառվի Հայաստանի գյուղական համայնքների կողմից,<br>• Նպաստավոր միջավայր ապահովելու ԱՌՆ ազգային պլատֆորմի համախմբող դերը, որը կերաշխավորի ԱՌՆ գործընկերների համագործակցությունը,<br>• Համագործակցության և ՏՄՌԿ հայեցակարգի շուրջ համաձայնության ձեռքբերման պատրաստակամություն,<br>• Պատեհաժամ արձագանքի և արհեստավարժ գիտելիքների տրամադրում: | • Համապատասխան պետական կառույցների միջև վատ փոխհարաբերություններ / համագործակցություն: Գոյություն ունեցող ներքին ընթացակարգերը սահմանափակում են տարբեր պետական մարմինների (օրինակ՝ նախարարությունների) կամ նույնիսկ միևնույն մարմնի վարչությունների աշխատակիցների ազատ հաղորդակցման կամ որևէ ընդհանուր հարցի շուրջ համաձայնության ձեռքբերման հնարավորությունները: Յուրաքանչյուր նման նախաձեռնության իրականացման համար պահանջվում է ղեկավարության հատուկ թույլտվությունը: Այս հանգամանքն իրական խնդիրներ չառաջացրեց, սակայն ժամանակ առ ժամանակ էականորեն դանդաղեցնում էր գործընթացը: Այս գործոնը հարկ է հաշվի առնել հետագա պլանավորման գործընթացում: |

| ՏՄՌԿ ներդրումը մարզային մակարդակում՝ | Մարզային իշխանությունների և այլ ԱՌՆ դերակատարների ներգրավում, ԱՌՆ մարզային թիմերի ձևավորում |
|---|---|
| ԱԻՆ ՓԾ մարզային ներկայացուցիչների և մարզային իշխանությունների շնորհիվ ի սկզբանէ ստեղծվեց ակտիվ աշխատանքային մթնոլորտ: Ծրագրի թիմի և տեղի բնակիչների հարաբերությունները դրական ուղղվածություն ստացան ՏՄՌԿ նկատմամբ, որի արդյունքում ձեռք բերվեց՝<br>• մեծ հետաքրքրասիրություն նախաձեռնության նկատմամբ, որն ընդունվեց ոչ պաշտոնական մակարդակում,<br>• տեղեկատվության հասանելիություն և անկեղծ վերաբերմունք,<br>• աջակցություն ԱՌՆ թիմի ձևավորմանը և նրա հետագա աշխատանքներին: Թիմի դիվերսիֆիկացված անդամակցության հավանություն՝ պետական և ոչ պետական մասնագիտացված հաստատությունների և ՀԿ–երի ներկայացուցիչներ, հոգևորականներ<br>• Գիտելիքների փոխանակմանը / կրթական նախաձեռնումներին աջակցության ցուցաբերում և սովորելու ցանկություն,<br>• Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերի ընդունում և վերջիններիս հետ, որպես հավասար գործընկերներ, համագործակցելու պատրաստակամություն,<br>• Ակտիվ մասնակցություն ՏՄՌԿ իրականացման բոլոր փուլերում,<br>• Գործընթացի ապահովման համար առաջնորդության ստանձնման պատրաստակամություն: | • Գոյություն ունեցող բյուրոկրատիան և հաստատութենական դանդաղ գործունեությունը ստեղծում են որոշակի խնդիրներ: Համայնքի անդամներից ոմանք բավական հոռետեսորեն էին տրամադրված ցանկացած նախաձեռնության կամ փոփոխության նկատմամբ: Նրանց կողմից ընդգծվող հիմնական պատճառը կապված էր ֆինանսական ռեսուրսների սակավության և մարդկային ռեսուրսների ոչ պատշաճ կարողությունների կամ մեծածավալ կոռուպցիայի և իրավազանցության հետ:<br>• Չկա հստակություն ստեղծված մարզային կառույցների միջև (մարզային իշխանություններն ի դեմս ազգային ճյուղային կառույցների): Գոյություն ունեն համընկնող պարտականություններ, կամ էլ հակառակը՝ բացեր, երբ հարցի լուծման համար ոչ մի պատասխանատու չկա: Սա հայտնի փաստ է, և ԱՌՆ ազգային ռազմավարության առաջնահերթ ուղղություններում նշված է որպես բարելավման ենթական ոլորտ: Այնուամենայնիվ, գործնական լուծումներ փնտրելիս հարկ է հաշվի առնել մարզային իշխանությունների ներգրավման հարցը:<br>• ԱՌՆ ազգային պլատֆորմի և ԱԻՆ մարզային կառույցների կողմից անհրաժեշտ է էական ջանքերի գործադրում՝ արտակարգ իրավիճակներում պետական կառույցների գործունեությունը համակարգելու և առաջնորդելու ուղղությամբ, որը կպահպանի և կապահովի մարզային ԱՌՆ թիմի գործունեության շարունակականությունը: |
| ՏՄՌԿ ներկայացումը տեղական մակարդակում՝ | ԱՌՆ տեղական թիմերի ձևավորում, ՏՄՌԿ մոդուլի իրականացում, կրթական քարոզարշավի իրականացում |
| Նախաձեռնությունը տեղական իշխանությունների և համայնքների բնակչության կողմից մեծ հավանության արժանացավ: Մարդիկ ցուցաբերեցին մեծ հետաքրքրվածություն և պատրաստակամություն՝ | ՏՄՌԿ իրականացման ամբողջ գործընթացում նկատվող դրական վերաբերմունքի հետ մեկտեղ դիտարկվեցին որոշ փաստեր (հիմնականում բոլոր համայնքներում), որոնք անհրաժեշտ է հիմնավոր կերպով քննարկել և անդրադառնալ ապագա գործողությունների պլանավորման և իրականացման ընթացքում: Դրանք են. |

- մասնակցել գործընթացին և ստանձնել պարտավորություններ սեփական խնդիրների նկատմամբ,
- ակտիվ մասնակցել ռիսկերի բացահայտման և առաջնահերթությունների սահմանման, լուծումների մշակման և պլանավորման, ինչպես նաև ռիսկի նվազեցման հետ կապված լուծումների և պլանների իրականացման գործընթացներում,
- դառնալ ԱՌՆ կամավորական թիմի մասնակից՝ ձևավորելով ԱՌՆ ազգային պլատֆորմի տեղական մասնաճյուղ,
- մասնակցել աշխատանքի միջոցով սովորելու գործընթացին և ԱՌՆ իրազեկման քարոզարշավին,
- սովորել ավելին ԱՌՆ վերաբերյալ, այդ թվում՝ ԱՌՆ–ն զարգացման ոլորտային պլաններում ինտեգրելու նոր հասկացության, կարևոր խնդիրների բացահայտման և տարբեր ոլորտների միջև կապի ստեղծման մասին,
- ձեռք բերել արդիական գիտելիքներ ռիսկի կառավարման վերաբերյալ, հաշվի առնելով կլիմայի փոփոխության հետևանքները,
- ընդունել իրենց ձայնը որոշումներ կայացնողներին լսելի դարձնելու նոր մեխանիզմները («Vox Populi» ֆոտոպատմությունների մրցույթ):
- Ծրագրի կողմից խրախուսվող հավասար հնարավորությունների գաղափարը լայնորեն ընդունվեց համայնքների անդամների կողմից տարբեր սոցիալական խմբերից ներգրավելով հավասար թվաքանակով մարդկանց՝ անկախ տարիքից (13–78 տարեկան) և սեռից:
- Գյուղական համայնքները ունեն աղոտ իրազեկվածություն աղետների պատրաստվածության և արձագանքման վերաբերյալ:
- Նույնիսկ Հայաստանում ավերիչ աղետների «հարուստ» պատմության առկայության պարագայում, մարդիկ պատշաճ ուշադրություն չեն դարձնում առաջացող ռիսկերին: Վերջին տարիների ընթացքում մշտական գոյատևման պայմաններում կորել է նույնիսկ աղետներին դիմակայման և բնության ու բնական ռեսուրսների նկատմամբ զգույշ վերաբերվելու ավանդական մշակույթը:
- Վատթարացած ենթակառուցվածքները, սոցիալական անապահովությունը և գյուղական համայնքների խնդիրների նկատմամբ անուշադրությունը ստեղծել է սեփական հողում վտանգի տակ լինելու զգացողություն: Այլ տեղերում ավելի լավ կյանքի պայմաններ փնտրողներն իրականում հոգ չեն տանում այն միջավայրի մասին, որտեղ ապրում են, այլ ձգտում են գտնել հեռանալու հնարավորություններ:
- Որոշ դեպքերում առկա է շահերի բախում և անվստահություն համայնքի ղեկավարի և անդամների միջև: Նման դեպքերում առաջարկություններ կամ լուծումներ առաջարկելիս անհրաժեշտ է ցուցաբերել դիվանագիտություն և բարձր գիտակցություն:
- Համայնքներից շատերում գոյություն ունեցող պաշտոնական պլանավորման ընթացակարգը չի պատկերում համայնքի իրական խնդիրներն ու փաստերը, որի պատճառը ֆինանսական միջոցների մշտական սակավությունն է: Դրանք ամենախոցելի համայնքներն են, որոնք ընթացիկ ծախսերը հոգալու համար մշտապես ապավինում են պետական բյուջեից հատկացումներին: Հարկ է նշել, որ այս համայնքներն ակնկալում են կառավարության հատուկ ուշադրությունը, որը սովորաբար ի հայտ է գալիս որևէ արտասովոր դեպքից հետո:
- Առկա է տեղեկատվության վատ հասանելիություն հատկապես հեռավոր համայնքներում՝ հաղորդակցման միջոցների բացակայության պատճառով: Սա վերաբերում է նաև ներքին տեղեկատվական հոսքին, որն իրական սպառնալիք է դառնում մեծ աղետների դեպքում:

| | |
|---|---|
| | • Առկա է տեղեկատվության վատ հասանելիություն հատկապես հեռավոր համայնքներում՝ հաղորդակցման միջոցների բացակայության պատճառով: Սա վերաբերում է նաև ներքին տեղեկատվական հոսքին, որն իրական սպառնալիք է դառնում մեծ աղետների դեպքում:<br>• Առկա են կասկածներ և հոռետեսություն կլիմայի փոփոխության և դրա հետևանքների նկատմամբ, որոնք կարող են ի հայտ գալ 30–50 տարի հետո:<br>• Հիմնականում փախստականներով բնակեցված համայնքներում նկատվում է դժկամություն ցանկացած նախաձեռնության նկատմամբ, որն անմիջապես չի հանգեցնում սոցիալական բարելավումների: Գործընթացում ընդգրկվելուց առաջ նման համայնքներին անհրաժեշտ է ավելի լայն պատկերացում տալ շոշափվող ԱՌՆ խնդիրների վերաբերյալ: |

## 3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տվյալ հանգամանքներում ՏՄՌԿ կարևորության և կիրառելիության վերաբերյալ վերոնշյալ վերլուծությունը կարող է հակասական տպավորություն գործել: Այնուամենայնիվ, ՏՄՌԿ իրականացման փորձը ցույց տվեց, որ չնայած համայնքներում օբյեկտիվ և սուբյեկտիվ խնդիրներին, նկատելի է բնակչության կողմից իրենց և աճող սերնդի ապագայի նկատմամբ պատասխանատվության ստանձնման դրական միտում:

**Աղետների ռիսկի նվազեցումը՝**

- արմատավորվել է համայնքային կյանքի շատ ոլորտներում,
- ազդում է և ազդեցություն կրում կլիմայի փոփոխության և բնապահպանության վատթարացման հետևանքներից,
- ռիսկի պատշաճ կառավարումը, որպես դիմակայման և կայուն զարգացման ուղի, այսօր Հայաստանի բնակչության համար համարվում է տարբեր մասնագիտված նախաձեռնություններն ու քաղաքականությունները համատեղելու և մեկ միասնական գործողության վերածելու յուրահատուկ հնարավորություն:

Այս ամենի լավագույն ապացույցն է ՀՀ կառավարության կողմից ընդունված ԱՌՆ ազգային ռազմավարությունը և 2012–2015թթ. գործողությունների ծրագիրը: Հաջողության միակ նախապայմանը հետևողական և կանոնավոր աշխատանքների իրականացումն է՝ պայմանավորված փոխըմբռնմամբ և համակարգված գործողություններով: Սա վերաբերում է թե՛ ազգային ԱՌՆ կառույցներին, և թե՛ միջազգային գործընկերներին: Տեղական մակարդակում ռիսկի կառավարումը կազմում է այս կարևորագույն նախաձեռնության էական մասը:

*ՀԱՎԵԼՎԱԾ 1*

# ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

**Համայնքի բնակչության համար**

Պատասխանները նշել (+) եթե “**այո**”, (–) եթե “**ոչ**” և զրո (0) եթե “**չգիտեմ**”.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Դուք ծանոթ եք արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմնահարցերին: | | | | |
| 2. | Ըստ ձեզ դուք պարտավոր եք մասնակցել արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացմանը: | | | | |
| 3. | Ըստ ձեզ արտակարգ իրավիճակներում դուք ունեք որևէ իրավունքներ<br>Եթե ԱՅՈ, ապա ինչի իրավունք դուք ունեք՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի | կրած վնասների փոխհատուցում<br>ստանալ տեղեկատվություն արտակարգ իրավիճակների մասին<br>ստանալ տեղեկատվություն դրանց առաջացման վտանգի մասին<br>ստանալ տեղեկատվություն ձեր պաշտպանվածության աստիճանի մասին<br>տրամադրել սեփականությունը ժամանակավոր օգտագործման հասարակության և պետության կարիքների համար | | | |
| 4. | Ի՞նչ եք հասկանում աղետ ասելով:<br>(պարզել թե ազդեցության ինչ աստիճանից են հասկանում աղետի մասին) | | | | |
| 5. | Ի՞նչ եք հասկանում աղետի գոտի ասելով: | | | | |
| 6. | Որոնք են ձեր համայնքում տեղի ունեցած պատմական և վիճակագրական տվյալները խոշոր աղետների վերաբերյալ: Ո՞ր թվականներին են ձեր համայնքում դրանք գրանցվել, ի՞նչ ուժգնություն են ունեցել (բարձր,միջին,ցածր), ի՞նչ հետևանքներ են ունեցել համայնքի վրա: | Տարի | Աղետի ուժգնություն | համայնքի որ մասն է առավել շատ տուժել | բացասական ազդեցությունը |
| 7. | Դուք կամ ձեր ընտանիքի անդամները ուղղակիորեն տուժե՞լ եք որևէ աղետից կամ արտակարգ իրավիճակից:<br>Եթե ԱՅՈ, ի՞նչ էր պատահել և ինչպես եք արձագանքել: | Աղետի տեսակը | | Ինչ էր պատահել | Ինչպես եք արձագանքել |

| 8. | Ո՞վ կամ ո՞ր կառույցներն են արձագանքել: Հաստատություններ և անձինք, որոնք արձագանքել են | Ինչպիսի՞ օգնություն կամ աջակցություն է տրամադրվել | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Սոցիալ – հոգեբանական | Ֆինանսական | վնասի փոխհատուցում | աջակցում վերականգնման աշխատանքներին | Սննդի տրամադրում | ջուր և սանիտարիա | կացարան | Որոնում | Պաշտպանություն | Այլ | Այլ | Օգնություն տրամադրողի սեռը |
| 8.1 | Հարազատներ | | | | | | | | | | | | |
| 8.2 | Հարևաններ | | | | | | | | | | | | |
| 8.3 | Տեղական իշխանություն | | | | | | | | | | | | |
| 8.4 | ՀՀ կառավարություն | | | | | | | | | | | | |
| 8.5 | Փրկարար ծառայություն | | | | | | | | | | | | |
| 8.6 | Առողջապահական համակարգ | | | | | | | | | | | | |
| 8.7 | Ոստիկանություն | | | | | | | | | | | | |
| 8.8 | Մարդասիրական կազմակերպություններ (նշել) | | | | | | | | | | | | |
| 8.9 | | | | | | | | | | | | | |

9. Ինչ բնական վտանգներ են բնորոշ ձեր համայնքին: (նշել երեք տարբերակ)

- երկրաշարժ
- սողանք
- սելավ
- ջրհեղեղ
- գետի վարարում և հեղեղում
- ապարաթափվածքներ
- ուժեղ քամիներ
- ուժեղ տեղումներ
- կարկուտ
- ցրտահարություն
- երաշտ
- այլ (նշել)______________

10. Ինչ՞ յուրահատուկ վտանգ է սպառնում ձեր համայնքին:

- արտահոսք ջրամբարից
- վթար գործարանում
- վթար ՀԷԿում
- երկաթուղային վթար
- շրջակա միջավայրին հասցված վնաս
- անտառային հրդեհներ
- սահմանային հրադադարի խախտում
- այլ (նշել)______________

11. Ըստ ձեզ, որո՞նք են այդ վտանգների հիմնական պատճառները:

| Վտանգ (Վ) | Պատճառ |
|---|---|
| Վ1___________ | |
| Վ2___________ | |
| Վ3___________ | |
| Վ4___________ | |
| Վ5___________ | |

| 12. | Ըստ ձեզ, ե՞րբ են այդ երևույթները / վտանգները դառնում վտանգավոր համայնքի համար: | ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՎՏԱՆԳ | ՁՄԵՌ | ԳԱՐՈՒՆ | ԱՄԱՌ | ԱՇՈՒՆ | ԴԺՎԱՐ Է ՏԱԼ ՄԻԱՐԺԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ |
| 12.1 | | | | | | |
| 12.2 | | | | | | |
| 12.3 | | | | | | |
| 12.4 | | | | | | |
| 12.5 | | | | | | |
| 12.6 | | | | | | |
| 12.7 | | | | | | |

| 13. | Ո՞ր բնական երևույթները կամ վտանգներն են, որ դարձել են աղետ և ի՞նչ հաճախականությամբ: (նշել երեք տարբերակ) | ՎՏԱՆԳ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | Վ 1____________ | Վ2___________ | Վ3__________ | Վ4__________ | Վ5_________ |
| 13.1 | Վեց ամիսը մեկ անգամ կամ ավելի հաճախ | | | | | |
| 13.2 | Տարին մեկ անգամ | | | | | |
| 13.3 | Երկու–երեք տարին մեկ անգամ | | | | | |
| 13.4 | Հինգ տարին մեկ անգամ | | | | | |
| 13.5 | Հինգ տարվա ընթացքում հազվադեպ | | | | | |
| 13.6 | Տաս տարվա ընթացքում հազվադեպ | | | | | |
| 13.7 | Քսան տարվա ընթացքում հազվադեպ | | | | | |
| 13.8 | Երեսուն տարվա ընթացքում հազվադեպ | | | | | |

Երկրաշարժ

ոչսեյսմակայուն շինարարություն
իրազեկվածության պակաս
վաղ ազդարարման համակարգի բացակայություն
____________________________
____________________________

Գետի վարարում, հեղեղում

առատ տեղումներ
պատնեշների բացակայություն
գետի աղտոտվածություն
____________________________
____________________________

14. Որո՞նք են աղետի առաջացման հիմնական պատճառները:

____________________________
____________________________
____________________________
____________________________
____________________________
____________________________
____________________________
____________________________
____________________________
____________________________
____________________________
____________________________

15. Ըստ ձեզ, ո՞ր կառույցներին են առավել սպառնում այդ վտանգները:

(1–ցածր, 2–միջին, 3–բարձր)

| Կառույցներ | | Վ1________ | | | Վ2________ | | | Վ3________ | | | Վ4________ | | | Վ5________ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 1 | 2 | 3 | 1 | 2 | 3 | 1 | 2 | 3 | 1 | 2 | 3 |
| 15.1 | Բնակելի տներ | | | | | | | | | | | | | | | |
| 15.2 | Ցանքատարածքներ | | | | | | | | | | | | | | | |
| 15.3 | Միջհամայնքային ճանապարհներ | | | | | | | | | | | | | | | |
| 15.4 | Համայնքի ճանապարհներ | | | | | | | | | | | | | | | |
| 15.5 | Ջրամատակարարման համակարգ | | | | | | | | | | | | | | | |
| 15.6 | Էներգետիկ համակարգ | | | | | | | | | | | | | | | |
| 15.7 | Կապի համակարգ | | | | | | | | | | | | | | | |
| 15.8 | Դպրոց | | | | | | | | | | | | | | | |
| 15.9 | Կամուրջներ | | | | | | | | | | | | | | | |
| 15.10 | | | | | | | | | | | | | | | | |
| 15.10 | | | | | | | | | | | | | | | | |
| 15.11 | | | | | | | | | | | | | | | | |

16. Ըստ ձեզ, ի՞նչ հետևանքներ կարող են ունենալ բնակչության վրա հավանական կորուստները / վնասները:

| Վնասներ | Հետևանքներ |
|---|---|
| ցանքատարածքներ | բերքի նվազում, աղքատության աճ և այլն |

17. Ի՞նչ միջոցառումներ է հնարավոր իրականացնել սպառնացող աղետի ռիսկը նվազեցնելու համար:

18. Ըստ ձեզ, ո՞վքեր են առավել խոցելի աղետների և արտակարգ իրավիճակների նկատմամբ:

(նշել միայն մեկ տարբերակ)

հաշմանդամներ
մեծահասակներ
երեխաներ
կանայք
տղամարդիկ
այլ (նշել)

բոլորը

| | | |
|---|---|---|
| 19. | Ըստ ձեզ, համայնքի ո՞ր շինությունները, կառույցներն ու ենթակառույցներն են առավել խոցելի աղետների և արտակարգ իրավիճակների նկատմամբ: | դպրոց<br>մանկապարտեզ<br>համայնքապետարան<br>ակումբ<br>կամուրջ, բուժկետ, ամբուլատորիա, հիվանդանոց<br>այլ (նշել) |

Ըստ ձեզ, ինչու՞ են այդ կառույցները խոցելի:

20\.

| | Խոցելիության պատճառը | Կառույցներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | դպրոց | մանկապարտեզ | համայնքապետարան | կամուրջ | առողջապահական հիմնարկ | այլ (նշել) |
| 20.1 | վնասված է | | | | | | |
| 20.2 | տեղակայված է սողանքավտանգ գոտում | | | | | | |
| 20.3 | տեղակայված է գետի ափին շատ մոտ | | | | | | |
| 20.4 | | | | | | | |
| 20.5 | | | | | | | |
| 20.6 | | | | | | | |
| 20.7 | | | | | | | |

| | | Այո | Մասամբ | Ոչ | Չգիտեմ |
|---|---|---|---|---|---|
| 21. | Ըստ ձեզ, աղետի դեպքում տեղական իշխանությունը պատրաստ է արձագանքելու աղետներին: | | | | |
| 22. | Ըստ ձեզ, աղետի դեպքում ձեր համայնքի բնակչությունը պատրա՞ստ է դիմակայելու և արձագանքելու: | | | | |
| 23. | Ըստ ձեզ, աղետի դեպքում դուք պատրա՞ստ եք դիմակայելու: | | | | |
| 24. | Դուք ծանո՞թ եք արտակարգ իրավիճակների ժամանակ վարքականոններին: | | | | |
| 25. | Դուք ծանո՞թ եք առաջին օգնության հիմունքներին: | | | | |
| 26. | Դուք մասնակցե՞լ եք աղետներին նախապատրաստման դասընթացների:<br>Եթե ԱՅՈ, նշեք ե՞րբ և ու՞մ կողմից էր այն կազմակերպված: | | | | |

| | | Կազմակերպություն | Գործունեություն |
|---|---|---|---|
| 27. | Ի՞նչ կազմակերպություններ են առկա / աշխատել ձեր համայնքում և ինչպիսի աշխատանք / գործունեություն են իրականացրել: | | |

| | | | Այո | Ոչ | Չգիտեմ |
|---|---|---|---|---|---|
| 28. | | Ձեր համայնքում աղետների արձագանքման ի՞նչ գործիքներ / միջոցներ են առկա: | | | |
| | 28.1 | Աղետներին արձագանքման պլան | | | |
| | 28.2 | Համայնքի տարահանման պլան | | | |
| | 28.3 | Արագ արձագանքման խումբ | | | |
| | 28.4 | Վաղ ազդարարման համակարգ | | | |
| | 28.5 | Հատուկ շչակ | | | |
| | 28.6 | Հեռախոս | | | |
| | 28.7 | | | | |

| | | |
|---|---|---|
| 29. | Որտեղի՞ց եք դուք ստանում տեղեկություններ սպառնացող վտանգի մասին: | տեղական իշխանություն<br>համայնքի բնակչություն<br>հեռուստատեսություն<br>ռադիո<br>այլ (նշել)<br>____________________ |

30. Ինչպիսի՞ տեղեկատվական աղբյուրներ են հասանելի ձեզ:

- տեղական ռադիո
- հանրային ռադիո
- տեղական հեռուստատեսու-թյուն
- հանրային հեռուստատեսու-թյուն
- արբանյակային հեռուստա-տեսություն
- Ինտերնետ
- մամուլ
- այլ (նշել) ___________________

31. Ո՞րն է ձեր ընտանիքի եկամտի հիմնական աղբյուրը:

- գյուղատնտեսությունը
- անասնապահությունը
- գյուղմթերքների արտադրությունը
- առևտուր/բիզնես
- արդյունաբերությունը
- աշխատավարձ
- թոշակ, նպաստ
- դրսից ստացվող դրամական օգնությունը
- այլ (նշել) ___________________

32. Ո՞րն է ձեր խմելու ջրի հիմնական աղբյուրը:

- կենտրոնացված
- անհատական համակարգ
- աղբյուր
- փոխադրվող ջուր
- այլ (նշել) ___________________

33. Ո՞րքանով են ձեզ հասանելի հետևյալ ծառայությունները:

| | Ծառայություն | Հասանելիություն | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հասանելի | դժվար հասանելի | անհասանելի | չգիտեմ |
| 33.1 | փրկարար | | | | |
| 33.2 | հրշեջ | | | | |
| 33.3 | առողջապահական | | | | |
| 33.1 | փրկարար | | | | |
| 33.4 | կրթական | | | | |
| 33.5 | սոցիալական | | | | |
| 33.6 | ոստիկանություն | | | | |
| 33.7 | ապահովագրություն | | | | |

34. Ձեր կարծիքով ծառայությունները առավել հասանելի են

- տղամարդ
- կին
- բոլորին՝ առանց խտրականության
- ___________________
- ___________________

35. Ըստ ձեզ ո՞վ կարող է էական օգնություն ցուցաբերել աղետից անմիջապես հետո մինչ հիմնական ուժերի ժամանումը:

- տեղական իշխանությունը
- համայնքի բնակչությունը
- տեղի գործարարները
- ուսուցում անցած կամավորները
- այլ (նշել)
- ___________________
- ___________________

| | | |
|---|---|---|
| 36. | Ըստ Ձեզ ո՞ր կառույցները կարող են էական դեր խաղալ աղետի դեպքում: | տեղական իշխանությունը<br>ՀՀ կառավարությունը<br>փրկարար ծառայությունը<br>առողջապահական համա-կարգը<br>սոցիալական համակարգը<br>Մարդասիրական կազմակեր-պությունները<br>եկեղեցին<br>չգիտեմ<br>այլ (նշել)<br>___________________<br>___________________ |
| 37. | Ձեր համայնքում կա՞ բուժկետ: | այո ոչ չգիտեմ |
| | Եթե ԱՅՈ, ապա ձեր բուժկետը ապահովված է | դեղորայքով<br>բուժ. սարքավորումներով<br>առաջին օգնության անհրաժեշտ պարա-գաներով<br>հատուկ սարքավորումներով<br>այլ (նշել)<br>___________________ |
| 38. | Ձեր համայնքում կատարվու՞մ է աղբահանություն: | այո մասամբ ոչ չգիտեմ |
| | Եթե ԱՅՈ, ու՞մ ուժերով է այն կազմակերպվում: | համայնքի բնակչության<br>տեղական իշխանության<br>գործարարի<br>այլ(նշել)<br>___________________ |
| | Եթե , ՈՉ ապա որտե՞ղ / ինչպես եք դուք կատարում աղբահանությունը: | ձորակում<br>գյուղից դուրս<br>գյուղի ներսում<br>այլ վայրում<br>սեփական բակում /բակի փոսում/<br>այլ (նշել) |
| 39. | Ըստ ձեզ աղետների և արտակարգ իրավիճակների դեպքում ո՞րոնք են ամենաանհրաժեշտ քայլերը, որոնք պետք է իրականացվեն:<br>(նշել երեք տարբերակ) | Նախազգուշացնել վտանգի մասին:<br>Տարահանել վտանգի մեջ գտնվողներին:<br>Առաջին օգնություն ցուցաբերել տուժածներին:<br>Օգնել տեղական իշխանություններին պաշտպանել համայնքը:<br>Ապահովել սննդով և  խմելու ջրով:<br>Առաջարկել հոգեբանական աջակցություն:<br>Ապահովել կացարանով:<br>Օգնել փրկել տնտեսությունն ու անասուններին:<br>այլ/նշել/<br>___________________ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Կցանկանայի՞ք կամավոր սկզբունքով ընդգրկվել աղետներից առաջ և հետո իրականացվող աշխատանքներին: | | Այո | Ոչ |
| 40. | Եթե ՈՉ, ինչո՞ւ:<br>Եթե ԱՅՈ, նշեք երեք տարբերակ: | Իրականացնել աղետների նախապատրաստման և կանխարգելման աշխատանքներ:<br>Մասնակցել բնակչության իրազեկման և ուսումնական տարահանումների կազմակերպման աշխատանքներին:<br>Աղետների դեպքում հասարակական աշխատանք իրականացնել:<br>Փրկել վտանգի մեջ գտնվողներին:<br>Օգնել փրկել ունեցվածքը:<br>Տուժածներին ապահովել կացարանով և սննդով:<br>Ցուցաբերել առաջին օգնություն:<br>Տեղեկացնել մարդկանց վտանգի մասին: | | |
| 41. | Կցանկանայի՞ք մասնակցել իրազեկման դասընթացների: | Այո | | Ոչ |
| 42. | Ո՞ր աղետի կամ արտակարգ իրավիճակների մասին կցանկանայիք իմանալ: | երկրաշարժ<br>ջրհեղեղ<br>երաշտ<br>____________________<br>____________________ | | |
| 43. | Ինչի՞ մասին կցանկանայիք իմանալ աղետների և արտակարգ իրավիճակների հետ կապված: | փրկարարական աշխատանքներ<br>վարքականոններ<br>առաջին օգնություն<br>տարահանում<br>այլ/նշել/<br>____________________ | | |

## Կլիմայական ռիսկի կառավարում / Կլիմայի փոփոխություն

| | | | | |
|---|---|---|---|---|
| 44. | Ծանոթ եք արդյո՞ք կլիմայի փոփոխության հետ կապցած խնդիրներին: | | Այո | Ոչ |
| 45. | Բնութագրեք թե ըստ Ձեզ ՙինչ է նշանակում կլիմայի փոփոխությունը: | | | |
| 46. | Ինչպիսի՞ խնդիրներ ունեք Ձեր համայնքում՝ կապված կլիմայի փոփոխության հետ | | | |
| 47.<br>48. | Նկատել եք արդյոք վերջին 20 տարվա ընթացքում եղանակային կտրուկ փոփոխություններ, որոնք ըստ Ձեզ կապված են կլիմայի փոփոխության հետ: | | Այո | Ոչ |
| 49. | Կլիմայի փոփոխության հետ կապված ինչպիսի երևույթներ են բնորոշ ձեր համայնքի համար /գնահատեք հետևալ երևույթները 1–ից մինչև 5 բալերով/ | կարկտահարություն<br>երաշտ<br>ցրտահարություն<br>ուժեղ քամիներ<br>հորդառատ<br>անձրևներ<br>գերխոնավություն<br>չորայնություն<br>անտառային<br>հրդեհներ | | |
| 50. | Ըստ Ձեզ արդյո՞ք վերջին 10 տարիներին վտանգավոր կլիմայական բնույթի երևույթները առավել հաճախակի և ինտենսիվ են դարձել | | Այո | Ոչ |
| 51. | Նշված երևույթների մասին ի՞նչ աղբյուրներից եք տեղեկանում | հեռուստատեսություն<br>ռադիո<br>ինտերնետը<br>մասնագիտացված հիդրոօդերևութաբանական ծառայություն<br>չենք տեղեկանում | | |

| | | | |
|---|---|---|---|
| 52. | Գործում է արդյո՞ք ձեր համայնքում հիդրոօդերևութաբանական կայան կամ դիտակետ: | Այո | Ոչ |
| 53. | Արդյո՞ք ձեր համայնքը վտանգված է կլիմայի փոփոխության պատճառով: | Այո | Ոչ |
| 54. | Ձեր համայնքում ո՞ր ոլորտն է առավել վտանգված կլիմայի փոփոխության ազդեցությունից: | հողերը/հողագործության/<br>ջրերը /ջրամատակարարման<br>անտառները<br>____________________<br>____________________ | |
| 55. | Կլիմայի փոփոխության հետ կապված ի՞նչ տեղեկատվության կարիք ունեք: | | |
| 56. | Ըստ Ձեզ, կա՞ արդյոք անհրաժեշտություն կլիմայի փոփոխության վերաբերյալ ստանալ լրացուցիչ տեղեկատվություն | Այո | Ոչ |
| 57. | Ձեր | Տարիքը<br>Սեռը<br>Կրթությունը | |
| 58. | Աշխատում եք | Այո | Ոչ |
| | եթե **ԱՅՈ**, ապա նշել | պետական հիմնարկություն<br>սեփական բիզնես<br>արդյունաբերություն<br>հողագործություն | |
| | եթե **ՈՉ**, ապա նշել | անաշխատունակ<br>տնային տնտեսուհի<br>թոշակառու<br>գործազուրկ | |
| 59. | Ձեր դիտողություններն ու առաջարկությունները | | |

***ՀԱՎԵԼՎԱԾ 2***

Նախագիծ

## ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

# Հ Ա Վ Ա Ս Տ Ա Գ Ի Ր

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ/ «ԱՌՆԱՊ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

| ՄԱՐԶ | ՏԱՎՈՒՇ | ՀԱՄԱՅՆՔ | ԱՅԳԵՀՈՎԻՏ |
| --- | --- | --- | --- |

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է՝

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌՆ ԹԻՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

<անուն,ազգանուն>

<<___>> ________________ 201_թ.

<ստորագրություն>

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌՆ ԹԻՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

<անուն,ազգանուն>

<<___>> ________________ 201_թ.

<ստորագրություն>

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՄԱՐԶԱՅԻՆ ՀԳԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

<<___>> ________________ 201_թ.

<ստորագրություն>



ԿՆԻՔ

**ՍՈՒՅՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐԸ ՏՐՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԵՎ ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ**

<<___>> __________________ 201_թ.

ԿՆԻՔ

ՄԱՐԶԱՅԻՆ ՀԳԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

<անուն,ազգանուն> <ստորագրություն>

Empowered lives.
Resilient nations.

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ/ «ԱՌՆԱՊ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԲՈՒՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԸ ՄՇԱԿՎԵԼ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՎԵԼ Է ՄԱԿ-ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԻ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ/«ԱՌՆԱՊ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՋԱՆՔԵՐՈՎ՝ ՄԱԶԾ «ԱՂԵՏՆԵՐԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ։

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏԱԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ ԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

### *3.1 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐ*

| ՎՏԱՆԳԻ ՏԵՍԱԿՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ | ԽՈՑԵԼԻ ՏԱՐՐԵՐ | ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ | ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|
| ԲՆԱԿԱՆ | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| ՏԵԽՆԱԾԻՆ | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| ԿԼԻՄԱՅԻ ԳԼՈԲԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| ՍՈՑԻԱԼԱԾԻՆ | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

## 3.2 ԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

| ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ | ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ | ԱՌՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ | ԱՂԵՏԱԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ |
|---|---|---|---|
| ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | | |
| | | | |
| | | | |
| ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | | | |
| | | | |
| ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ | | | |
| | | | |
| | | | |
| ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ | | | |
| | | | |
| | | | |
| ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊՐԵԼԱՄԻՋՈՑՆԵՐ | | | |
| | | | |
| | | | |
| ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԻԱ | | | |
| | | | |
| | | | |
| ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | | |
| | | | |
| | | | |

## 3.3 ԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԸՍՏ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅԱՆ

| ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ | ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ | | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ |
|---|---|---|---|---|
| | | Գերակայության ցուցանիշ | Իրականացման ժամկետը | |
| ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | | | |
| ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | | | | |
| ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ | | | | |
| ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ | | | | |
| ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ | | | | |
| ՋՐԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊՐԵԼԱՄԻՋՈՑՆԵՐ | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԻԱ | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | | | |
| | | | | |
| | | | | |

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱԻՆ | Արտակարգ իրավիճակների նախարարություն |
| ԱԻՆ ՓԾ | ԱԻՆ փրկարար ծառայություն |
| ԱՀԿ | Առողջապահության համաշխարհային կազմակերպություն |
| ԱԿԹ | Աղետների կառավարման թիմ |
| ԱՌՆ | Աղետների ռիսկի նվազեցում |
| ԱՌԿ | Աղետների ռիսկի կառավարում |
| ԱՌՆԱՊ | Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ |
| ԳԲՀ | Գլոբալ բնապահպանական հաստատություն |
| ԵԱՊՀ ՃԿՎ ԲՏԿ | Եվրոպայի և Անկախ պետությունների համագործակցության ճգնաժամերի կանխարգելման և վերականգնման Բրատիսլավայի տարածաշրջանային կենտրոն |
| ԽԿԳ | Խոցելիության և կարողությունների գնահատում |
| ԿՌԿ | Կլիմայական ռիսկի կառավարում |
| ԿԽ ԿՄՄՖ | Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա |
| ՀԳԾ | Հյոգոյի գործողությունների ծրագիր 2005–2015թթ. |
| ՀԳԾ2 կամ պլյուս | 2015–2025թթ. |
| ՀԶՆ | Հազարամյակի զարգացման նպատակներ |
| ՓԾ | Փրկարար ծառայություն |
| ՃԿՎԲ | Ճգնաժամերի կանխարգելման և վերականգնման բյուրո |
| ՄԱԲՀ | ՄԱԿ–ի բնակչության հիմնադրամ |
| ՄԱԶԾ | ՄԱԿ–ի զարգացման ծրագիր |
| ՄԱԿ ՓԳՀ | ՄԱԿ–ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակին |
| ՄԱԿՄՀ | ՄԱԿ–ի մանկական հիմնադրամ |
| ՏՄԱՌՆ | Տեղական մակարդակում աղետների ռիսկի նվազեցում |
| ՏՄՌԿ | Տեղական մակարդակում ռիսկի կառավարում |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3**

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ ..... 15

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՇԱԿՎԱԾ/ԿԻՐԱՌՎՈՂ ԽԿԳ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 16

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ..... 23

**1. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ..... 25**

1.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 25

1.2 ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐ ..... 27

**2. ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ՁԵՎԱՉԱՓ ..... 30**

2.1 ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ..... 31

2.1.1 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ ..... 32

2.1.2 ԽԿԳ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ..... 34

**Ա.** ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ ..... 34

**Բ.** ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ..... 36

**Գ.**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..... 37

**Դ.** ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ ..... 38

2.2 ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ..... 57

2.2.1 ԱՌՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՒՄ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԵՐ ..... 58

2.3 ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՈՒՄ ..... 67

2.4 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ..... 68

2.5 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 74

**3. ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ..... 76**

3.1 ԿԻՐԱՌՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ..... 76

**4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ..... 85**